ԷՋՄԻԱԾՆ

1979

Բ

ԱՄՀ140



ԼԶ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վիեննա

1979

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՍՈՒՐԲ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԳԱՄԸ

«Մեք պատրաստ եմք ի մեռանել՝ քան անցանել ըստ օրէնս հայրենիս» (Բ Մակ. Է 2)։

451 թվական։ Խաղաղատենչ Հայոց աշխարհում մոլեգնում է արհավիրքը պատերազմի, որ սանձազերծված է կրոնական և քաղաքական մոլեռանդությունից կուրացած Պարսից Հազկերտի ձեռքով։

Հազկերտը իր գահակալության սկզբից ևեթ որդեգրել է իր կայսրության արևմտյան և հյուսիսային սահմաններում ապրող քրիստոնյաներին և մանավանդ հայերին դավանափոխ անելու ծրագիր։ Այն իրագործելու համար նա միջոցների մեջ ոչ մի խտրություն չի դնում, ընդհուպ բազմաբյուր զորքերի ուղարկումը Հայաստան, բռնության ու սարսափի մթնոլորտի ստեղծումը, որոնցով կարծում էր կկարողանա խորտակել հայոց կամքը։

Այդ կամքը, սակայն, թրծված էր արդեն Ավետարանի բոցեղեն հնոցում և կոփված՝ խաչի տեսլականով։

Եկել էր վճռական ժամը, որ հայ ժողովուրդը խոսելու էր իր սեփական ձայնով, ապստամբությամբ և ի պահանջել հարկին նահատակությամբ։

Քրիստոնեական վարդապետությունը Ե դարում այնպիսի խորունկ արմատներ էր նետել հայոց հոգում ու հողում, որ ոչ մեկ արտաքին ուժ պիտի չկարողանար մազաչափ անգամ խախտել հայոց հավատքի սյունը։ Նոր կրոնը իր ազատատենչությամբ դարձել էր ժողովրդին առաջնորդող հիմնական գաղափարախոսությունը, մանավանդ 428 թվականին հայ քաղաքական անկախության կորստից հետո։

Հայ եկեղեցին դարձել էր գրերի գյուտով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ անառիկ բերդ՝ անխոց պահելու համար ժողովրդի մարմինը ու մանավանդ նրա հոգին ամեն տեսակի տարաժամների առջև։ Դրա առաջին ապացույցը տրվում էր այդ թվականին։

Քաղաքականորեն ստրկացնելուց և տնտեսապես քայքայելուց հետո Հայաստանը, պարսկական տիրապետության դեմ մեծագույն խոչընդոտ համարելով եկեղեցին, Հազկերտը հրաման էր ուղարկել հայերին՝ ուրանալ իրենց քրիստոնեական հավատքը և ընդունել մազդեզական կրոնը։ Ընդվզել էր հայերի ազատատենչ ոգին՝ իրենց խղճի ազատության հանդեպ այդ ոտնձգությունից։ Հայերը պատասխանել էին արքայից արքայի դավանափոխության առաջարկին. «Ոչ ոք կարող է յայսմ հաւատոց զմեզ խախտել»։

Եվ մոլեգնել էր արքան։ Նրա մոլեռանդ հոգին չէր կարողացել ըմբռնել, թե «հոգին առաւել է քան զմարմին», ազատությունը՝ քան ստրկամտությունը։ Եվ իր քաղաքական ծրագրի մեջ հաջողելու համար նա որոշում էր քարուքանդ անել հայ եկեղեցիների Սեղանները և նրանց փոխարեն ատրուշաններ կառուցել։

Հազկերտը չուշացավ ձեռնարկելու իր

ծրագրի գործնականացմանը: Սակայն Հայաստանի հողի վրա թարգմանիչների ծավալած եկեղեցական, մշակութային ու հայրենասիրական գործը կատարել էր իր նախախնամական դերը, արմատավորել ազգային գիտակցությունը, ճշմարտության և արդարության լույսը ժողովրդի ամենալայն զանգվածների հոգու մեջ:

Ավարայրի հերոսամարտում հայ ժողովուրդը նվաճեց իր հավերժ գոյության և ապրելու պատմական վկայականը. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» նշանաբանով:

Այդ գիտակցությունն է, որ դարձավ Հազկերտի պարտության և ձախողության պատճառը հայ հողի վրա:

Պատմական այդ քիրտ ուժի և բռնակալության դեմ հավասար վճռականությամբ ծառացան Ղևոնդ երեցն ու սուրբ Ղևոնդյանք, Վարդան Մամիկոնյանը և ուխտապահ հայ նախարարները, ինչպես նաև բովանդակ ժողովուրդը հայոց:

Թշնամու ուժի գերազանցությունը անկարող եղավ ընկճելու հայ հոգին: Պատմության կանխորոշած առաջին փորձությունը միևնույն ժամանակ դարձավ առաջին հաղթանակը հայ հոգու ազատության ընդդեմ բռնակալության:

Վարդանանք խաչով ու սրով դիմագրավեցին անհավոր այդ փորձությունը՝ «վասն հայրենեաց և վասն Յիսուսի» անհավասար հերոսամարտում և ձախողության մատնեցին Հազկերտի հայաջինջ և մահաբույր քաղաքականությունը:

Ժամանակավոր պարտություններն ու ձախողանքները չեն կարող ընկճել իր ազատության համար մարտնչող որևէ ժողովրդի հերոսական ոգին և անկոտրում հավատքը իր ուժի և իր պայծառ ապագայի մասին:

451 թվականին Ավարայրում հայ ժողովուրդը ընդմիշտ գտավ իրեն և դարերի դիմաց վառեց իր հավերժության և ինքնուրույնության խարույկը, գալիք բոլոր ջրհեղեղների և փորձությունների դեմ, ուխտեց՝ միշտ հավատարիմ մնալ իր պատմությանը և իր հոգևոր, ազգային արժեքներին:

Վարդանանց հերոսամարտը մեկընդմիշտ իր կնիքը դրավ հայոց պատմության վրա և մնաց հայրենասիրության և անձնվիրության օրինակ հաջորդ սերունդների համար՝ պայքարելու բոլոր դարերի նոր Հազկերտների հայաջինջ ծրագրերի դեմ:

Վարդանանց պատերազմը Ավարայրի դաշտի վրա հերոսացումն էր հայ եկեղեցու և հավաքական սրբացումը քրիստոնյա Հայաստանի:

Փա՜ռք ս. Ղևոնդյանց քահանաների և հայրենյաց անձնուրաց մարտիկների՝ ս. Վարդանանց հիշատակին:

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայաստանյայց եկեղեցու նվիրական ավանդույթներից մեկն այն է, որ ամեն տարի, գարնանամուտին, մեծ հանդիսավորությամբ ոգեկոչվում է 451 թ. Ավարայրի հերոսամարտում զոհված հայ մարտիկների երբեք չթառամող հիշատակը: Այդ տոնը միաժամանակ համընկնում է Ամենայն Հայոց Հայրապետի անվանակոչության տարեդարձին:

Սույն թվականի փետրվարի 22-ին, հինգշաբթի օրը, Վարդանանց հիշատակի պանծացման առթիվ, Մայր տաճարում կատարվում է առավոտյան ժամերգություն, այնուհետև մատուցվում է սուրբ պատարագ: Օրվա պատարագիչն էր հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը, որը հավարտ սուրբ պատարագի Իջման ս. սեղանից քարոզում է «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է» բնաբանով: Տեր հայրը իր քարոզի մեջ, որպես անհրաժեշտություն, վեր է հանում ազգային ազատագրական պայքարում հավատքի փրկության և ազգային ինքնուրույնության պահպանման համար հայ ժողովրդի մղած ազատատենչ կռիվների նշանակությունը մեր ժողովրդի կյանքում:

Քարոզից անմիջապես հետո, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ, կատարվում է Հայրապետական մաղթանք:

Այնուհետև, ժամը 13-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում Վարդանանց նվիրված հանդիսություն: Հանդիսությանը ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և հավատացյալների հոծ բազմություն:

Հանդիսությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ներկա էր նաև հյուրաբար Մայր Աթոռում գտնվող «Նաիրի» թերթի խմբագիր, գրող Անդրանիկ Ծառուկյանը:

Հանդիսությունը սկսվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով, որից անմիջապես հետո հոգևոր ճեմարանի սաները կատարում են «Ճեմարանի քայլերգ» խմբերգը:

Հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի ավագ վերակացու և դասախոս տ. Արտակ քհն. Սիմոնյանը: Այնուհետև ճեմարանի սաները կատարում են «Նորահրաշ» և «Արիացեալք» խմբերգ-շարականները՝ ղեկավարությամբ ճեմարանի եկեղեցական երաժշտության դասախոս Հայկ Ֆրունջյանի: Որից հետո ճեմարանի Գ լսարանի ուսանող Վաչագան սրկ. Ավետիքյանը մի խումբ համալսարան-

ցիների հետ արտասանում է Սիլվա Կապուտիկյանի «Զրահապատ Վարդան զորավար» բանաստեղծությունը:

Ապա օրվա խորհրդին նվիրված իր բովանդակալից զեկուցմամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի դասախոս և ս. Գեղարդա վանքի վանահայր տ. Եղիշե քհն. Սարգսյանը, որը, մեկ անգամ ևս շեշտելով Վարդանանց հերոսամարտի կարևորությունը, ասում է.

«Ավարայրի հերոսամարտը հայ ազատագրական պայքարի պատմության ամենափայլուն էջերից մեկն է, անհասանելի մի բարձունք, որը 1500 տարի շարունակ լիցքավորել է հայ սերունդներին: Ամեն անգամ, երբ վտանգվել է հայոց հայրենին և եկեղեցին, օրհասական այդ ծանր ժամանակներում ազատասեր մեր ժողովրդի ճամփան լուսավորել է Ավարայրը իր անմահ հերոսների թափած արյամբ: Պատմության քառուղիներում շատ արյուն ու քրտինք թափած հայ ժողովուրդը սերնդից-սերունդ փոխանցել է իր մեծ ու հայրենասեր զավակներից մեկի՝ ոսկեծղիկն Եղիշե վարդապետի «գիտակցված մահը անմահություն է» իմաստուն խոսքը, որը հարատև նշանաբանն է եղել հայ ազատագրական պայքարի:

Ավարայրի հերոսամարտը մեր ժողովրդի ազատագրական պայքարի ամենափառավոր ու անհասանելի այն բարձունքն է, որից սկսվում է ոսկե այն կամուրջը, որը հասավ մինչև Սարդարապատ ու մինչև մեր օրերի Հայրենական մեծ պատերազմը: Պատահական չէր, որ մեկուկես հազար տարի հետո հայ ժողովուրդը Վարդանանց օրերի մտահոգությամբ ու մարտական տրամադրությամբ ճիշտ նույն ամսին ու նույն օրերին «իմացյալ մահով» իջավ Սարդարապատի շիկացած ավազոտ դաշտավայրը՝ պայքարելու ու հաղթելու թուրքական վանդալներին, որոնք, Արևմտյան Հայաստանը համատարած գերեզմանոց դարձնելով, արևմտահայության «հարցը լուծելուց» հետո գայլային ախորժակով գալիս էին իրականություն դարձնելու նաև Արևելյան Հայաստանի բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիկական մահը: Մահասփյուռ այդ ծանր օրերին, երբ թուրքական չաթաղանը դամոկլյան սրի նման կախված էր մեր աշխարհի վրա, հայ հոգևորականությունը, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, Հովսեփ կաթողիկոսի և Ղևոնդ երեցի նման ոտքի ելան, հայրենասիրական խոսքի հզոր ուժով իրենց հետևից մարտի տարան մեր ժողովրդին: Հայոց Հայրապետի հրամանով մեր երկրի տարածքի վրա գտնվող եկեղեցիները այդ օրերին հնչեցնում են իրենց խրոխտ զանգերը, որոնց արձագանքները տարածվում են Արագածի լանջերից մինչև Արաքս և Սարդարապատի շիկացած ավազոտներից մինչև կապուտաչյա Սևան: Հայրենաշունչ ահազանգը արթնացնում է բոլորին, որի վերջնական արդյունքը անկրկնելի այն հաղթանակն էր, որ այնքան դժվարությամբ Սարդարապատի ճակատամարտում տվեց հերոսածին մեր ժողովուրդը:

Ասորեստանցիների, բաբելացիների ու փյունիկեցիների հետ պատմության ասպարեզ իջած, սակայն միայն ինքը փյունիկ մնացած հինավուրց, բայց հավերժ նոր ու երիտասարդ մեր ժողովուրդը, այսօր էլ ապրելով սուրբ Վարդանանց ու Սարդարապատի հերոսամարտի օրերի ոգով, շարունակում է ստեղծագործ, շինարար ու լուսավոր իր ճամփան, որպես ազգ ու ժողովուրդ, խորհրդային ժողովուրդների մեծ ընտանիքում, ասպարեզ հանելով դարավոր հոգևոր իր հարստությունները, ինքնության խոսուն ապացույցները, որոնք առհավետ ապահովում են մեր և գալիք սերունդների հայկականությունը:

Փառք Վարդանանց հերոսներին, որոնք Ավարայրի դաշտում կենդանի պատարագվեցին, որպեսզի հավիտյանս ապրի մեր սրբազան հայրենիքն ու եկեղեցին»:

Արժանապատիվ տեր հայրը իր խոսքը Վարդանանց անմահների մասին ավարտում է հայ ժողովրդի վաղամեռիկ մեծ բանաստեղծ Պարույր Սևակի բնորոշմամբ, որը շատ դիպուկ և խորիմաստ կերպով բնութագրել է մեր ժողովրդի դարավոր պայքարի ու հաղթանակների իմաստը:

«Ազգ
որ ապրելու համար մեռել է հաճախ,
Սակայն մեռնելու մտադրությամբ չի ապրել
երբեք»:

Այնուհետև տեր հայրը հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի, ուսանողության և բոլոր ներկաների անունից ջերմագին շնորհավորում է Վեհափառ Հայրապետին, անվանակոչության տոնի ուրախ առիթով, և ասում.

«Վեհափառ Տեր, մեր բարի, ազնիվ ժողովուրդն ու ս. եկեղեցին միշտ երախտապարտ ու աղոթող պիտի մնան Ձեր քաջառողջության և գործոց հաջողության համար, քանզի Դուք էիք Աստուծո ընտրյալ տեսիլք ունեցող այն մեծ անհատը, որ քսաներեքուկես տարիներ առաջ ականջալուր եղաք հայ ժողովրդի, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և մեր բազմաչարչար եկեղեցու այն ժամանակվա այնքան թույլ և աղաչական ձայնին, եկաք բազմելու Լուսավորչի պատմական ս. Գահին, որպեսզի հետագա Ձեր գործունեությամբ փառք բերեիք նվի

ական այդ Գահին՝ ոսկյա էջեր գրելով մեր եկեղեցու պատմության մեջ:

Փառք ու պատիվ Ձերդ Սրբությանը, Ձեր լուսաբնակ ծնողներին ու այն ժողովրդին, որը արժանվույն է գնահատում իր մեծ զավակին ու քահանայապետին»:

Ապա հոգևոր ճեմարանի ուսանողությունը հանդես է գալիս իր գեղարվեստական ծրագրով: Ա դասարանի ուսանող Վարդան Մկրտչյանը արտասանում է Ռաֆայել Պատկանյանի «Վարդանի երգը» բանաստեղծությունը: Բ լսարանից Հայկ Չիլինգարյանը կարդում է հատված Վարդանի ճառից: Մակար Եկմալյանի «Լռեց, ամպերը եկան...» մեներգը կատարում է Գ լսարանի ուսանող Վահրամ սրկ. Տերտերյանը՝ դաշնամուրի նվագակցությամբ նույն լսարանի ուսանող Խաչիկ սրկ. Մարտիրոսյանի: Եղիվարդի «Կարմիր զորավար» պոեմից մի հատված է արտասանում Գ լսարանի ուսանող Հովսեփ սրկ. Պալըգյանը, իսկ նույն լսարանից Արա սրկ. Ծլուկյանը՝ «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի» հատվածը՝ Եղիշեից:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ հանրապետության վաստակավոր արտիստ, ճեմարանի եվրոպական երաժշտության դասախոս Խորեն Մեյխանեջյանի, կատարում է «Իմ հայրենյաց հոգի Վարդան», «Ազնիվ ընկեր», «Ով հայկազունք» և «Բամ փորոտան» երգերը:

Հանդիսության վերջում իր օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը:

Հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Նույն օրը, ժամը 15.30-ին, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, գլխավորությամբ տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանի, մեկնում է Երևան ու թարմ ծաղիկներ դնում Վարդան Մամիկոնյանի հուշարձանին, մեկ անգամ ևս մտովի տեղափոխվում դեպի հինգերորդ դար, դեպի Վարդանանք և փառք տալիս նրանց անմար հիշատակին:

ՎԱՉԱԳԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՎԵՏԻՔՅԱՆ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Տէր լոյս իմ և կեանք իմ ես յումմէ երկեսցի, Տէր ապաւէն կենաց իմոց ես յումմէ թողացայց» (սաղմոս) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 31-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում զեկուցեց Ստեփանոս սրկ. Զաքալյանը՝ մահվան և անմահության գաղափարը Նոր Կտակարանում ու Պլատոնի երկերում թեմայի շուրջ:

*
* *

Փետրվարի 1-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 17-ին, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, շուրջ տասը օր ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվելուց հետո, Փարիզ՝ իր պաշտոնատեղին մեկնեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Գյուտ եպս. Նագգաշյանը:

Սրբազան հորը Երևանի օդանավակայանում ճանապարհեցին տ. Մյուռոն և տ. Առաքել աբեղաները:

*
* *

Փետրվարի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Մյուռոն աբղ. Գրվրգյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ի քեզ Տէր յուսացայ, զի մի ամաչեցից յաւիտեան» (սաղմոս) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն նորոգ հանգուցյալ տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանի և հայտնի քանդակագործ ու նկարիչ Երվանդ Քոչարի հոգիների համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց երկու հանգուցյալների հարազատներին և սուրբ Հոգով մխիթարեց նրանց:

*
* *

Փետրվարի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում նախ քննարկվեց տ. Մյուռոն աբեղայի մատուցած անդրանիկ պատարագի և ուխտի քարոզը: Այդ մասին Վեհափառ Հայրապետը և ներկաները իրենց կարծիքներն ու տպավորությունները հայտնեցին:

Այնուհետև զեկուցումով հանդես եկավ վերջերս Քինգսթոնից (Յամայկա) վերադարձած տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը հանգամանորեն խոսեց ԵՀԽ-ի այս տարվա գործունեության և հետագա ծրագրերի մասին:

*
* *

Փետրվարի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Առաքել աբդ. Գալայջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ամենաստուրբ Երրորդութիւն, հաս օգնութիւն ծառայից քոց, լեր օգնական ազգիս հայոց» (մաղթանք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռ ժամանեց Փարիզի ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ծառայող, Մայր Աթոռի միաբան տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը:

* *
*

Փետրվարի 13-ին, երեքշաբթի.—Նախատոնակ:

Այսօր, երեկոյան ժամը 17-ին, հավարտ ժամերգության, կատարվում է նախատոնակը Տեառնընդառաջի, Քրիստոսի քառասնօրյա տաճար գալստյան տոնի, և ապա տեղի է ունենում անդաստանի արարողություն՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ:

Ժամը 19.30-ին հոգևոր ճեմարանի հանդիսասրահում բացավառվում է ավանդական խարույկը, որի շուրջ տեղի են ունենում ուսանողության երգ ու պար:

Ժամը 20-ին միաբանական սեղանատանը տրվում է ավանդական ճաշ, որին ներկա էին ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

*
* *

Փետրվարի 14-ին, չորեքշաբթի.—Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում նախ քննության է առնվում տ. Առաքել աբդ. Գալայջյանի ուխտի անդրանիկ պատարագն ու քարոզը, ապա զեկուցումով հանդես է գալիս՝ վերջերս Փարիզից ժամանած Մայր Աթոռի միաբան տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և ամփոփ ներկայացնում ֆրանսահայ գաղութի եկեղեցական-ազգային, կրթական կյանքը:

*
* *

Փետրվարի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսցէ առ իս և արբցէ» (Հովհ. Է 37) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 21-ին չորեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Փարիզ մեկնեց տ. Առաքել աբդ. Գալայջյանը՝ շարունակելու իր ուսումը տեղի աստվածաբանական համալսարանում ու միաժամանակ ծառայելու նույն քաղաքի հայոց եկեղեցիներից մեկում՝ գերաշն. տ. Սերովբե արքեպիսկոպոսի կարգադրությամբ:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում քննարկվում է Գրիգորիս վարդապետի՝ կիրակի օրվա քարոզը:

*
* *

Փետրվարի 22-ին, հինգշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է այցելում «Նաիրի» թերթի խմբա-

գիր, գրող Անդրանիկ Ծառուկյանը, որը Բեյրութից Երևան էր ժամանել փետրվարի 21-ի երեկոյան:

Երևանի օդանավակայանում հարգելի հյուրին դիմավորում է Գերեցիկ սրկ. Սայանը:

*
* *

Փետրվարի 23-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Փետրվարի 25-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակված խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմլեա, սիրտ իմ քարեղէն» (Ն. Շնորհալի) բնաբանով:

*
* *

Նույն օրը, ս. պատարագից հետո, հոգևոր ճեմարանի ուսանողները եռօրյա պրոտոյտի մեկնեցին դեպի Ծաղկաձոր:

*
* *

Փետրվարի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաք, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսում է Վերածնության դերի մասին քաղաքակրթության զարգացման գործում:

Վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է պատասխանել միաբաններին հետաքրքրող հարցերին:



ՈՐՔ ՋԱՐԴԱՐԵՑԻՆ

. Դաշնաւորուած Ա. Մեսրոպի Ծնունդեան 1600 ամեակի առթիւ Դաշն. պսակ. Վերջ.

Moderato

S. Որք ջար-դա-ր-ե-ցին որ-հոյ-ր-հա-դարդ ի մայրն ու հի ցին

A. Որք ջար-դա-ր-ե-ցին որ-հոյ-ր-հա-դարդ ի մայրն ու հի ցին

T. Որք ջար-դա-ր-ե-ցին որ-հոյ-ր-հա-դարդ ի մայրն ու հի ցին

B.

Հաս-կա-ր-ան-ան յիր-կին ա զեր կեր - դա - հի հոգ-ան-ան հայ

Հաս-կա-ր-ան-ան յիր-կին ա զեր կեր - դա - հի հոգ-ան-ան հայ

rall

Հոր խ-ա-յ-ի-ի ե-զ-ի հայ-ոյ-ոյ Հեռ-ի-ն-ի-ն մարդ ի կիսա-ա-ծ-ի - հա - ս-ա-ս f

rall

Հոր խ-ա-յ-ի-ի ե-զ-ի հայ-ոյ-ոյ Հեռ-ի-ն-ի-ն մարդ ի կիսա-ա-ծ-ի - հա - ս-ա-ս f

rall

S.

Որքա՜ն լաւ լինէր, եթէ մեր հոգիներն միանային

A.

Որքա՜ն լաւ լինէր, եթէ մեր հոգիներն միանային

T.

Որքա՜ն գեղեցիկ լինէր, եթէ մեր հոգիներն միանային

B.

Որքա՜ն գեղեցիկ լինէր, եթէ մեր հոգիներն միանային

Հաւատում էին մեզ Աստուծոյ

Հաւատում էին մեզ Աստուծոյ

Հաւատում էին մեզ Աստուծոյ

Հաւատում էին մեզ Աստուծոյ

call

Երբ մեր հոգիներն միանային, մենք կնայուածք կունենանք

Երբ մեր հոգիներն միանային, մենք կնայուածք կունենանք

Երբ մեր հոգիներն միանային, մենք կնայուածք կունենանք

Երբ մեր հոգիներն միանային, մենք կնայուածք կունենանք



ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԼՈՎԴԻՎ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

1978 թվականի դեկտեմբերի 24-ին, կիրակի օրը, հանդիսավորությամբ նշվել է Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության 150-ամյակը:

Հայ և բուլղար ժողովուրդների բարեկամությունն ու եղբայրական կապերը խոր հնություն ունեն:

Հայերի՝ դեպի Բուլղարիա գաղթը «շատ կանուխեն սկսած է», գրում է Պլովդիվից ուղարկած իր թղթակցության մեջ Վահե Չերչիլանը: Հայերի գաղթը դեպի Բուլղարիա շարունակվել է «Բյուզանդական Կայսրության օրերեն սկսյալ մինչև 1922 թվականը, մինչև վերջին գաղթը»:

Պլովդիվը՝ պատմական Ֆիլիպոպոլիս կամ Ֆիլիպե քաղաքը, կառուցել է Մեծն Ալեքսանդրի հայրը՝ Փիլիպոս թագավորը: Շատ վաղուց, ավելի ուշ ժամանակաշրջանում, այստեղ կազմակերպվել է նաև հայ համայնք:

«Բելկրատցի Աբրահամ կամ Աբրո Չելեպին սուլթանական հրամանով 1675 թվականին» ձեռք է բերում «խարխուլ հունական փոքրիկ սուրբ Յորկիոս (ս. Գևորգ) եկեղեցին», որի շուրջ էլ կազմակերպվում է տեղի հայ համայնքի եկեղեցական կյանքը:

«Ժամանակի ընթացքին կարիքը կըզգացվի հիշյալ փոքր եկեղեցին վերանորոգել և ընդարձակել: 1828 թվականին, ասկե 150 տարիներ առաջ, տեղվույն հայ ազգաբնակչությունը կվերանորոգե եկեղեցին; շինելով այժմյան եկեղեցիի կեդրոնական քարակիր մասը:

Ս. Գևորգ եկեղեցին մեծագույնն է բուլղարահայ եկեղեցիներու մեջ: Եկեղեցվո շրջափակին մեջ կգտնվի ս. Խաչ մատուռը, որ կառուցված է 1896 թվականին: 1896 թվականին այստեղ այցելած է անմահն Կոմիտաս վարդապետը: Այս մասին եկեղեցվո գլխավոր մուտքի առընթեր հուշատախտակ մը կա: Եկեղեցվո շրջափակին մեջ կգտնվին նաև զանգակատունը որ կառուցված է 1850 թվականին, հայ մշակույթի տունը և նախկին հայկական ազգային վարժարանի շենքերը: Անցյալի մեջ եկեղեցվո սույն շրջափակը ծառայած է որպես գերեզմանատուն տեղի հայ համայնքի»:

Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության 150-ամյակի հանդիսությանը ներկա են եղել հայ և բուլղար հավատացյալների հոծ բազմությունը, Պլովդիվի բուլղար եկեղեցու վիճակավոր տ. Վառլաամ սրբազանը, տեղի կաթոլիկ արքեպիսկոպոսը, քույր եկեղեցիների այլ ներկայացուցիչներ, քաղաքի հայ քաղաքագլուխ և «Երևան» կազմակերպության Կեդրոնական վարչության նախագահ տիար Տիրան Բարիքյանը, բուլղարահայ թեմական խորհրդի նախագահ տիար Օննիկ Ալանյանը, հայ մշակութային, մարզական կազմակերպությունների պատասխանատու անդամներ, մտավորականներ և պաշտոնական այլ հրավիրյալներ:

Հոբելյանական հանդիսությանը նախագահել է Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, որը պատարագել և քարոզել է կիրակի օրը:

Եկեղեցական արարողություններին իր մասնակցությունն է բերել «Ս. Ներսես Շնորհալի» երգչախումբը՝ գեղարվեստական ղեկավարությամբ երաժիշտ Սարգիս Բալթայանի:

Հավարտ ս. պատարագի կատարվել է հոգեհանգիստ՝ «եկեղեցվո կառուցման և սպասարկման իրենց ծառայությունը բերած հին և նոր անջեցյալներու հոգիներուն խաղաղության համար»:

Եկեղեցական արարողության ավարտին

բոլոր ներկաները առաջնորդվում են դիվանատուն, ուր տ. Տիրայր սրբազանը շնորհակալություն է հայտնել հոբելյանը կազմակերպող ազգային մարմիններին:

Հանդիսության ընթացքում տիար Վահե Զերչիյանը ընթերցում է բուլղար բանաստեղծ Նեստոր վարդապետի «Էջմիածին» ձոնը՝ նվիրված Ամենայն Հայոց Հայրապետին, գրված Մայր Աթոռում, երբ հեղինակը ուխտավորաբար գտնվում էր ս. Էջմիածնում:

Ժամը 13-ին Պլովդիվի «Թրիմոնդիում» հյուրանոցի ճաշասրահում տրվում է ճաշկերույթ՝ օրվա հանդիսության առիթով:

Ճաշկերույթը վերածվում է հայ և բուլղար ժողովուրդների բարեկամության արտառուչ տոնի:

Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության 150-ամյա հոբելյանի հանդիսությունն ավարտվում է առաջնորդ սրբազանի «Պահպանիչ»-ով:



Պլովդիվի հայոց ս. Գևորգ եկեղեցու ընդհանուր տեսքը

Այս առթիվ դեկտեմբերի 25-ին, ս. Ստեփանոսի տոնի օրը, տ. Տիրայր սրբազանը սարկավագական աստիճան է շնորհում ս. Գևորգ եկեղեցու երկարամյա դպիրներ Եսայի Մանուկյանին, Վարդգես Զենկելյանին, Ղազարոս Զաքրյանին, Նուբար Գալըստյանին և Լևոն Պապիկյանին:





ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

6. Նոյ

Նոյ տասներորդ սերունդն է Ադամին և սկիզբը՝ նոր մարդկության։ Իրմով վերջ կգտնե նախահայրերու դարաշրջանը և կսկսի նահապետներու շարքը։ Նոյ Աստվածաշունչի այն մեծ դեմքերեն է, որոնց կտրվի Աստուծո կողմե մեծ առաքելություն մը, զոր անոնք ի գլուխ կհանեն, հակառակ բոլոր արգելքներուն, համբուրելի հավատքով և համբերությամբ։

Աստվածաշունչի առաջին գիրքեն հինգ գլուխները հատկացված են ներկայացնելու համար Նոյի և ջրհեղեղի պատմությունը (Ծննդ. Զ—Ժ)։ Իր ժամանակի մարդկությունը բարոյապես կներկայացներ գրեթե այն վիճակը, որուն մեջ կգտնվի մեր ժամանակներու մարդկությունը։ Չարիքը հորդած էր իր սովորական հունեն և ողողած՝ ամբողջ մարդկությունը։

«Երբ տեսավ Աստված, թե բազմացած է մարդոց չարիքը երկրի վրա, երբ ամեն մարդ չարիք միայն կմտածեր իր սրտին մեջ ամեն օր, զղջաց Աստված մարդը ստեղծած ըլլալուն համար երկրի վրա, և տրտմեցավ իր սրտին մեջ և ըսավ Աստված. պիտի ջնջեմ երկրի երեսեն ամբողջ կենդանական աշխարհը մարդեն մինչև անասուն, և սողուններեն մինչև երկինքի թռչունները. որովհետև զղջացի զանոնք ստեղծած ըլլալուս համար։ **Բայց Նոյ շնորհք գտավ Աստուծո առջև»** (Ծննդ. Զ 5—8)։

Երևակայել պահ մը, որ Նոյ ալ «շնորհք գտած» չըլլար Աստուծո առջև... ինչ պիտի ըլլար արդյոք վիճակը մեր այս աշխարհին...։ Այս հարցումին մեր միտքերուն մեջ գտած պատասխանեն կարելի է հետևցնել Նոյի մեծությունը և կարևորությունը տիեզերքի պատմության մեջ։

Չարիքը, որով ողողված էր աշխարհ, երկու բառերով կպարզաբանվի ս. Գրքին մեջ. ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԱՆԻՐԱՎՈՒԹՅՈՒՆ։

«ԱՊԱԿԱՆՎԵՑԱՎ երկիր Աստուծո առջև և լեցվեցավ ԱՆԻՐԱՎՈՒԹՅԱՄԲ» (Ծննդ. Զ 11)։

Այս մեղքերեն առաջինը իր մեջ կխտացնե մարդուն անձնական մեղքերը, այսինքն շնություն, պոռնկություն, միասեռականություն, ագահություն, գինեմոլություն, խաղամոլություն, ամբարտավանություն, նախանձ, ատելություն, և բոլոր այն մոլությունները, որոնք մարդկային անձը **կապականեն**, կայլասերեն և կնվաստացնեն։ Իսկ երկրորդը կներկայացնե ընկերային մեղքերը, այսինքն բռնակալություն, գողություն, կռիվ, պատերազմ, հալածանք, շահագործում և բոլոր այն չարիքները որոնք կվնասեն մեր նմանին։ Թեև Աստված խոստացավ որ ուրիշ անգամ նման աշխարհակործան ջրհեղեղով մը պիտի չպատժե մարդկությունը հավաքաբար, բայց յուրաքանչյուր անհատ պատասխանատու պիտի ըլլա իր իսկ գործած մեղքին համար։

«Ով որ արյուն թափե, փոխարեն իր արյունը պիտի թափվի». ըսավ Աստված Նոյի (Ծննդ. Թ 6)։

Իսկ այլուր ըսված է.

«Ով որ Աստուծո տաճարը—այսինքն

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից և 1978 թվականի № № Ս—Գ-ից։

մարդկային մարմինը—ապականեմ, Աստված ալ զայն պիտի ապականե» (Ա Կորնթ. Գ 17):

Իսկ Նոյին համար ըսված է.

«Նոյ արդար և կատարյալ մարդ մըն էր իր ժամանակի մարդոց մեջ, և հաճո եղավ Աստուծո» (Ծննդ. Զ 9):

Այստեղ ալ «Հաճո եղավ Աստուծո» բացատրության տեղ եբրայական բնագիրը ունի «Աստուծո հետ քալեց». նույն գնահատանքը, որ գործածված էր Ենովքի համար, և պիտի գործածվի Աստվածաշունչի բոլոր այն դեմքերուն համար, որոնք արդարև աստվածահաճո կյանք մը պիտի ապրեին: Նոյի համար գործածված «ԱՐԴԱՐ ԵՎ ԿԱՏԱՐՅԱԼ» ստորոգելիները թեթև մակդիրներ չեն, այլ ամբողջ Աստվածաշունչին փնտռած ու պահանջած գերագույն մարդկային առաքինություններն են: Ավետարանի լերան քարոզի բարոյական և ընկերային պատվերները իրենց լրումին կբերվին սա պատգամով.

«Ու դուք եղեք կատարյալ, ինչպես ձեր երկնավոր Հայրը կատարյալ է» (Մատթ. Ե 48):

ԱՐԴԱՐ-ը ուղիղ մարդն է, իր մտածումներուն մեջ, իր խոսքերուն և գործերուն մեջ: Սուտը, կեղծիքը, նենգությունը և նախանձը տեղ չունին իր կյանքին մեջ: Կատարելությունը այս իսկ է—ըլլալ այն՝ ինչ որ պարտինք ըլլալ աստվածային չափանիշներով:

Նոյ ալ բազմիցս հիշված է Աստվածաշունչի զանազան գիրքերուն մեջ: Օրինակ Եզեկիել մարգարեն կըսե, Աստուծո անունով.

«Երկիր մը եթե հանցանք մը գործե, ու ես եթե երկնցնեմ ձեռքս զայն պատժելու համար... ՆՈՅ, Դանիել և Հոբ ալ եթե անոնց մեջ ըլլան, պիտի չկրնան փրկել զանոնք. այլ՝ անոնք իրենց արդարությամբը լոկ իրենց անձերը պիտի կրնան փրկել» (Եզեկ. ԺԴ 12—20):

Եբրայեցվոց թուղթի հեղինակին հիշած հավատքի հերոսներուն մեջ կարևոր տեղ ունի Նոյ:

«Հավատքով Նոյ հրաման ստացավ անտեսանելի ապագայի մը մասին. և զարհուրած՝ սկսավ շինել տապանը իր ընտանիքի փրկության համար, որով սուտ հանեց ամբողջ աշխարհը (որ չէր հավատացած իր խոսքին և կծաղրեր տապանաշինության իր գործը) ու ժառանգեց այն արդարությունը, որ հավատքով ձեռք կձգվի» (Եբր. ԺԱ 7):

Պետրոս առաքյալ զայն կկոչե «Արդարության քարոզիչ» (Բ Պետր. Բ 5): Արդարության այդ քարոզությունը կրնար ըլլալ խոսքով, կրնար ըլլալ նաև ապրված արդար կյանքով:

Նոյի անունը անքակտելիորեն կապվեցավ Արարատ լերան հետ, քանի որ անոր վրա հանգչեցավ իր տապանը ջրհեղեղեն հետո: Ու Արարատը ժառանգեց անկապտելի փառքը իր լանջքին կամ ստորոտը ունենալու Աստվածաշունչին մեջ հիշված առաջին զոհարանը կամ սեղանը ի պատիվ ճշմարիտ Աստուծո:

«Նոյն սեղան շինեց Աստուծո և ողջակեզ ըրավ...: Եվ հոտոտեցավ Աստված ողջակեզի անույշ հոտը և ըսավ իր սրտին մեջ. Այլևս պիտի չանիծեմ երկիրը մարդոց մեղքերուն համար. որովհետև մարդ դեպի չարը հակած է իր մանկութենեն. ուստի այլևս պիտի չփճացնեմ կենդանական աշխարհը, ինչպես ըրի: Որքան ատեն որ երկիրը կմնա՝ սերմը և հունձքը, ցուրտը և տաքը, ամառը և ձմեռը, գիշերը և ցերեկը պիտի չդադրին իրարու հաջորդելե» (Ծննդ. Ը 20—22):

Նոյ նկատված է նախատիպարը մեր Փրկչին, որովհետև իրմով փրկվեցավ մարդկային ցեղը անավոր բնաջնջումե մը, և Աստված իրմով վերստին հաշտվեցավ մարդկության հետ և Ուխտ մը կնքեց Նոյի հետ.

«Եվ խոսեցավ Տեր Նոյի և անոր որդիներուն հետ և ըսավ. Ահավասիկ ես կհաստատեմ իմ ՈՒԽՏՍ ձեզի հետ և ձեզմե հետո գալիք սերունդին հետ և ձեզի հետ եղած բոլոր կենդանիներուն հետ, թռչուններուն, անասուններուն և ձեզի հետ եղած գազաններուն հետ... որ այլևս կենդանական աշխարհը պիտի չմեռնի ջրհեղեղեն» (Ծննդ. Թ 8—17): Ու իր ուխտին ի հաստատություն Աստված իբրև նշան դրավ ծիածանի կամարը:

Նոյի տապանը խորհրդանշանն է քրիստոնեական եկեղեցիին: Ինչպես որ տապանը եղավ փրկության միջոցը մարդկության, և մահացու ջրհեղեղեն ազատվեցան միայն անոնք, որ տապանին մեջ մտած էին, այնպես ալ ով որ կապաստանի եկեղեցիի մեջ և կապրի ըստ անոր օրենքներուն և անոր մեջ տիրող ոգիին, կփրկվի բարոյական բնաջնջումե:

Ջրհեղեղը խորհրդանշանն է մարդկային չարության, հալածանքի և մեղքի, որոնք որչափ ալ կոծեն եկեղեցիի նավին կողերը, չեն կրնար զայն ընկղմել, որքան ատեն անոնք նավին մեջ չեն թափանցած. ընդհակառակը ինչպես որ որքան ջուրերը բարձրացան, անոնց հետ միասին բարձրացավ նաև տապանը, ըստ այս օրինակին, որչափ չարության և հալածանքի ջրհեղեղը

սաստկանա, այնքան ավելի կմաքրագործվի և դեպի երկինք կբարձրանա եկեղեցին:

Աստված Նոյով վերահաստատեց և փրկեց կենդանական աշխարհը, զոր փչացուցած էր ջրհեղեղով: Այնպես ալ Հիսուս Քրիստոսով վերահաստատեց Աստված մարդկային ցեղը երկնային ժառանգության մեջ, զոր կորսնցուցած էին մարդիկ ջրհեղեղով:

Նոյ ապրեցավ 950 տարի: Մենք և հույնք կհիշատակենք Նոյը նախահարց հետ. լատինք կտոնեն զայն նոյեմբեր 10-ին:

7. Մելքիսեդեկ

Մելքիսեդեկ նախահայրերու և նահապետներու միջև ուրույն օղակ մըն է, որ իրարու կկապե այս երկու խումբերը: Ունի նախահարց բնական հավատքը իբրև քահանա Բարձրյալ Աստուծո: Իսկ նահապետներեն առաջինը օրհնություն կստանա իրմե: Հոգևոր գիսավոր մըն է Մելքիսեդեկ, որ երեք անգամ կերևի Աստվածաշունչի երկնակամարին վրա. սկիզբը, մեջտեղը և վերջավորության:

Անոր կհանդիպինք նախ Ծննդոց Գրքի մեջ (ԺԴ. 18—21), իբրև «Արքա Սաղիմա». այսինքն նախահրեական Երուսաղեմի թագավորը, որ ընդ առաջ կելնե Աբրահամին, երբ սա կվերադառնար ազատագրական արշավանքե մը (Ծնն. ԺԴ 1—17) և անոր կընծայի «Հաց և գինի». ու կավելցնե ս. Գիրքը. «Քանզի քահանա էր Աստուծո Բարձրելոյ». այսինքն պաշտոնյա էր այն Աստուծո, զոր Աբրահամ ևս կպաշտեր: Խորհրդավոր զուգադիպություն մը արդարև: Ասկե պետք է հետևցնենք, թե Մելքիսեդեկ այն հազվագյուտ մարդերեն էր Աբրահամին պես, որոնք կշարունակեին մեր վերև հիշած արդարներու կրոնական ավանդությունը, պաշտելով «Բարձրյալ Աստված»-ը: Իբրև դավանակից՝ Մելքիսեդեկ «Օրհնեց Աբրահամը». իսկ վերջինս անոր տվավ «Տասանորդս յամենայնէ»: Այնչափ է մեր գիտցածը «պատմական» Մելքիսեդեկի մասին: Ինչպես հանկարծ մեջտեղ եկած էր, այնպես ալ հանկարծ կաներևութանա:

Մելքիսեդեկ պատմական անձ մը ըլլալով հանդերձ խորհրդանշան մըն է հավիտենական քահանայության: Իր այս հանգամանքով ան կվերերևի Սաղմոսաց Գրքին՝ և Նոր Կտակարանի Եբրայեցվոց թուղթին մեջ:

Սաղմոսաց Գրքի 109-րդ (*) գլուխը անոնցմե է, որոնք կկոչվին «Մեսիական Սաղմոսներ»: Արդարև բացահայտ ակնարկություն մը կա այս փոքր Սաղմոսին մեջ Մեսիայի երկու կարևորագույն հանգամանքներուն. այսինքն Անոր հավիտենական թագավորության և քահանայապետության:

Ներշնչյալ հոգևոր բանաստեղծը այդ Սաղմոսին մեջ խոսքը ուղղելով իր «Տիրոջ»ը, այսինքն՝ Մեսիային, կըսե. «Երդում ըրավ Տեր (Աստված) և պիտի չի զղջա. թե դուն հավիտենական քահանա մըն ես ԸՍՏ ԿԱՐԳԻՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ»: Եբրայեցվոց Թուղթի հեղինակը հիմնվելով այս և նախորդ մեջբերումներուն վրա, հոյակապ և երկայն խորհրդածություն մը կընե Քրիստոսի հավիտենական քահանայապետության մասին (Եբր. Ե 6, Զ 20, և Է, Ը, Թ գլուխները). եզրակացնելու համար որ արդարև Քրիստոս ալ «հավիտենական քահանա մըն է ըստ կարգին Մելքիսեդեկի» և թե այս քահանայությունը շատ ավելի գերազանց է քան Ղևտական քահանայությունը:

Եբրայեցվոց Թուղթի հեղինակը կհաստատե նաև, որ Մելքիսեդեկ անունը կնշանակե «Թագավոր Արդարության»: Իսկ իբրև «Թագավոր Սաղիմա» նա «Թագավոր Խաղաղության» է, քանի որ այդպես կըթարգմանվի «Սաղեմ»ը—արաբերեն «Սելամ», եբրայեցերեն «Շալոմ»: Ու կշարունակե վերոհիշյալ թուղթի հեղինակը Մելքիսեդեկի մասին. «Անհայր, անմայր, առանց ծննդաբանական ծանոթության. որուն ոչ ծագումը և ծնունդը հայտնի է, ոչ ալ՝ մահը կամ վախճանը. նմանյալ Աստուծո Որդիին, կա ու կմնա մշտնջենավոր քահանա» (Եբր. Է 1—3):

Որով Մելքիսեդեկն ալ նախատիպարն է Քրիստոսի հավիտենական քահանայության:

Նշանակալից է անոր «հաց և գինի» մատուցանելը Աբրահամին: Ըստ երևույթին իրարու անծանոթներ, իրարու կնճանոթանան և կմտերմանան, այսինքն իրարու կհաղորդվին «հաց ու գինիով», սրբազան տարրերը մեր ս. Հաղորդության, որ Քրիստոս Քահանայապետի խոսքով և օրհնությամբ կվերածվին իր «Մարմինին և Արյունին», որոնցմով հաղորդվողը կարժանանա հավիտենական կյանքի:

Նշանակալից է մանավանդ իմաստները Մելքիսեդեկի անունին ու հանգամանքին. «Թագավոր Արդարության և Թագավոր Խաղաղության», որոնք երկուքն ալ միաժամանակ տիտղոսներն են Քրիստոսի, որ կոչված է «Իշխան Խաղաղության» և մեկը՝ որ պիտի զորանար «իրավամբ և արդարու-

(*) Ըստ աշխարհաբար թարգմանության 110րդ գլուխ:

ԼՄԵԼԱՍԻՆ ԳԻՏՈՒԹԵՐԻՆՆԵՐԻ ՏՈՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

թյամբ» (Ես. Թ 6—7)։ Այս երկուքը—արդարություն և խաղաղություն—միասին կընթանան։ Երբ չկա արդարությունը չի կրնար տիրել խաղաղությունը։ Երբ վերջինս բացակա է, սա ինքնին փաստ է առաջինին չգոյության։ «Արդարություն և խաղաղություն պիտի համբուրվին». կամ «Պիտի ծագի Անոր օրով արդարությունը և պիտի առատանա խաղաղությունը» կըսե Սաղմոսերգուն։

Մենք և հույնք կհիշատակենք զայն նախահայրց հետ. իսկ լատինք չունին։

Գլուխ երկրորդ

ՆԱՀԱՊԵՏՔ

Այս գլուխին տակ մեզի պիտի ներկայանան Աստվածաշունչի ամենեն ծանոթ և համակրելի դեմքերը, որոնց անունները ամենեն շատ կրկնվածները և հիշատակվածներն են ս. Գրքին մեջ։ Ասոնք Աստուծո ընտրյալ ժողովուրդին անմիջական նախահայրերն են, զորս Աստված կընտրե, կնախախնամե և կառաջնորդե. և որոնց կհայտնե ինքզինքը, ասոնց սերունդեն կերտելու համար ընտրյալ ժողովուրդ մը, որուն մեջ գոնե իր անունը և իր ճշմարիտ պաշտամունքը վառ մնար մինչև Մեսիայի գալուստը։

Աստվածաշունչը լայն լուսարձակով մը սկսված էր, այսինքն տիեզերքի, կենդանական աշխարհի և մարդու ստեղծումով։ Այս լուսարձակը հետզհետե կնեղնա զանազան ազգերու ստեղծումով, ի վերջո կեդրոնանալու համար նահապետներու և իրենց սերունդին՝ այսինքն մեկ ժողովուրդի կրոնաբարոյական պատմության վրա։

8. Աբրահամ

Աբրահամ նահապետով կսկսի իրագործվիլ Աստուծո ծրագիրը հատուկ ժողովուրդ մը կերտելու, որուն մեջ գեթ վառ մնար ճշմարիտ Աստուծո գաղափարը, և կիրարկվեր, Անոր կամքը և պաշտամունքը։ Ինք և իր երեք հաջորդները կհանդիսանան այս ժողովուրդին նահապետները։ Ծննդոց Գրքի մնացյալ 38 գլուխները (ԺԲ—Ծ) կներկայացնեն այս չորս արդարներու կյանքը և գործունեությունը, որոնք կկարդացվին մեծագույն հետաքրքրությամբ, որովհետև լեցուն են զուտ մարդկային տարրերով և պարզ աստվածային հայտնություններով, որոնք կխոսին ամեն մարդու սրտին, եթե մարդ չէ կորսնցուցած բնական ու պարզ գեղեցկություններով տպավորվելու կարողությունը և կրոնազգաց համամարդկային ոգին։

Աբրահամ մեկն է Աստվածաշունչի մեծագույն դեմքերեն, որով արդարև օրհնված են «երկրի բոլոր ազգերը» (Ծն. ԺԸ 18)։

Ազգով Քաղդեացի է. ծնած Քրիստոսե շուրջ 2000 տարիներ առաջ Քաղդեաստանի ՈՒՐ քաղաքը, Եփրատի գետաբերանին մոտ, որուն ավերակները մեջտեղ հանված են այսօր։ Աբրահամ և իր եղբայրը Նաքորվը դեռ նոր ամուսնացած էին երբ ընտանյոք կգաղթեն հյուսիսարևմտյան Միջագետքի ԽԱՌԱՆ քաղաքը, որ կպահե նույն անունը մինչև այսօր, ոչ շատ հեռի Ուրֆայեն։

Այստեղ կմեռնի իր հայրը՝ Թարա, և հոն կհաստատվի իր եղբայրը. իսկ ինք Աստուծո հրամանով կգաղթե Քանան. այսօրվան Պաղեստինը կամ Իսրայելը։ Կշրջագայի Աբրահամ Քանանու երկրի ամբողջ երկայնքին և ի վերջո կհաստատվի երկրի հարավային մասին մեջ, իբրև վրանաբնակ ցեղապետ։ Աստուծո կոչմե կանչված ատեն 75 տարեկան էր, և հարյուր տարի ալ կապրի այս երկրին մեջ, ատեն մը իջնելով նաև Եգիպտոս, սովի մը պատճառով։ Կթաղվի Քեբրոն քաղաքը, ուր արդարև մինչև օրս ցույց կտրվի իր գերեզմանը, իր գերդաստանի մյուս անդամներուն հետ, Իսլամական սրբավայրի մը մեջ, որ շինված էր Աբրահամի գերեզմանին վրա իբրև եկեղեցի խաչակիրներու շրջանին։ Քեբրոն այսօր արաբներու կողմե կկոչվի ԷԼ-ԽԱԼԻԼ, այսինքն «ԲԱՐԵԿԱՄ» Աստուծո, որ Աբրահամին տրված տիտղոսներեն մեկն է։ Հայերս այդ քաղաքը կկոչենք նաև «Հայր Աբրահամ»։

Միաստվածության երեք մեծ կրոնքներն ալ—մովսիսականություն, քրիստոնեություն և մահմետականություն—իրենց հոգևոր Հայրը կճանչնան Աբրահամը, որովհետև կպաշտեն նույն Աստվածը, որ հայտնված էր Աբրահամին։ Պատկառելի և ազնվական դեմք մըն է Աբրահամ, օժտված մարդկային լավագույն շնորհներով, զերծ չմնալով հանդերձ մարդկային մանր տկարություններե։ Ծննդոց գիրքի 12—25-րդ գլուխներուն մեջ կներկայացվի իր արկածալից կյանքը, իր թափառումները և կրոնական փորձառությունները։

Աբրահամի նկարագրին մեջ տիրական գիծը իր անալյալ ՀԱՎԱՏՔՆ է Աստուծո վրա։ Պողոս առաքյալ կկոչե զայն «Հայր ԱՄԵՆԱՑՆ հավատացելոց» (Հռ. Դ 11)։ Աստվածաշունչի մեջ իր մասին եղած մեծագույն հավաստումը սա է. «Հավատաց Աբրահամ Աստուծո, և (այս հավատալը միայն) իրեն արդարություն համարվեցավ» (Ծն. ԺԵ 6)։ Այս խոսքին վրա հիմնվելով

Պողոս առաքյալ մշակեց «Հավատքով արդարանալու» քրիստոնեական հիմնական տեսությունը, որ զսպանակը եղավ բողոքական շարժումին: Աբրահամ արժանի եղավ «Հավատքով արդարացումին» իր գործերով, որոնցմե հիշենք գլխավորները:

ա) **Հնազանդությամբ,** երբ անսալով Աստուծո ձայնին ձգեց իր հայրենիքը, բարեկամական ու ցեղային շրջանակը, և հետեվեցավ Աստուծո կոչին դեպի անորոշ երկիր մը, ապագա մը, և առաքելություն մը:

բ) **Աստվածասիրությամբ,** երբ հանձն առավ իր միամոր որդին—Իսահակը—զոհել Աստուծո:

գ) **Անեսասիրությամբ,** երբ արտոնեց որ իր եղբորորդին Ղովտ, իր կրտսերը և երախտավորյալը, ընտրե երկրի լավագույն մասը բնակության համար:

դ) **Քաջությամբ,** երբ պատերազմելու ելավ իրմե ավելի զորավոր թագավորներու դեմ, հանուն արդարության և հատկապես ազատելու համար իր եղբորորդին Ղովտը, որ գերի տարվածներուն մեջն էր:

ե) **Մեծանձնությամբ,** երբ վերոհիշյալ պատերազմեն հաղթական վերադարձին՝ մերժեց ստանալ ավարի իր արդար բաժինը, որպեսզի ոչ ոք կարենա ըսել, թե ինք «հարստացուց Աբրահամը»:

Աբրահամ օժտված է դեռ բարության, առատաձեռնության, հյուրասիրության և ազնիվ քաղաքավարության, և այլ նման մարդկային առաքինություններով, որոնք զինքը կվերածեն Հին Կտակարանի ամենեն սիրելի և հարգելի դեմքերեն մեկին:

«Աբրահամ 99 տարեկան էր, երբ Աստված ԵՐԵՎՑԱՎ անոր և ըսավ. Ես եմ Աստված ԱՄԵՆԱԿԱԼ. քալե իմ ներկայությանս և եղիր ԱՆԱՐԱՏ: Ու ես ՈՒԽՏ ՄԸ ՊԻՏԻ ԴՆԵՄ ԻՄ և քու միջև... Իմ և քու սերունդիդ միջև, իբրև հավիտենական ուխտ. Աստված պիտի ըլլամ քեզի և քու սերունդիդ» (Ծննդ. ԺԵ 1 և շար.): Այս Ուխտին իբրև նշան տվավ Աստված թլփատությունը և Աբրահամ թլփատվեցավ 99 տարեկանին:

Ուրեմն համաձայն այս Ուխտին՝ Աստված կխոստանա Աբրահամին անոր Աստվածը ըլլալ իր «Ամենակալ» հանգամանքով, ինչ որ կնշանակե անոր Տերը, Պաշտպանը և Բարերարը ըլլալ: Իսկ Աբրահամեն կպահանջե երկու բան. ա) Քալել իր ներկայության, այսինքն ապրիլ Աստուծո մշտական ներկայությանը մեջ. բ) Անարատ ըլլալ: Այս երկուքը կկազմեն արբության կորիզը և հիմնական պայմանները: Աբրահամի կրոնքին էությունը ասոնք են, որ պիտի փոխանցվեր իր սերունդին. որ պիտի մշակվեր ու բարգավաճեր Մովսեսի օրենսդրության մեջ. իր կատարումին պիտի հասներ քրիստոնեության մեջ—վերստին իր պարզության պիտի բերվեր Մուհամմեդի հաստատած կրոնական դրության մեջ:

Նշանակալից է Աբրահամի բարեխոսությունը ՍՈԴՈՄ-ԳՈՄՈՐԸ փրկելու համար: «Ու Աբրահամ մոտեցավ և ըսավ (Տիրոջ հրեշտակին). Միթե արդա՞ր ալ ամբարիշտներու հետ պիտի փճացնես. եթե հիսուն արդար գտնվի այդ քաղաքի մեջ, պիտի փճացնե՞ս զանոնք, պիտի չներե՞ս բոլորին՝ հիսուն արդարի համար. քավ լիցի քեզի, որ նման բան մը ընես, փճացնել արդարը ամբարիշտին հետ, արդարը և ամբարիշտը մեկ կըլլան այն ատեն (տարբերություն չեն ունենար). քավ լիցի, որ նման բան մը ընես, դուն որ կդատես ամբողջ երկիրը...»: Պատասխանը ծանոթ է. «Եթե Սոդոմին մեջ գտնեմ հիսուն արդար, կըսե Աստված, պիտի խնայեմ ամբողջ այդ շրջանին»: Կշարունակե Աբրահամ իր թախանձանքը. «Այժմ սկսա խոսիլ Տիրոջ հետ, ես որ հող եմ և մոխիր. ենթադրենք որ հիսունեն հինգ պակաս արդար կա այնտեղ. պիտի փճացնե՞ս ամբողջ քաղաքը այս հինգ պակասին համար...»: Ու Աբրահամ կիջնե մինչև տասը: Ու Աստված հոժարություն կհայտնե ամբողջ քաղաքին խնայել տասը արդարին համար...:

Այսօր եթե Աստված կխնայե մեր ամբարշտացյալ աշխարհին՝ այս «տասը» արդարներուն համար է: Պիտի գա ժամանակ որ այդ «տասը» արդարներն ալ պիտի չըգտնվին մեր այս դրախտային աշխարհին մեջ, որ պիտի արժանանա Սոդոմ-Գոմորի ճակատագրին, որովհետև անոնց ճանապարհեն կընթանա:

Աբրահամ նախատիպերն ու խորհրդանշանն է ԲՈԼՈՐ սուրբերուն և արդար հոգիներուն, որոնք գերմարդկային ճիգեր կընեն երկրի վրա Աստուծո խոսքին քարոզությամբ և իրենց աղոթքներով, ու մանավանդ իրենց արդար կյանքով, իսկ երկինքի մեջ իրենց բարեխոսությամբ, ազատելու համար ամբարշտացյալ մարդկությունը Աստուծո արդար բարկությենեն, առանց միշտ հաջողելու: Լատինք կհիշատակեն Աբրահամը հոկտ. 9-ին, իսկ մենք և հույնք՝ նախահարց հետ:

9. Իսահակ

Աբրահամ իր օրինավոր կնոջմեն, ամուլ Սառայեն ունեցավ միածին որդի մը, Իսահակը, որ եղավ շարունակողը իր հոր հավատքին, ոգիին, գործին և առաքելության իբրև երկրորդ նահապետը Աստուծո կերտել ծրագրած նոր ժողովուրդին: Կարժե բաղդատել որդին իր հորը հետ ի հայտ բերելու

համար երկուքին նմանությունները և տարբերությունները:

Առ հասարակ տեսնված իրականություն է, որ մեծանուն հոր մը զավակը նույնքան մեծահոչակ չըլլար. թե իսկ բացառություններ տեսնված ըլլան այս կանոնին մեջ, Իսահակ այդ բացառություններեն չէր: Աբրահամին կյանքը լայնարձակ շրջանակի մը մեջ անցած էր, Քաղդեաստան, Միջագետք, Քանան, մինչև Եգիպտոս: Իսահակ ծնավ Հարավային Պաղեստին և անկե դուրս չեկավ: Աբրահամ բացավ նոր ուղիներ. Իսահակ քալեց կոխված ճամբաներեն: Աբրահամի կյանքը լեցուն եղավ արկածներով. Իսահակինը խաղաղ անցավ: Աբրահամ բազմակողմանի և տիրական նկարագիր մըն էր. Իսահակ՝ գրեթե միակողմանի և կրավորական դեմք մըն է: Աբրահամ դրժվարությունները դիմակալող եղավ. Իսահակ կխուսափեր բախումներե:

Այս բոլորով հանդերձ Իսահակն ալ ունի իր առանձնահատկությունները, որոնք նույնքան կարևոր տեղ կգրավեն մարդկային կյանքի մեջ: Եթե Աբրահամ սկսողը եղավ նոր տեսակ կրոնական կյանքի մը, Իսահակ զայն պահողը և շարունակողը եղավ: Իսահակ կրցավ տեսնել սա կարևորագույն իրականությունը, թե իր հորմեն ժառանգած նյութական ու բարոյական հսկա հարստությանց մեջ կարևորագույնը և ամենեն թանկագինը որ իր հոր ԿՐՈՆՔՆ էր: Ինք ոգևին յուրացուց զայն և տեր կանգնեցավ անոր: Երեք են Իսահակի նկարագրին հիմնական գիծերը. **պահպանողականություն** լավագույնին. **խաղաղասիրություն** ամեն մարզի մեջ. **հավատարմություն** ամուսնական կյանքի մեջ:

Բազմակնությամբ ողողված դարու մը մեջ միակին անձ մըն է Իսահակ: Ու ընտանեկան մարզի մեջ ամենեն բախտավորներեն և երջանիկներեն եղավ ան: Իր կինը, Ռեբեկա, Աստվածաշունչի ամենեն համակրելի կիներեն մեկն է. աշխույժ, ուշիմ, գեղեցիկ և բարեսիրտ. պետք եղած տեղը համարձակ և խորագետ, պետք եղած տեղը համեստ և պարզասիրտ. բայց միշտ հավատարիմ և որդեսեր: Իր երկվորյակ զավակներուն առավելությունները և թերությունները իր ամուսինեն ավելի լավ կճանչնար: Հառաջ քշեց կրտսերը ի հեճուկս երեցին, որ հմուտ որսորդ մըն էր և «վայրագ» ըստ ս. Գրքին, իսկ Հակոբ՝ «այր առանց պաճուճանաց և ընտանեասուն». իսկ ըստ եբրայական ս. Գրքի՝ «հանդարտաբարո և վրանաբնակ մարդ»: Հակոբին ապագա մեծության մեջ մեծ դեր ունեցավ իր մայրը: Իսահակին մարդկային տկարությունները կչեզոքացվին Ռեբեկայի գործնամիտ խորագիտությամբ: Մին մյուսին լրացուցիչն է, ինչպես պետք է ըլլա ամեն բնականոն այր և կին:

Մեր ժամանակներու համար, որ լեցուն է անձկություններով, պայքարներով և ընտանեկան անհամություններով ու անհավատարմություններով, Իսահակ կներկայանա փնտռված և սիրված տիպարը ընտանեսեր մարդուն: Բախտավոր է այն մարդը, որ երբ իր հորը կնայի՝ անոր մեջ կտեսնե անկեղծ հավատքը և մաքուր կրոնքը, իսկ երբ կնոջը կնայի՝ անոր մեջ կգտնե տառապես իր լավագույն կեսը: Իսահակ այդ բախտավորներեն մեկը եղավ և տեր մնաց իր բախտին մինչև իր կյանքին վախճանը:

Իսահակ ալ հիշված է հաճախ Նոր Կտակարանին մեջ, ոչ միայն իբրև հավատքի հերոսներեն, այլ նաև իբրև նախատիպարը՝ ողջակիզվող Քրիստոսի: Իսահակ կունակը առած էր այն փայտը որով պիտի ողջակիզվեր. Քրիստոս իր ուսին վրա կրեց իր մահվան գործիքը: Իսահակ թեև զոհվեցավ իր հորը կամքին՝ ու իր անմոռուն հնազանդության մեջ, բայց ողջ եղավ զոհի սեղանին վրայեն, ուղղակի աստվածային միջամտությամբ. Քրիստոս թեպետև մեռավ մարմնով, բայց վերստին կյանքի եկավ իր զոհաբերութենեն հետո: Իսահակ ապրեցավ 180 տարի:

(Շարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 43—54):



ՆՇԽԱՐՆԵՐ ՈՐՈԳԻՆԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ա

121բ **Խօսք Որոգինիի գիրք հինգերորդ ասացուած վասն վիշապին, որ ի Յոբ պատմի, ի Դաւիթ և յայլս:**

Աղաչեմ սիրելիք աջ միտ դիր. ամենայն գոյացեալք ըստ իւրա-
122գ քանչ//իւր սերի անձնականք են: Է որ անօսր բնութեամբ, և է որ թան-
ձըր և անօսր ի միասին բաղկացեալ: Անօսրուն՝ գեղեցկութիւն գոյա-
ցութեան յերկուց անօսրագունաց, թանձրոյն՝ ի չորից տարերց, և
խզեալք բնութիւնք անմատոյցք, անշրջէտք, թանձրագոյնքս ի մեծ
մարմնի՝ երկրի, առ զգոյացութիւն, քանզի ծանունք են և վայրաբերք:
Իսկ անօսրունք թեթևացեալք ի վեր տառեցեալք ընդ երկնաւ անվթար
122բ կայան//ացեալ անփոփոխելի և անայլայլելիք, զի որպէս իցենն և
կայցեն: Իսկ երկրաինքն ստեղծանելիք և ապականացուք աստ լինի
ի նոյն մարմին անգեալ զանկանին: Եւ ահա երկոքին կողմանքն առին
զգոյացութիւն հաստատութեամբ: Իսկ անուանք իւրաքանչիւր կոչեցան
վերնոց և ներքնոց պիտակաբար դրի և ոչ բնութեամբ առ ի նշանակ
123գ ճանաչման զազգսն ի միմեանց ընդրելոյ և անուն նո//ցուն ունի զտե-
ղի և ասի որոյ են և յայլումն ոչ իմանի: Եւ է որ այլասերի առ ի պետս
ժամանաց: Եւ սայ ի վերայ բազմաց և զտեղի ոչ ունի որպէս մարդ
արդար, մարդ մեղաւոր: Դէպ է, որ արդարն է, նոյն լինի մեղաւոր:
Եւ դէպ է, զի նոյն մեղաւոր լինի արդար: Եւ անուն ոչ կալաւ զտեղի:
Իսկ մարդն անուն ոչ այլափոխի՝ մարդ արդար, մարդ մեղաւոր: Նաև
տարերքս ունի զլեղափոխմունս զանուանց, այլ ոչ զբնութեանց: Արե-

Հրատարակությունը՝ Եզնիկ վարդապետ Պետրոսյանի և Հայկազուն աբեղա Նաջարյանի:

Հրատարակվում է մեզ հասած միակ օրինակից՝ Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 6036 ձեռագրից (էջ 121բ—133բ):

Հիմնականում տեքստը պահպանված է նույնությամբ:

Ուղղված է «է»—«ե»-ի, բառավերջի «յ»-ի և «աւ»-ի ուղղագրությունը:

ԾՆԹ. Ձեռագրում «աւ»-ի փոխարեն գրված է «օ»: Այսպես՝ **մեղօր**, փխնկ. **մեղաւոր:**

123բ գակն ասի ուստի արև ծագէ, // և մարդ արեգակն անուանի և արև ոչ
կարէ ծագել: Եւ արեգակն՝ ոչ վասն անուանն ծագէ զարև, այլ զի իւր
գոյացութիւն այն է: Եւ զանունն պիտակաբար ունի, այլ ոչ իսկապէս:
Եւ այլ ևս եթէ իմաստաբար հայեցիս ընդ արարածս յաճախագոյն
զդոյն տեսցես: Ծառդ անուն դիր է, իսկ փայտն բնութիւն է: Եւ յոր-
ժամ առ պէտսն կտրեսցես, երկոքեան անուն բարձան ի նմանէ, մա-
124ա նաւանդ առ ի շինուածս: // Եթէ ուղորդ կանգնեցաւ սիւն, և եթէ հանգ
ինչ ձգեաց հեծան, այլ բնութիւն տարերն ոչ փոխեցաւ: Զկենդանի
զուժգին մարմին սովորեցաք ասել՝ վիթխարի, և այլք՝ անճոռնի, իսկ
կէսք՝ անհեթեթ: Այլ նա, որ էն, ոչ այլափոխի, մանաւանդ զգազանս
ազգի անուամբ յորջորջեմք: Եւ զազգս թիւնաբեր օձիցս յաճախագոյն
խարամանիս ասեմք, իսկ զմեծն և զգազանագոյնն քան զընդերս վի-
124բ շապ անուանեմք: // Եւ նա ոչ օձ է և ոչ վիշապ, այլ սողուն թիւնա-
բեր: Վիշապն անուն փոխի ի նմանէ, և թոյքն ոչ այլափոխի: Եւ վասն
դժուարանցից լերանց զորս վիշապ անուանեմք և խարամանիս ասեմք:
Եւ բազում կենդանեաց ի մեծամեծաց՝ վիշապ, ի ցամաքայնոց ասեմք՝
փղի, օձի, և մարդոյ չարին բնաւորի դնելով անուանքս ոչ զբնութիւնն
125ա շրջեն: Վիշապ ասեմք և աներևոյթ չար զօրութեանն, որ խնդրելով //
զօրութիւն ի Տեառնէ, եհար զարդարն ի չարաչար հարուածս ոչ միով
մասամբ, այլ ամենայն մասամբք, արտաքնովք և ներքնօք, որովք և
անձամբք և յամենայնի յաղթող երևեալ: Իսկ հակառակորդն յամե-
նայնի տկարացեալ և ի վայր անգեալ: Եւ արդարն դեռևս կայր ի պա-
տերազմի իբրև քաջ հսկազէն զգեցեալ ի նոյն կռիւ ճակատեալ և բա-
րեկամքն պատերազմէին, այլ ոչ նովին զինուոր պէս և առաջին որ
125բ պարտեցաւ, թէպէտ//և զիսնարհութեան կողմ ունէին և զանձինս ընդ
մեղաց պարտիւք արկանէին ինքեանք յառողջութեան, իբրև բարեգործք
երևէին և զհարուածսն Յոբայ մեղաց և չարագործութեան դնէին, այլ
ոչ տարապարտ կռուեցելոյն, և յիրաւ ի պարտեցելոյ: Իսկ Յոբ յեցեալ
կայր յարդարութիւն և ոչ մերժէր յինքենէ զարդարութիւն և զանմեղու-
126ա թիւն ճշմարիտ խօսելով յաջողակ բանիւք պարտէր զբար//եկամսն:
Իսկ Աստուած որ ետ զնա ի նահատակութիւն յայտնի և ծածուկ պա-
տերազմ երևեցոյց զիւր զօրութիւնն՝ կշտամբելով զ[Յ]ոբ, միանգա-
մայն և ուսուցանելով. առաջին՝ զիւր զօրութիւնն, որ աղբիւր ամենայն
բարեաց, երկրորդ՝ զսկիզբն արարչութեան զմիտս արդարոյն վարժէ
յերկնէ և յերկրէ և որ ի սոսա բերմունքս են, և ըստ մասանց բազմու-
126բ թեան ցուցանէ զարարող զիւր զօրութիւնն: Զի ոչ մի//այն արարիչ է,
այլ ամբաւ մեծութիւն, որ ձգեաց, յարկեաց զերկինս առանց մեքենայից
և հաստատեաց կացոյց զծանր մարմին երկրիս առանց սեանց, յօրի-
նեաց, կազմեաց զդիրս լուսաւորացս, առանց այլայլելոյ զատոյց, որո-
շեաց իւրաքանչիւր գազանաց կայանս, սփռեաց, տարածեաց ընդ
կակղութիւն օդոյս զազգս թռչնոց, հոգացեալ գթացաւ զամբարտաւան
127ա ամբարիշտս // թօթափեալ յերեսաց երկրէ: Զի հասարակութեամբ մար-
դիկ կեցցեն յերկրի և ամենեքեան ըստ իւրաքանչիւր սերի կացցեն
մարդոյն ի հնազանդութիւն, և մարդ բնական իմաստութեամբ հան-
ճարեղ մտօք վայելիցէ յարարածս: Եւ իբրև կատարեաց՝ յանգեաց:
Զցամաքաինս և զօդաինս ոչ եթող դատարկ և ոչ զլայնատարած դիրս
127բ ծովու, ասելով. «Այդ քո առաջի: Ուրեմն է զի վիշապք իբրև// զարջաս

խոտ ճարակին»[1]: Իբրև յայտնի են իրքտ, թէ հեռի են կաեանք կիտին,
ի բուն ի ծագս ի սպառուածս ծովու, որում ովկիանոսն ասեն: Եւ է
գազանս այս ջրային և ունի երկկերպարանեա բնութիւն: Բայց վասն
մեծութեան՝ մեզ հաւատարիմ ճշմարիտ պատմութիւնն է: Այլև մարդիկ,
որ են յարուեստ նաւայվարութեան ոչ առասպելական բանիւք պատ-
128ա մեն մեզ, այլ զաչաց տեսեալ առաջի բազում վկայից յանհնար//ին մե-
ծութենէ մարմնոյն, ասեն՝ Զլերանց նմանութիւն բերէ տեսիլն: Եւ ու-
ս[ու]մնական սգաստութիւն տուաւ նմա, յորժամ յանդունդս ի ձմեռ-
նային ժամանակին բայացեալ կայանա, պուծացեալ պաղէ թանձրու-
թիւն մարմնոյն և ագդիհութիւն ի կակուղ ներքին փորոտիսն խորհի,
հոգա դիմել ի հարաւակողմ զկնի արեգականն, զի երկայն ճանապարհ
կա առաջի: Հաեցեալ յարուեստ նաւավարաց, զի կանգնեն ի նաւին
128բ սիւնս// բարձունս և հաւասար նմին խոտորնակ միւս և ստայտ և ի խա-
չաձև հեծանսն պրկեն զլայնութիւն և զերկայնութիւն առագաստին
ընդգրկեալ՝ արգելուն ի ներքս զբազմութիւն հողմոյն արագութեամբ
դիւրաւ զծովային ուղէգնացութիւնն երթալ՝ ուր կամիցին: Ըստ նմին
նմանութեան կանգնէ և սա զիւր զմեծ մարմինն՝ բարձրագոյն ևս քան
զնաւացն, լայնէ, սփռէ զտտուանն և ընդգրկեալ արգելու զսաստկութիւն
129ա հող//մոյն առաւել քան զառագաստիցն և դիմեալ հասանէ լեառնացեալ
մարմնովն ի տեղիսն ուր կամիցի երթալ: Եւ քանզի գոն ի ծովու կըղ-
զիք բարձունք քան զջուրսն՝ ի վեր ունին զբոյսս խոտոց և զբերս ծա-
ռոց, ուր և մարդիկ արարին զբնակութիւն: Գոն կղզիք և որ ընդ ջրո-
վըն են և են լերինք մեծամեծք: Եւ քանզի անօսր է ջուրն ի վերայ
129բ կղզեացն և ջերմագոյն է յարեգակնէ, յայտր վերայ երթեալ տարած//է
զինքն և ջեռուցեալ զձմեռնային հովութիւնն, խաղա, շրջի, խոպալով
խուջապէ զամենայն բնութիւն ծովային զեռնոց, շնչէ, փոքնչէ, փայլա-
տակունք ճայթեն յոբնգացն և աստեղաց ցոլմունս արձակեալ յաչացն
երևին և պարաձև շրջելով զծովային ջուրն ընդ իւրեաւ գալարէ ի վեր
փրփրացեալ ի նմանութիւն կատսաի, որ եդաւ ի վերայ խրատի: Ծօճի,
130ա ճեմի ընդ ատակս անդընդոց, աի և դողումն ունի զամենայն ծով//աին
լօղակսն. սարսեալք և թագուցեալք: Իբրև և յիշխան առաջնորդ է:
Քանզի ասացաք վերագոյն թէ ոտս ունի իբրև զցամաքային անասուն
և գլուխ գազանի յորում ականջ քաջառաձևք ժտրդիմէ հասանէ յեզր
ծովուն: Թէպէտ և ոչ զբոլոր զինքն կարէ տալ ցամաքին, սակացն
ոտիքն չափ արտաքս ելեալ ծածկէ զպրտուկ զեղեգն և զկնին թէ
130բ ծառք ևս մեծամեծք // մերձ ի ծովն իցեն, ծածկին ընդ ստուերաւ նո-
ցա: Դարձեալ շարժեալ շրջեալ ի նոյն անդունդս խորոցն խառնի: Քան-
զի բազմակոյտ մարմնովն թանձրութիւն մարմնոյ պատեալ է, որ զօդս
անքակ և անպահիս պահէ: Վասն այսորիկ նմանեցաւ «կողքն և ողուն-
քըն պղնձոյ և երկաթոյ»[2], ուր ոչ ազդէ բաղիստր և ըղըմբաքար: Այլ
131ա զբազմութիւն նետից և զսուր տէգ նիզակաց խոտոյ և յա//ղդի նմանե-
ցոյց, և անպարտելի զօրութեամբն աներկեղ է ի ջրայնոց և ի ցամա-
քայնոց: Եւ ծնունդ է ջրային առաջին արարչական բանին, որ ասէ.
«Բ[ղ]խեսցեն ջուրք զեռուն կայտառ շունչ կենդանի»[3] և խաղալիկ է

---

[1] Ցովբ Խ 10:
[2] Հմմտ. Ցովբ Խ 18:
[3] Ծննդոց Ա 20:

արդար և իմանալի գոյացութեանն, որ ի վերայ օդոց[4] կամօք ի վայր
եկեալ՝ արար բնակութիւն ի ջուրս և ի ցամաքի: Եւ յիրաւի ասեն Աս-
131բ տուծոյ[՝՝] և ինձ գործք պատրաստեալ է: Յորժամ հող//այծինքս և ջրա-
ծինք առ հաւասարակ հրաւէրք լիցին, զի յորժամ ցամաքայնիւքս յան-
դիմանեաց զՅոբ, որոց տեղեակ էր յոյժ զարմացեալ ընդ արմաւ կէ-
տոսիս, այս ոչ էր տեղեակ Յոբ, թէպէտ և լուեալ էր յընդերակցաց հի-
րոց, այլ ոչ այսպէս յարարչէ հաւատարիմ պատմութիւն: Վասն այ-
սորիկ ասէ. «Ոչ տեսեալ քո զնա և ոչ ի վերայ բանիցս ասացելոց
132ա զարմացար[5]»: Ահա յայտնի եղև ուր աս//ացին գիրք զվիշապս՝ անուն
աճաւոր մեծութեան: Եւ կամակոր նենգութեամբ ի մանաբեր թիւնիցն,
որպէս և Դաւիթ ասէ զնոյն զսա զայս գազան. «Վիշապն զոր
ստեղծեր խաղա[ղ] նովա»[6] և զկամակոր թագաւորն Եգիպտոսի որ
օձաձև բանիւ խօսէր ընդ Մովսիսի և ընդդիմաբանութեամբ հանդերձ
խորհրդակից իշխանօքն. «Դու փշրեցեր զգլուխս վիշապին ի ջուրս
132բ զփարաւոնի և ետուր զերկիրն կերակուր զօր//ացն Եթոպիայ»[7], որ
ի բառնալ թագաւորութեանն նորա գրեցաւ Եգիպտոս Եթոպիայ: Սոյն-
պէս և Եսայիաս մարգարէ հայեցաւ ի նահատանմութիւնն Աստուծոյ,
զի թէպէտ և դառնացող էր ժողովուրդն, գթաց ի զաւակն Աբրահամու,
եկեալ Սինիքերիմ արքա լիզաջինջ կամեր առնել զԵրուսաղէմ: Առա-
քեաց հրեշտակ բարկութեան և եհար սատակեաց զբազմութիւնն զօ-
133ա րաց նորա և համբաւ Աստուծոյ[՝՝] կոծ եղեալ ի հեռաստ//անէ տագնա-
պեցաւ յիւր աշխարհ փախչէր. նահատեաց զնա մարգարէն ասելով.
«Օձ և վիշապ և կամակոր միանգամայն»[8] վիշիապ, զի գոչելով գայր
ի վերայ, և օձ, զի սողելով փախչէր և քանզի գնացք օձի կամակոր
են այլ ընդ այլ երթեալ որդոցն զաստուածաւին անցսն պատմէր, յորմէ
զայրացեալ որդիքն հարին սատակեցին առաջի սուտ աստուածոցն,
133բ որպէս և բազում յայլ տեղիս գտցես զվ//իշապս անուն, զի դրական է
և փոփոխելի և ոչ բնութեան:

---

[4] Հմմտ. Յովբ Խ 14:
[5] Յովբ Խ 28:
[՝՝] Ձեռագրում՝ այ (առանց հապավման նշանի):
[6] Սաղմ. ՃԳ 26:
[7] Սաղմ. ՀԳ 14:
[8] Եսայի ԻԷ 1:





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻՆ ԱՍՈՐԻ*
(306?—379)

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Եփրեմը «եթող զյիշատակ իւր յեկեղեցւոջ բազմապատիկ մատենիւք, որոյ ընման ոչ ոք եղև այլ յասորիս և սակաւք ի վարդապետաց այլոց եկեղեցեաց հաւասարեցան նմա, մինչև իրաւամբք դասիլ սրբոյն Եփրեմի ընդ երկոտասան վարդապետս կաթողիկէ եկեղեցւոյ»[1]:

Ս. Եփրեմը «փայլեցաւ ճգնությամբ և վարդապետությամբ, հոգելից մեկնիչ Հին և Նոր Կտակարաններու, ճառերու, ներբողներու և աղոթքներու հեղինակ»[2]:

Ս. Եփրեմը «թողել է անհագին քանակությամբ գրվածքներ, մեկնություններ, ճառեր, հոգևոր բանաստեղծություններ» և իր մատենագրական վաստակով վայելել է «մեծ հարգանք ամբողջ քրիստոնյա Արևելքում և ինչպես մեր նախնյաց մոտ... իբրև պարծանքն ու ամենամեծ գիտնական ներկայացուցիչը ասորական եկեղեցու ու գրականության: Նա «Տիեզերաց վարդապետ է», ասորվոց մարգարե և սուրբ Հոգվո քնար»[3]:

Հայ թարգմանական գրականության մեջ մեծ տեղ են գրավում ս. Եփրեմի գործերի հայերեն թարգմանությունները: Իրենց ծավալով այդ թարգմանությունները զիջում են միայն ս. Հովհան Ոսկեբերանի ստեղծագործությունների հայերեն թարգմանությանը[4]:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում միայն կան ս. Եփրեմի աշխատությունների հայերեն բազում թարգմանություններ, այդ թվում՝ Աղոթք, Կցուրդք, Խրատք, Ճառք, Կանոն և Խրատք, Կտակ, Ոսկեբերանի և Եփրեմայ Պատճառք, Մեկնութիւնք ԺԴ թղթոցն Պօղոսի, Ներբողեանք, Խոստովանութիւնք Եփրեմայ, ողբք վասն քաղաքին Նիկոմիդեայ, մեկնութիւնք Յեսուայ, Դատաւորաց, Սամուէլի, Թագաւորութեանց, Յոբայ, Մատթէի, քարոզք, եօթն վահան զոր ասացեալ է Յովսէփ Գեղեցիկն, Մեկնութիւնք երկոտասան մարգարէից, Եզեկիէլի, Թուոց, Յովնանու, ՅԱւետարանացն (թարգմանու-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1979 թվականի № Ա-ից:

[1] **Հ. Մկրտիչ Աւգերեան,** Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որք կան ի հին տօնացոյցի եկեղեցւոյ Հայաստանեայց, Վենետիկ, 1814, հատոր Ժ, էջ 418:

[2] «Լոյս» շաբաթաթերթ, 1905, Կ. Պոլիս, հատոր Ա, էջ 1028:

[3] «Կնիք հաւատոյ», հրատարակություն Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), ս. Էջմիածին, 1914, էջ XL: Տես նաև **Թորգոմ պատրիարք Գուշակյան,** Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 24:

[4] «Конференция по истории средневековой письменности и книги», Ереван, 1977, **Л. А. Тер-Петросян,** О значении древнеармянских переводов сочинений Ефрема Сирина, стр. 93—94.

թիւնք Աւետարանի), Յովհաննու Մանրանկար և այլն[5]:

Ս. Եփրեմի ստեղծագործությունների մեջ «առանձնապես հետաքրքրական են «Կըցորդք» կոչված ճառերը, իսկապես բանաստեղծական մի գրվածք, բայց դեռ չեն հրատարակվել... բաղկացած է եղել 51 հագներգությունններից... բովանդակությանը նայելով կարելի է ենթադրել որ Մծբնի պաշարման ժամանակ (338—346 և 350) ս. Եփրեմի արտասանած քաջալերականներից լինի այս և ուրեմն պատմական տեսակետից էլ արժեքավոր, մանավանդ որ մեջը մի քանի հայտնի հերետիկոսներ քննադատվում են»[6]: «Եփրեմ Ասորու բազմաթիվ կցուրդներից (մադրաշա) 51-ը ծանոթ են հայկական հին թարգմանության միջոցով. սրանց ասորերեն բնագրերը կորել են»:

«Կցորդ» կամ «Կցուրդ» կոչվում է «յաւելուած երգոյ... երգի կցուածը... տուն մի սաղմոսի ի խորհուրդ աւուրն, որում կցի և սկիզբն նորին զկնի»[7]:

«Կցուրդ բառը երգ է նշանակում..» եկեղեցական, հոգևոր նոր երգերը «կցուրդ կամ կցորդ են կոչվել այն պարզ պատճառով, որ դրանք սկզբում եղել են փոքրիկ երգեր և իբրև հավելված ասվել, կցվել են ս. Գրքի սաղմոսներից կամ օրհնություններից հետո... կցուրդներն անկախ բնավորությամբ երգեր չեն եղել, այլ ս. Գրքի երգերի մի լոկ հարաստություն, կամ հարաստություն օրվա տոնի խորհրդի հիշատակությամբ»[8]:

Առայժմ ս. Եփրեմից մեզ հասել են հայերեն թարգմանությամբ 60 ստեղծագործություններ:

Ս. Եփրեմի աշխատությունների հայերեն թարգմանությունների կարևորությունը թե՛ ընդհանուր քրիստոնեական և թե՛ ասորական գրականության ուսումնասիրության տեսակետից կայանում է նրանում, որ նրա շատ աշխատությունների բնագրերը կորել են և դրանց «մի կարևոր մասը հայերեն թարգմանությամբ է հայտնի դարձել քրիստոնյա, գիտական աշխարհին»[9]:

Սուրբ Եփրեմի գործերից միայն հայերե՛ն թարգմանությամբ պահպանվել են հետևյալ ստեղծագործությունները[10]. «Հոգևոր երգերի ժողովածու» (Մադրաշա), «Նիկոմեդիական եղերերգություններ» (վասն Նիկոմեդեայ քաղաքի, վասն յարութեան և ազատութեան և վասն վարդապետութեան արանց), «ասութիւնք» կամ «ասացվածքներ» (մեմրա), Գործք առաքելոց-ի, Պողոս առաքյալի ԺԴ թղթերի մեկնություններ, Տատիանոսի «Համաբարբառ»-ի (տես այս մասին «Էջմիածին» ամսագիր, 1979, № 1, էջ 52) մեկնության զգալի մասը, Հոբի գրքի մեկնությունից հատվածներ, քաղվածքներ Հնգամատյանի, Հեսվա, Դատավորաց, Թագավորությանց և Մնացորդաց գրքերի մեկնություններից (Աստվածաշունչ—Մատեան Հին և Նոր Կտակարանաց, Կ. Պոլիս, 1895, էջ 1—506, 554—586):

Ասորական գրականության ուսումնասիրությամբ զբաղվողների համար նույնքան կարևոր են հայերեն այն թարգմանությունները, որոնց բնագրերը պահպանվել են, և որոնք ունեն նաև հունարեն թարգմանության օրինակներ: Բայց հայերեն ձեռագրերը իրենց թարգմանության հնությամբ, այս դեպքում առավել հին լինելով, բնագրային մեծ նշանակություն են ներկայացնում ասորական բնագրի քննադատական-գիտական վերակազմության համար[11]:

Շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ ս. Եփրեմին վերագրվող ստեղծագործությունների շատությունը, առատությունը մանավանդ և՛ ասորական և՛ հունական գրականության մեջ, մասնագետների կողմից կասկածի տակ է առնվում և հայերեն յուրաքանչյուր թարգմանություն այս տեսակետից վճռական նշանակություն է ունենում բնագրերի ճշգրտման գործում[12]:

Թե ե՞րբ և ո՞ւմ ձեռքով հայերենի են վերածվել Ե դարից սկսած ս. Եփրեմի ստեղծագործությունները, դժվար է ասել, որովհետև ս. Եփրեմի գործերի հայ թարգմանիչների մասին էլ տեղեկություններ չեն հասել մեզ:

Ս. Եփրեմի գործերը հայերենի են թարգմանվել «սյլ և այլ ժամանակաց մեջ, բայց

---

[5] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ա հատոր, Երևան, 1965, էջ 1493, Բ հատոր, 1970, էջ 1312:

[6] «Կնիք հաւատոյ», նույնը, էջ XLI: Տես նաև **Հ. Գ. Մելքոնյան**, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1970, էջ 131—132:

[7] Առ ձեռն բառարան հայկազեան լեզուի, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1865, էջ 457:

[8] **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, հատոր առաջին, Երևան, 1944, էջ 480—481: Տես նաև **Հ. Ն. Ակինյան**, Կցուրդք ս. Եփրեմի Խորին Ասորւոյ, Վիեննա, 1957, էջ Թ: Տես նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատոր երրորդ, Կ—Մ, Երևան, 1974, էջ 238, «Սաղմոսներգությանը կամ օրհնությանը կցված համառոտ երգ»:

[9] «Կնիք հաւատոյ», նույնը, էջ XL: Տես նաև **Л. А. Тер-Петросян**, նույնը, էջ 93:

[10] **Л. А. Тер-Петросян**, նույնը, էջ 93—94: **Հ. Գ. Մելքոնյան**, նույնը, էջ 132:

[11] **Л. А. Тер-Петросян**, նույնը:

[12] Նույնը:

մեծագույն մասամբ ի հինգերորդ դարու կատարված՝ ի սրբոց Թարգմանչաց մերոց, հուսումնական դեգերանս յուրյանց հեդեսիա, անշուշտ ասորի բնագրե»[13]:

Ս. Եփրեմի գործերը Ե դարից հետո, նաև հաջորդ դարերում թարգմանվել են հայերենի. նրա գործերից «կան նաև կրտսերագույն դարուց թարգմանությունք, և հանվանե ի ձեռն Գրիգորի Վկայասերի և ի Գևորգ վարդապետե Քեսունցվո և հայոց»[14]:

Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը (1066—1105) Կ. Պոլսում ասորերենից հայերենի է թարգմանել ս. Եփրեմի Ոտնվվայի կարգը:

Ս. Ներսես Շնորհալին իր «Վիպասանութիւն» աշխատության մեջ, գրված 1121 թվականին, նշում է, որ Վկայասերը «երկրորդ Մեսրոպ մեզ երևեալ, զգիրս բազումս թարգմանեալ, առ ի Յունաց և յԱսորուց ճառս սրբոց վերաբերեալ»[15]:

«Ընդհանրապես ս. Եփրեմի գրվածոց հայերեն թարգմանությունները համարվում են ոսկեդարյան և մեծ ազդեցություն են գործել մեր հայրերի հոգևոր կյանքի և մեր նախնի գրականության վրա»[16]:

Ս. ԵՓՐԵՄԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Եփրեմի չափածո գործերի հայերեն թարգմանության առաջին տպագրությունը եղել է նրա «Գիրք Աղօթից»-ը: Ս. Եփրեմը «մեր մեջ ժողովրդական եղած է մասնավորապես իր աղոթագիրքովը»[17]:

Ս. Եփրեմի «Գիրք Աղօթից»-ը մեր ժողովրդի սիրած աղոթամատյանն է եղել, որն ունեցել է բազում տպագրություններ:

Ս. Եփրեմի «Գիրք Աղօթից»-ը տպագրվել է առաջին անգամ Կ. Պոլսում, Մարտիրոս Դպրի տպարանում, 1734 թվականին, և բաղկանում է 95 էջից: Այդ «Աղոթագիրք»-ի երկրորդ տպագրությունը կատարվել է նույնպես Կ. Պոլսում, 1747-ին, և բաղկանում է 128 էջից[18]:

Կ. Պոլսի հայոց գիտնական և աստվածաբան Հակոբ պատրիարք Նալյանի օրով կատարվել է «Աղոթագիրք»-ի երրորդ տպագրությունը՝ հետևյալ վերնագրով. «Գիրք Աղօթից ասացեալ սրբոյն Եփրեմի և տպագրեցեալ հրամանաւ աստուածաբան պատրիարգին Կ. Պոլսոյ Տեառն Յակոբայ»: «Հիշատակարանը կիսատ է, ուստի հայտնի չէ տպագրության տարեթիվը»[19]:

«Գիրք Աղօթից»-ը չորրորդ անգամ տպագրվել է Կ. Պոլսում, 1767-ին, տպարան՝ Հովհաննեսի և Հակոբի, 112 էջ:

Թեև չի նշվել հրատարակության տարեթիվը, սակայն դարձյալ Կ. Պոլսում, հավանաբար 1793—1799 թվականներին նորից տպագրվում է ս. Եփրեմի «Աղոթագիրք»-ը՝ հետևյալ վերնագրով. «Գիրք Աղօթից ասացեալ սրբոյն Եփրեմի Խուրոյ Ասորոյ, տպեալ ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց, և սրբոյ Երուսաղէմի տեառն Պետրոսի շնորհափայլ պատրիարգի, հրամանաւ տեառն Զաքարիայ ազգասէր և բարեկարգ պատրիարգի, Կ. Պոլիս, տպարան «Մայր դպրատան ի Մատթէոս դպրէ իւրոյ իսկ տպագրաւ», 118 էջ[20]:

«Աղոթագիրք»-ի հաջորդ հրատարակությունը կատարվել է դարձյալ Կ. Պոլսում, 1822 թվականին. «Գիրք Աղօթից... վերըստին տպեալ փոքրադիր՝ վասն դիւրապէս ի գործ ածելոյ աղօթասէր եղբարց օրհնեալ ազգիս», 109 էջ[21]:

Ս. Եփրեմի «Աղոթագիրք»-ը տպագրվել է նաև Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցի տպարանում, 1825 թվականին, 106 էջ, ինչպես նաև Շուշիում, 1834-ին, 104 էջ[22]:

Դարձյալ Կ. Պոլսում, 1843-ին, 152 էջ, և վերջապես՝ Երուսաղեմում, 1848 թվականին, 239 էջ, և նույնի երկրորդ տպագրությունը Երուսաղեմ՝ 1857-ին[23]:

Մենք ձեռքի տակ ենք ունեցել ս. Եփրեմի «Գիրք Աղօթից»-ի 1767 թվականի Կ. Պոլսի հրատարակությունը, որի վերնագիրն է.

«Գիրք Աղօթից
ասացեալ սրբոյն Եփրեմի
Խուրոյն Ասորոց
նախապէս տպեցեալ գոլով սա՝
Հրամանաւ տեառն Յակոբայ
մեծի և աստուածաբան վարդապետի
հանգուցելոյ ի Տէր.
իսկ այժմ ընդ խնդրոյ եղբարց
վերստին տպեցեալ եղև
ի պատրիարգութեան տեառն

[13] «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 443:

[14] Նույնը, էջ 443—444:

[15] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, Ա հատոր, Բեյրութ, 1959, էջ 133:

[16] «Կնիք հաւատոյ», նույնը, էջ XL—XLI: Տես նաև **Л. А. Тер-Петросян**, նույնը, էջ 93—94:

[17] **Գրիգոր պատրիարք Գուշակյան**, նույնը, էջ 25:

[18] «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800)», Երևան, 1963, էջ 104 և 120:

[19] Նույնը, էջ 233:

[20] Նույնը, էջ 233:

[21] «Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 105:

[22] Նույնը, էջ 128, 235:

[23] Նույնը, էջ 239, 369:

Գրիգորի գերզգօն և խոհեմազարդ
վարդապետի
թուին հայոց ՌՄԺԶ (1216+551=1767)
սեպտեմբերի ԺԵ»:

Սույն «Աղօթագիրք»-ը բացվում է սուրբ Եփրեմի նկարով, աղոթողի դիրքում: Նկարի ներքևում հետևյալ երկտողն է.

«Սուրբ հայրն Եփրեմ յանապատին միշտ աղօթէր,
Աղօթողաց ելբարց բազմաց զայս աւանդէր»:

Այնուհետև Աղօթագրքի հայերեն թարգմանությունը.

«Աղօթք զօրաւոր սրբոյ հօրն
Եփրեմի Խուրոյն Ասորւոց
Ասացեալ խօսք ընդ Աստուծոյ»:

Գրքում հրատարակվել են սուրբ Եփրեմի 140 հոգեվից, հոգեշեն աղոթքները, որոնք գրավում են գրքի 3—64 էջերը:

Գրքի 65-րդ էջից սկսվում է «Նորին դարձեալ Աղօթք սրբոյն Եփրեմի ասացեալ առ Տէր Աստուած» (էջ 65—66), ապա «Նորին Աղօթք սրբոյն Եփրեմի պէս պէս հայցուածովք» (էջ 66—75):

76-րդ էջում ս. Գրիգոր Լուսավորչի նկարն է՝ հայրապետական լրիվ զգեստավորմամբ, ներքևում՝ հետևյալ քառատողը.

«Մինչ ի փորձանս ոք անկանի
Կացցէ յաղօթս այս արժանի.
Զոր ասացեալ է Գրիգորի
Հայաստանեայց Հայրապետի»:

77-րդ էջում հրատարակվել է ս. Գրիգոր Լուսավորչի սույն «Աղօթք՝ յորժամ յորոգայթ անկանի ոք. ասացեալ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին»:

«Օրհնեալ է մարդասիրութիւնդ քո Տէր իմ և Փրկիչ Յիսուս Քրիստոս, ընդէ՞ր լքանես զիս» բառերով (էջ 77—81):

Գրքի 82-րդ էջում տպագրվել է «Սրբոյն Աթանասի և սրբոյն Աբբայ Եփրեմի ասացեալ խոստովանութիւն», այսինքն հավատի դավանությունը (էջ 82—91), «Խոստովանիմ և հաւատամ զՀայր անսկիզբն, զՈրդին Միածին՝ ծնունդ ի Հօրէ և զսուրբ Հոգին՝ բղխումն ի Հօրէ, երեք անձինք և մի բնութիւն և մի աստուածութիւն, անշփոթ միաւորութեամբ և զանճառ տնօրէնութիւն Մարդացելոյ Բանին Աստուծոյ» (էջ 82):

Այնուհետև տպագրվել է «Մեղայ Աստուծոյ» խոստովանությունների ծանոթ շարքը, որը մեր եկեղեցական մատենագրության մեջ հայտնի է «Մեղայ Գիրք» անունով:

91-րդ էջում տպագրվել է դարձյալ ս. Գրիգոր Լուսավորչի «Աղօթք արձակման արարեալ մեծի բաբունապետին Գրիգորի» (էջ 91—92):

92-րդ էջում՝ դարձյալ «Աղօթք դարձելոցն ի զղջումն ապաշխարութեան» (էջ 92—98):

Գրքի 99-րդ էջում տպագրվել է «զօրաւոր աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակակրօն վարդապետի, վասն արեանն Տեառն վերասցին ամենայն հեծութիւնք և հասցեն ողորմութիւնքն»:

Սույն աղոթքը (էջ 99—101) «Նարեկ»-ի 92-րդ գլխի ծանոթ աղոթքն է:

101 էջից՝ դարձյալ «զօրաւոր աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետի առ ի պահպանութիւն ի դիւէ և ի քակտումն զօրութեան նորա» (էջ 102—103, «Նարեկ»-ի գլուխ 93):

104-րդ էջում տպագրվել է «մաղթանք առ սուրբ Աստուածածինն, և առ ամենայն սուրբսն՝ յետ եկեսցէ-ին ասա» (էջ 104—110): Սույն մաղթանքը ոտանավոր «անձինք» է՝ գրված այբուբենական կարգով, հավանաբար հրատարակչի կողմից:

110-րդ էջում՝ գրքի «տպագրեցման» հիշատակարանն է, ուր շեշտվում է աղոթքի կարևորության նշանակությունը հավատացյալի համար:

Ս. Եփրեմի սույն Աղոթագիրքը տպագրել է «յակնայ գիւղէն ապուչեխցի, արապօղլի կոչեցեալ մահտեսի Աստուածատրի որդի՝ Յոհանէսս», որին օգնել է նաև «զհաղորդակից զընկերն իմ, ակնցի տիրացու Յակոբն... ևս զորդեակն իմ զկապարեայս շարաբարդօղ՝ զտիրացու Պօղոսն և զմրազարկ վանեցի Գասպարն, զաշխատաւորսն գործարանիս մերոյ...

Յորմէ և դուք լինիջիք յիշեցեալ Տեառնէ մերմէ, այցելութեամբ յաւուր յայտնութեան Նորին. ամէն. վերջ» (էջ 312):

Մեր ընթերցողներին հոգևոր մի ճաշակ տալու մտադրությամբ, հրատարակում ենք ս. Եփրեմի Աղոթագրքից որոշ հատվածներ:

Ա

Տես, Տէր զտառապանս իմ և զցաւս հոգւոյ իմոյ բազմամեղիս. դարձ՝ ներեա և ի քեզ առաջնորդեա: Որ ասացեր՝ դարձարուք առ իս, և ես դառնամ առ ձեզ:

Բ

Ինձ լքելոյս ողորմեա. ինձ եղկելոյս օգնեա. ինձ խաւարելոյս ճառագայթեա. ինձ մոլորելոյս առաջնորդեա, որ լի եմ մեղօք և անթիւ յանցանօք, և ի յորձանս անօրէնութեան տարաբերեալ ծփիմ:

Գ

Դ

Շնորհեա որպէս զաւազակին. բաց ինձ զդուռն կենաց ճանապարհին և մեծ արքունական առագաստին:

Ե

Ո՞վ խորք մեծութեան և իմաստութեան՝ կալ զըմբըռնեալս՝ որ ի խորս ծովուն անկեալ եմ մեղօք. զերծո և զօրացո զիս առնել զկամս քո. սգալ և լալ ի տուէ և ի գիշերի զամենայն անօրէնութիւն և զմեղգութիւնս իմ:

Զ

Աղբիւրդ կենդանութեան՝ արբո զծարաւ հոգիս իմ յառատաբուղխ վտակէ քումմէ. որ պասքեալ տոչորիմ ի բազում անօրէնութեանց իմոց. խթեա ի քարացեալ սիրտ իմ. և հան ինձ արտասուս ապաշխարութեան:

Է

Գանձդ ամենայն բարութեանց. շնորհեա ինձ դանկի միոյ չափ ի բազում քո առատ բարեացդ՝ որ չարաչար եմ աղքատացեալ և մերկացեալ. զգեցո և կերակրեա զիս արտասուօք ապաշխարութեան:

Ը

Լոյս ճշմարիտ Քրիստոս որ լուսաւորես զամենայն մարդ՝ լուսաւորեա զխաւարեալս մեղօք. բաց զաչս սրտի իմոյ. և հաստատեա յերկիւղ և ի սէր պատուիրանաց քոց:

ԺԱ

Տուր ինձ, Տէր, սուգ, և արտասուօք կարողացո զմարմինս իմ. կակղացո զքարացեալ սիրտս իմ. և ժողովեա զմիտս իմ ի քեզ: Զնչեա զբազմութիւն յանցանաց իմոց. և շնորհեա ինձ զօգուտն իմ:

Ընկալ և մի անտես առներ զհառաչանս սրտի իմոյ:

ԺԲ

Տուր ինձ իմաստութիւն. և տնկեա, Տէր, զահ և զերկիւղ քո ի սրտի իմում: Լուսաւորեա զխորհուրդ իմ. կարողացո զմարմինս իմ ժուժկալութեամբ կալ ի պատուիրանի քում ամենայն ժամ:

ԺԳ

Բաց, Տէր, զաչս սրտի իմոյ. և լուսաւորեա հոգւովդ սրբով:

Պարգևեա ինձ առողջ խորհուրդս և առաքինի վարս՝ ողբալ հանապազ. աՀիւ և դողութեամբ կալ առաջի՝ յամենայն ժամ անզբաղ:

ԺԷ

Աճեցո, Տէր, զբարիս գործել ինձ յամենայն ժամ. և խափանեա զամենայն չարիս ի չար մտաց իմոց. ի պիղծ և յանուղղայ գնացից՝ և ի չար սովորութենէ դադարեցո զիս. և հաստատեա յերկիւղ և ի սէր պատուիրանաց քոց:

ԺԸ

Արեգակնդ արդարութեան՝ Փրկիչ իմ և ազատիչդ Յիսուս Քրիստոս. ի լոյս քո ապաւինիմ. լուսաւորեա և ջերմացո զսիրտս իմ: Հրակիզեա զչար խորհուրդս իմ. և հալեա զսառնամանիք մեղաց իմոց: Շնորհեա, Տէր, գարուն հոգւոյ իմոյ՝ ծաղկիլ և պտղաբերել զարդարութեան պտուղն:

Ի

Ընչեա, Տէր, զհարաւ քաղցրութեան շնչոյ հոգւոյդ սրբոյ ի խստացեալ և ի թանձրացեալ սիրտս իմ. և զարթո որոտընդոստ փայլատակմամբ զսառնացեալ և զցամաքեալ միտս իմ:

Բաց, Տէր, զփակեալ դուռն սրտի իմոյ. և ծագեա ի ներքս զլուսաւորութիւն ճառագայթից քոց:

Սրբեա և զաղտ մեղաց իմոց. և զվէրս հոգւոյ իմոյ, բժշկեա:

Ամրացո երկիւղիս քո և զօրացո առնել զարդարութիւն յամենայն ժամ:

ԻԲ

Աղբերացո, Տէր, զգլուխ իմ ի բղխումն արտասուաց. լուա զթարախ հոգւոյ իմոյ. սրբեա զզգաստարանս իմ: Եւ զգործօղս չարեաց՝ փոխարկեա ի զըղջումն ջերմ սիրոյ քո՝ զգաստ մարմնով կեալ ի պատուիրանի քում:

ԻԶ

Հալածեա, Տէր, զխաւար ի հոգւոյ իմոյ. և զգեցո ի լոյս արդարութեան ճառագայթից քոց: Զարդարեա երկիւղիս՝ զղջմամբ և արտասուօք զսիրտ իմ. երկընչիլ ի դատաստանաց քոց և պահել զամենայն պատուիրանս քո:

ԼԶ

Հալածեա, Տէր, զամենայն չար մտածմունս երկրաքարշս ի խորհրդոց մտաց իմոց. արմատ բարեաց տնկեա հաստատութեամբ ի սրտի իմում. և պտուղ շնորհաց ի հոգիս իմ նկարեա՛:

ԼԷ

Աղաչեմ բարերար և ողորմած Տէր՝ արթունս և զուարթունս պատրաստեա զիս. ուստ ինձ գնալ ի ճանապարհս քո բարի. զի արժանի եղէց մեծի փառաց քոց:

ԽԹ

Մի մերժիր զիս, Տէր, ի հայրենի գթոյ քո. համարձակիմ ի խնամ սիրոյ քո. ի ծնողէդ վերջացայ՝ և զորդիութիւն իմ ուրացա: Հայր, մեղա՞յ յերկինս և առաջի քո. չեմ արժանի կոչիլ որդի քո. արա զիս իբրև մի ի վարձկանաց քոց:

ԾԳ

Ծանո, Տէր, ինձ զճանապարհս քո. հեռացո, Տէր, զմարմինս իմ ի խորհրդոց չարեաց՝ և հաստատեա յերկիւղ բարեաց. սուրբ և անարատ կեալ առաջի քո յամենայն ժամ:

ԿԷ

Հաստատեա, Տէր, զխաղաղութիւն և զպայծառութիւն լուսոյ կենաց անձին իմոյ. զի մի խոտորիցիմ յաջ կամ յահեակ. և դատապարտիմ յաւուր գալըստեան քո՝ պահանջելով զչետին նաքարակիտն մինչ հապա:

ՀԱ

Կանգնեա զիս, Տէր, ի գլորմանէ. և ի բազմամեղ անդնդային խորութենէ վերացո և բարձրացո թևօք Հոգւոյդ սրբոյ ի խնդրուածս հանոյից. ի նորոգումն և ի լուսաւորութիւն մտացս. ի ջնջումն մեղացս. և ի կատարումն սուրբ պատուիրանաց քոց:

ՀԲ

Մի թողուր զիս, Տէր, ի հեռանալ սիրոյ պատուիրանաց քոց՝ և ի վարուց առաքինութեանց. այլ յորդորեա. առաւելուլ յամենայն գործս արդարութեան. առանց մեղաց և առանց իրիք խափանուածոց պաշտել զքեզ սրբութեամբ և արդարութեամբ առաջի քո զամենայն աւուրս կենաց իմոց:

ՂԷ

Լեր վերակացու և պահապան անձին իմոյ, ով Տէր իմ Յիսուս. պահեա զիս ի դիւաց. և փրկեա զիս ի մարդկային փորձանաց: Հակառակողաց յաղթեա և կացո զիս ի մէջ պատերազմողաց քաջ և ընտիր լինիլ. գործակցեա ինձ լինիլ քաւարան մեղաց՝ և համբերել վշտաց. առաքինաջան գործովք հանդիպիլ քում աստուածային շնորհացդ:

ՂԸ

Վա՜յ ինձ, Տէր, վա՜յ ինձ. զի մեղօք կործանեցայ. և մտօք իմովք աղտեղեցայ. ի բարեաց ունայնացայ՝ և ի սիրոյ ցամաքեցայ. ի լալոյ խաւարեցայ՝ և ի գնալոյ դադարեցայ: Ոչ ունիմ աչս լալոյ և արտասուաց. ծփիմ տարակուսեալ. զի յոյս և ակն բարեաց ոչ ունիմ:

ՃԺԱ

Ընկալ, Տէր, զմոլորեալս որ փախուցեալ կամ ի լերինս. որպէս ծառայ չար ի տեառնէ հալածեալ վասն մեղաց:

Եւ ի սուրբ եղբարց հրաժարեալ եմ. ի սուրբ պաշտամանց հեռացեալ. զի սիրող էի մեղաց՝ և նախատինք կրօնաւորաց. անյագ ի մեղաց և ի զրկանաց: Անգութ էի աղքատաց՝ և հակառակ սպասաւորաց. անողորմ էի հիւանդաց՝ և անմխիթար աշխատողաց. չէի իսկ արժանի կալ ի մէջ ճգնաւորաց:

ՃԺԲ

Տես, Տէր, զլալիս և զողբալիս. զպաղատելիս և զեղկելիս. ինձ ողորմեա անօրինելոյս. և շնորհեա ինձ յորդ արտասուս ի գիշերի, և զնշոյլ շնորհաց քոց յառաւօտի:

Բաց զխաւարեալ աչս սրտի իմոյ՝ և բժշկեա զհիւանդացեալ հոգիս իմ. ընկալ զդարձ մեղաւորիս և մի բարկանար բազմամեղիս, Տէր իմ Յիսուս. և քանզի անթիւ ունիմ զչարիս՝ ջնջեա յինէն և տուր ինձ զշնորհս քարեաց:

ՃԻԱ

Շնորհեա ինձ, Տէր, երկիւղ սրբութեան և սգոյ. և յորդորեա առ իս աղբիւրս արտասուաց. թեթևացո զծանրութիւն բեռանց իմոց. և առնելո առ իս սուրբ աղօթս: Փութացիր, Տէ՛ր, և եկ ի խնդիր մոլորելոյս. որ մերձեալ եմ ի վախճան կորստեան. վասն զի խաւարեցայ ի լուսոյ. և ի սիրոյ պատուիրանաց քոց խափանեցայ. ի չար թշնամւոյն յաղթեցայ և նուազեցայ յերկիւղէ քումմէ:

Տապալեցայ ի չար խորհրդոց չարին՝ և ցամաքեցայ ի շնորհաց արտասուաց սիրոյ քո. խաբեցայ յունայն բանից՝ և ի լուսաւորութենէ մտաց մոլորեցայ. աղտեղեցայ մեղօք՝ և զօր վախճանին մոռացայ:

ՃԻԲ

Պարգևեա, ինձ, Տէր Յիսուս, զլալումն Դաւթի՝ և զողբումն Երեմիայի զհառաչումն Պետրոսի՝ և զյորդառատ վտակս արտասուաց կնոջն պոռնկին. զի նստեալ լացից անդադար ի տուընջեան և ի գիշերի. զի արժանի եղէց սրբիլ ի յաղտոյ և ի թարախոյ. և յորդնալից վիրաց զերծանիլ. և ի բազմաբեռն թեթևանալ՝ և դասիլ ընդ սուրբ քո:

ՃԻԹ

Ողորմեա, Տէր, առաջնորդաց եկեղեցւոյ՝ հայրապետաց և վարդապետաց. երիցանց, սարկաւագաց, դպրաց, և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ առնել յամենայն ժամ. հովուել զծողովուրդս քո. տրբիլ վասն հոգւոց նոցա. ասելով անաւասիկ ես և մանկունք իմ զոր ետուր ցիս:

ՃԼ

Ողորմեա, Տէր, Յիսուս Քրիստոս կարօտելոց և տարակուսելոց. որոց և այրեաց. տնանկաց և տանց հաւատացելոց, կենդանեաց և ննջեցելոց, և որք ընծայարերք են եկեղեցւոյ: Աղքատաց կերակրողաց, ողորմածաց, երկիւղածաց, և հիւանդաց, նաւորդաց և ճանապարհորդաց, խոստովանողաց և ապաշխարողաց. և անդարձ մեղաւորաց. ողորմեա, Տէր, և դարձո յապաշխարութիւն:

Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնիդ և անարատ միշտ կուսիդ, և Յովհաննու Կարապետին, Ստեփաննոսին առաջին մարտիրոսին, և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. և ամենայն սրբոց վկայից քոց՝ լուր ինձ եղկելոյս: Եւ գլորելոյս ձեռնտու լեր. և մոլորելոյս առաջնորդեա. և ի խաւարէ հանցես զիս ի լոյս. և հոգւոյ իմոյ ազատութիւն շնորհեա:

Հաստատեա ի սէր քո. և բևեռեա յերկիւղ քո: զտաճար հոգւոյ իմոյ մաքրեա. և առ իս օթևանեա:

Փրկեա զդուռն մեղաց իմոց. և պարսպեա շուրջանակ յոսոխէ իմմէ: Եւ ի մարդոյ չարէ և յանիրաւէ փրկեա և ազատեա զիս առաքինութեամբ. և պարգևեա ինձ զանճառ երանութիւն քո: Կենդանեաց մերոց ողորմեա. և զհոգիս ննջեցելոց մերոց պայծառացեալ լուսաւորեա:

Ս. ԵՓՐԵՄԻ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Եփրեմի մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների տպագրության մեջ մեծ տեղ են գրավում նրա աստվածաշնչական Գրքերի մեկնությունները:

«Համեմատելով զթարգմանությունս մեր ընդ բնագրին,—եթե գտնվին,—և ի վաղ ժամանակաց առ մեզ հասած թարգմանությանց, մեծ տարբերություն կտեսնենք իրարու հետ: Չենք կրնար ենթադրել թե մերքն այնպիսի ազատություն մը գործածած ըլլան ի թարգմանությանս, որուն իրենց ուրիշ երկասիրությանց մեջ չենք հանդիպի, այլ երկյուղած հավատարմությամբ՝ մանավանդ ի հինգերորդ դարու թարգմանիչս: Ուստի հավանականագույն պիտի սեպեինք թե ասորի գաղափարողք և գրիչք վարված ըլլան այսպիսի ազատությամբ, եթե հայլուստ չգիտնայինք թե բուն հեղինակին կպատշաճին այդ տարբերությունք. վասնզի Աստվածաշունչ Գրոց մեկնության, հԱրարածոց մինչև ի Մնացորդս, հայերեն հին և ընտիր թարգմանություն մը ունինք՝ Եփրեմի ընծայված, և որ մեծապես կտարբերի հընդարձակագույն ասորի բնագրեն որ հասած է առ մեզ: Պատճառն է որ սուրբն Եփրեմ բացի այս ընդարձակեն՝ հորինած է նաև զհամառոտությունն, ինչպես ինքն իսկ կակնարկե ի հառաջաբանի ասորի ընդարձակ մեկնության, և ասոր հայ թարգմանությունն է մեր ունեցածը, որո կպակասի բնագիրն»[24]:

Ս. Եփրեմի Աստվածաշունչ Գրքերի վրա գրած մեկնությունները «ամենահինն են մեզ հասածներից: Դրանց արժեքն այն է որ Եփրեմը մեկնել է Հին Կտակարանի «Պեշիտտո» թարգմանությունը և Նոր Կտակարանի «Համաբարբառ»-ը, որի ասորերեն բնագիրը կորել է և մեզ է հասել միայն հայերեն հին թարգմանությունը»[25]:

Ս. Եփրեմը «մեկն է եկեղեցվո նշանավորագույն հայրերեն, մեծ քարոզիչ և ընտիր բանաստեղծ: Հեղինակ է եղած կրոնական մեծարժեք գրականության մը, որ կբաղկանա մասնավորապես հոգևոր երգերե և Աստվածաշունչի մեկնություններե: Այս վերջիններեն կարևոր մաս մը հայերենի վերածված է ոսկեդարյան թարգմանությամբ»[26]:

Ս. Եփրեմի Աստվածաշունչ Գրքերի մեկնությունները «միջին դարերում զուգորդել են ուրիշ հեղինակների (հատկապես Ոսկեբերանի) մեկնությանց հետ և ուսուցման նյութ են դարձրել մեր վարդապետարաններում, այդպես պահվել են բազմաթիվ ձեռագրերում...: Մնում է ենթադրել, որ տպագրված ու ձեռագրերում պահված նորա գործերից զատ ուրիշներն էլ եղել են հայերեն թարգմանությամբ, որ մեզ չեն հասել, կամ դեռ անհայտ են: Այսպես, օրինակ, Գրիգոր Մագիստրոսի մի նամակից (Ալեքսանդրապոլ, 1910, էջ 3), իմանում ենք, որ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը (1019—1058) Բջնիում բանտարկված ժամանակ կարդում էր ս. Եփրեմի «Հաւատոց» գիրքը, որից և վերցված են գուցե մեր ժողովածուի (Կնիք հավատո) մի քանի հատվածները, բայց այժմ չկա մեջտեղ»[27]:

1836 թվականին Վենետիկում տպագրվել են ս. Եփրեմի մեկնությունների, ճառերի և աղոթքների հայերեն թարգմանությունները հաջորդական՝ Ա, Բ, Գ և Դ հատորների մեջ, «Ս. Եփրեմի մատենագրութիւնք» ընդհանուր վերնագրի տակ[28]:

Առաջին հատորի բովանդակությունը հետևյալն է.

«Սրբոյն Եփրեմի
մատենագրութիւնք
հատոր առաջին
մեկնութիւն Արարածոց, Ելից, Ղևտացւոց,
Թուոց, Օրինաց, Յեսուայ, Դատաւորաց,
Թագաւորութեանց և Մնացորդաց,
ի Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու,
յամի 1836 ՌՄՁԵ, 495 էջ»:

Ս. Եփրեմի մատենագրության առաջին հատորը բացվում է «Յառաջաբան»-ով (էջ 5—12), ուր նշվում է, թե «զնշխարս ի ճոխ վարդապետութեանց մեծին Եփրեմի սրբոյ վարդապետին», այդ հատորը հրատարակվում է «պայծառութեան լեզվիս և դպրութեանս հարստութեան» պատճառով, «ի վայելս հասարակաց» (էջ 5), որովհետև «զի և սա՛ մի է պատուական վաստակոց նախնեացն մերոց երանաշնորհ Թարգմանչաց» (էջ 5), որոնք մեր հայ դպրության ծաղկման շրջանում, Ե դարի առաջին հիսնամյակում, ընդհանրական եկեղեցու մեծավաստակ հայրապետների գործերի թարգմանությամբ, «հայրենախօս բարբառովք թողին մեզ՝ որդւոցս, ի զբօսանս հոգևոր ջանից, մեծաւ իմաստութեամբ կշռեալ քան թէ զամենայն բանս մեծահանճար իմաստնացն ըստ աշխարհի», այդ թվում

[24] Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 444:

[25] Հ. Գ. Մելքոնյան, նույնը, էջ 132—133:

[26] Թորգոմ պատրիարք Գուշակյան, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 24:

[27] «Կնիք հաւատոյ», նույնը, էջ XLI:

[28] Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 214—215:

նաև ս. Եփրեմի գործերի հայերեն թարգմանությունները:

Առաջին հատորում ամփոփվել են ս. Եփրեմի «Մեկնութիւն Արարածոց, մինչև ցՄնացորդսն»:

Ա հատորում հրատարակվել են.

1. **Տեառն Եփրեմի Խուրին Ասորւոյ, տեսութիւն յաղագս մեկնութեան Արարածոց** (10 գլուխ, էջ 1—131):

2. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Ելից** (7 գլուխ, էջ 135—196):

3. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Ղևտացւոց** (4 գլուխ, էջ 199—226):

4. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Թուոց** (5 գլուխ, էջ 230—262):

5. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Երկրորդ Օրինաց** (4 գլուխ, էջ 265—295):

6. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Յեսուայ** (4 գլուխ, էջ 299—322):

7. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Դատաւորաց** (մեկնութիւն գրոց ազգաց) (3 գլուխ, էջ 327—347):

8. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Ա և Բ Թագաւորութեանց** (7 գլուխ, էջ 351—412):

9. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Գ և Դ Թագաւորութեանց** (3 գլուխ, էջ 415—460):

10. **Սրբոյն Եփրեմի մեկնութիւն Ա և Բ Մնացորդաց** (3 գլուխ, էջ 463—495):

Եփրեմյան սույն մեկնություններից աչքի են ընկնում ոմանք «սքանչելի պերճախօսութեամբ, միւսն նուրբ և հոգեբուղխ քաղցրութեամբ» (էջ 5):

Ս. Եփրեմի մեկնողական վաստակը գնահատվում է որպես «շնորհաց Հոգւոյն սքանչելեօք հմուտ գրեալ խորոցն Աստուծոյ... ի վեր քան զբազումս... երևեցաւ խիտ առ խիտ անակնկալ խելամտութեամբ և սուր իմաստիւք, ի խրատականս քաղցրախօս և որպէս հայր յաղէտս որդւոց կարեկից և ի վարդապետութեան սքանչելի նրբութեամբ հանճարոյն զէն անպարտելի ողջամտաց ժամանակին և սուր երկսայրի այլաձայն բարբաջելոցն: Այլ նախանձելի օրինակ է նա ամենեցուն յորժամ զմայլեալ սիրով աստուածեղէն տառիցն սլանայ մտօք ի բարձունս վառեալ ի սէր Արարչին, մանաւանդ ուր առաքելականն նմա ի յուշ գայ իղձն եռանդուն երանելի ժամուն ընդ Փրկիչին միանալոյ» (Ա հատոր, էջ 6):

Ս. Եփրեմի հրատարակված աշխատությունների առաջին հատորի ձեռագիրը եղել է «բոլորագիր ընտիր, գրեալ ի ՉԽԸ (848+551=1399), և է գործ ճարտար գրչի»:

Իսկ «Յեսուայ, Դատաւորաց և Թագաւորութեանց» մեկնությունների ձեռագրերը եղել են նույնպես «բոլորագիր, գրեալ յերեքտասաներորդ դարու առ ժամանակօք Ստեփաննոսի Ռուպելեան» (Ա հատոր, էջ 6—7):

Ս. Եփրեմի մատենագրության վենետիկյան երկրորդ հատորը բովանդակում է՝

«Մեկնութիւն Համաբարբառ որ ըստ Զորից Աւետարանչաց և թարգմանութիւն առակաւոր բանից և աւետարանական ճառք» (էջ 5—479):

Երկրորդ հատորում հրատարակվել են.

1. **Մեկնութիւն Աւետարանի Համաբարբառ,** զոր արարեալ է տեառն Եփրեմի Խուրին Ասորւոյ (22 գլուխ, էջ 5—260),

2. **Թարգմանութիւն Աւետարանի,** զոր արարեալ է տեառն Եփրեմի Խուրին Ասորւոյ (էջ 261—345):

Սույն հատորի մեջ հրատարակվել են նաև ս. Եփրեմի «Ճառք աւետարանականք խորհրդաւորք», ըստ հետևյալի.

3. **Ի մարգարիտն Յայտնութիւն** ճառը (էջ 347—363),

4. **Յաղագս Յարութեան և հատոյ մանանխոյ** ճառը (էջ 363—368),

5. **Յաղագս որ ունի զհարսն, փեսայ նա՛** է ճառը (էջ 369—429):

Երկրորդ հատորի ձեռագիրը եղել է «գրեալ ի Հաղբատ ի թուին ՈԽԴ (644+551=1195), բոլորագիր անհարթ, այլ ոչ թերի, յերկիւղած հաւատարմութենէ գրչին»: Ձեռագրի հիշատակարանում հիշվում է անունը Հաղբատի վանքի միաբան «Անանիա ոմն վարդապետի, ի լուսաւորութիւն հաւուրց աշխարհի, զորմէ չունիմ ասել հաւաքող մատենի՞ս իցէ արդեօ՞ք եթէ՝ թարգմանիչն»:

Սույն ձեռագրի մեջ ս. Եփրեմի «աւետարանական ճառ»-երից հետո եղել են նաև երեք այլ ճառեր, «յԵնովք և յԵղիա», «Վասն երաշտի և վաշխառուաց» և «Առ Յովսէփ», որոնք չեն մտել սույն երկրորդ հատորի մեջ, բայց «ի հատոր ճառիցն խառնեցաք ի տպագրութեանս, անիսաւն զաւետարանական մեկնութիւնս բանից յայլոցն կալեալ» (Ա հատոր, էջ 7):

Ս. Եփրեմի մատենագրության երրորդ հատորը պարունակում է **«մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պաւղոսի»:**

Հատորի բովանդակությունն է.

1. **Մեկնութիւն առ Հռովմայեցիս** զոր արարեալ է տեառն Աբրայի և Խորին Ասորւոյ ասորւոց ճրագի:

Պողոս առաքյալի Հռովմայեցվոց գրած թղթի 16 գլուխների մեկնությունն է սա (էջ 7—50):

2. **Մեկնութիւն Կորնթացիս առաջին** (16 գլուխ, էջ 52—85):

3. **Մեկնութիւն Կորնթացիս երկրորդ** (13 գլուխների մեկնություն, էջ 86—116);

4. **Մեկնութիւն Կորնթացիս երրորդ** (Կորնթոսի եկեղեցու երեցների թուղթն է սա, որը ուղարկվեց երկու սարկավագների կողմից Պողոսին, Կորնթոսում տիրող վիճակի մասին):

Կորնթացվոց երրորդ թուղթը չի մտել Նոր Կտակարանի կանոնի մեջ (էջ 116—123), «որ ցարդ չերևեցաւ ուրեք բաց ի հայ թարգմանութենէն զոր ունին ամենայն գրոչագիր օրինակք Աստուածաշնչիցն մերոց, թեև առ մեզ ընդ անհարազատս դասեալ է, որպէս և առ լատինս և առ յոյնս» (էջ 9):

5. **Մեկնութիւն առ Գաղատացիս** (էջ 124—137):

6. **Մեկնութիւն առ Եփեսացիս** (էջ 138—153):

7. **Մեկնութիւն առ Փիլիպեցիս** (էջ 154—173):

8. **Մեկնութիւն առ Թեսաղոնիկեցիս Ա և Բ** (էջ 174—193):

9. **Մեկնութիւն առ յԵբրայեցիս** (էջ 194—233):

10. **Առ Տիմոթէոս Ա և Բ** (էջ 234—258):

11. **Թուղթ առ Տիտոս** (էջ 259—265):

Ս. Եփրեմի մեկնողական վաստակի երրորդ հատորի ձեռագիրը, որը պարունակում է Պողոս առաքյալի 14 թղթերի մեկնությունը, գրվել է «ի թուիս ՆԽԸ (448+551=999) բոլորագիր է հին, ի ձեռն Սիմէոնի ուրումն վարդապետի, զոր նա ինքն գաղափարեալ է յայլ ստոյգ և ի հին օրինակէ իմեքէ յԱրծրունեաց գաւառի, ի թագաւորութեան Գագկայ որդւոյ Աշոտի և Կուրապաղատութեան Դաւթի» (Ա հատոր, էջ 9):

Ս. Եփրեմի մատենագրական վաստակի մեջ կարևոր տեղ են գրավում նաև նրա **«Ճառք և Աղօթք»** գրվածքները, որոնք ամփոփվել են վենետիկյան հրատարակության չորրորդ հատորում:

Ս. Եփրեմի «Աղօթից գիրք»-ը, որի մասին խոսվեց վերևում, ունեցել է բազում հրատարակություններ, իսկ մեզ հասած ձեռագրերը «ոչ միախուռն ամփոփ գտանէին և ոչ ժամանակք գրութեան նոցա» ստույգ:

Զանազան ձեռագրերում տարբերվում են նաև ս. Եփրեմի «աղօթքների» թիվը ու քանակը, որովհետև «զթիւ նոցա բազմաթիւ են» (Ա հատոր, էջ 9):

Ս. Եփրեմի մատենագրական չորրորդ հատորը բովանդակում է նրա «Ճառք և աղօթք» աշխատությունները: Սույն հատորը բաղկանում է 281 էջերից և ընդգրկում է հեղինակի ճառերն ու աղոթքները՝ ըստ հետևյալների.

1. **Ի Ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ** (էջ 9—34):

2. **Ի Գալուստն Տեառն ի տաճարն քառասնօրեայ և ի ծերունին Սիմէոն** (էջ 35—44):

3. **Ի Գալուստն Փրկչին յԵրուսաղէմ և ի սուրբ տօնն բարեբանութեան** (էջ 45—60):

4. **Ի Յարութիւն Փրկչին մերոյ** (էջ 61—62):

5. **Յայլակերպութիւն Տեառն** (էջ 63—68):

6. **Ներբողեան,** ասացեալ ի սուրբ Խաչն աստուածընկալ (էջ 69—78):

7. **Յենովք և յԵղիա** (էջ 79—97):

8. **Առ Յովսէփ** (էջ 98—106):

9. **Յապաշխարութիւնն Նինուէացւոց** (էջ 107—124):

10. **Ի յիշատակի սրբոց Մակաբայեցւոցն,** ասացեալ վասն կերակրոց զոր ուտեն հաւատացեալք առողջ մտօք (էջ 125—128):

11. **Ներբողեան,** ասացեալ պատմագրաբար ի սուրբն Յովհաննէս Կարապետն և Մկրտիչ Յիսուսի Քրիստոսի և ի կաքաւումն Հերովդիադայ (էջ 129—142):

12. **Ի սուրբն Ստեփաննոս նախավկայն Քրիստոսի** (էջ 143—149):

13. **Ի վկայսն Արևելից** (էջ 150—152):

14. **Ի Յարութիւն մեռելոց** (էջ 153—158):

15. **Վասն դատաստանին և միւսանգամ գալստեան** (էջ 159—167):

16. **Յաղագս ապաշխարութեան ի Պահս քառասնորդաց** (էջ 168—178):

17. **Յորդորումն պահոց** (էջ 179—183):

18. **Յորդորումն ապաշխարութեան** (էջ 184—195):

19. **Յայն ճառէն որ վասն երաշտի և վաշխառուաց** (էջ 196—210):

20. **Վասն քնոյ և արթնութեան** (էջ 211—212):

21. **Ի նոյն գրոց վասն հսկողաց** (էջ 213—214):

22. **Յաղագս խոնարհութեան** (էջ 215—219):

23. **Վասն խորհրդոց մաքրութեան, չպահոց և աղօթից** (էջ 220—225):

Չորրորդ հատորի 227—276 էջերում հրատարակվել են «Սրբոյն Աբբայ Եփրեմի Խորին Ասորւոյ Աղօթք», Ա մաս, 14 աղոթքներ (էջ 227—252) և Բ մաս, որը չունի ոչ մեկ բաժանում և սկսվում է այսպես. «Տէր երկնի և երկրի, իշխան մահու և կենաց, դատաւոր կենդանեաց և մեռելոց, Քրիստոս Աստուած յոյս և ապաւէն հոգւոյ իմոյ»:

Սույն հատորի 252—276 էջերում տպագրվել են ս. Եփրեմի տարբեր գործերից **հատուածք,** ուր դարձյալ կան 8 գլուխ աղոթքներ:

277 էջից սկսվում են դարձյալ ճառերը, այդ թվում՝ Ճառ զղջման, ի կտակէն, վասն ննջեցելոց (էջ 277—281):

Վերջին էջում հրատարակված աղոթքների և ճառերի ցանկն է:

Ս. Եփրեմի չորրորդ հատորի աղոթքներն ու ճառերն ընտրված են «հնագոյն և ընտիր յօրինակացն»:

Ս. Եփրեմի մատենագրության «հայկական թարգմանության մեջ պահվածներն ըստ կարգի տպագրին մերո, որ ի 1836», ներկայացված է նաև «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 445—466, աշխատության մեջ:

Սուրբ Եփրեմի տպագրված գործերի մեջ հիշվում են նաև՝

1. Յակոբ Տեառնեղբայր, գրգուկս այս պատմէ նախ վասն գաղտեան Յիսուսի Երուսաղէմ..., Կ. Պոլիս, 1703, 212 էջ: Սույն գրքի 147—210 էջերում զետեղված է Եփրեմ Խուրին Ասորու «Յաղագս ապաշխարութեան ճառը», «ասէ, երանելի մարգարէն Եզեկիէլ» սկզբնաւորութեամբ, «հատուածք ի ճառընտիրս»[29]:

2. 1704 թվականին կատարվել է վերոհիշյալ գրքի մեջ ս. Եփրեմի սույն ճառի երկրորդ հրատարակությունը Հակոբ Տեառնեղբոր կտակգրքի վերջում[30]:

3. Հակոբ Տեառնեղբոր կտակգիրքը երրորդ անգամ հրատարակվել է դարձյալ Կ. Պոլսում, 1710 թվականին, 168 էջ: Սույն տպագրության 119—165 էջերում հրատարակվել է նույնպես Եփրեմ Ասորու «Յաղագս ապաշխարութեան» վերնագրով միևնույն ճառը[31]:

Բացի այս հրատարակվածներից, կան բազում այլ գրվածքներ ս. Եփրեմի «ի յոյն և յասորի բարբառոք, որ տակաւին չգտան ի մեզ: Իցեն և ի մերոց աստի ոչ սակաւք, որ թերի են առ նոսա, որով և դպրութեանս մերոյ յաճախին պարծանք առ այլս ազգաց» (Ա հատոր, էջ 12):

Ս. Եփրեմի գործերի հայերեն թարգմանության տպագրված «հատուկտորներ» կան նաև «Կնիք հաւատոյ» ժողովածուում՝ ըստ հետևյալի.

ա) **Յանհասութիւն** (էջ 4—7) «կամիմ մերձեալ և երկնչիմ»...:

բ) **Ի Բանէն որ ի սուրբ Կոյսն** (էջ 245—246): (Սպասաւորեաց Կոյսն ի ձեռն անապականութեանն Քրիստոսի, պահեաց միշտ զկուսութիւնն... և եղև մայր անապականութեան):

Ի Բանէն, որ յաղագս մարգարէին (էջ 246):

Նորին՝ լոյս սպասաւորեաց բնութեամբ աստուածութեանն, վասն այնորիկ և բնութիւն անապական ետ նմա:

գ) **Ի Բանէն, որ վասն շնորհացն** (էջ 257—258):

դ) **Ի Բանէն վասն սգաւորաց և յարութեան և դատաստանի:**

Ի Բանէն՝ որ հանապազ անարգէ զՈւռհայ (էջ 299—300):

Ս. Եփրեմին է վերագրվում նաև Հնգամատյանի, Սաղմոսաց, Երկոտասան մարգարէից, Եզեկիելի, Եսայիի, ինչպես նաև «Եօթն թուղթ Կաթուղիկէից» թղթերի մեկնությունը, ուր նշվում է, որ նա եկեղեցու «ԻԱ (21) արանց կատարելոց» կոչված մեծավաստակ հայրապետներից մեկն է որպես մեկնիչ[32]:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ է կատարում հիշատակը ս. Եփրեմի: Առաջինը հոկտեմբերի 27-ին, «Սրբոց Երկոտասան վարդապետաց» տոնին (Օրացույց 1974, ս. Էջմիածին, էջ 128) և դեկտեմբերի 22-ին, «Սրբոցն Բարսղի հայրապետին և եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, և Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին» տոնի օրը (Օրացույց, նույնը, էջ 147):

Ս. Հովհան Ոսկեբերան հայրապետը սպառիչ կերպով է բնութագրում ս. Եփրեմի օրինակելի կյանքն ու բազմաժանր մատենագրական վաստակը.

«Մեծն այն Եփրեմ ասորի, զարթուցիչ թմբրեցելոց, մխիթար տառապելոց, երիտասարդաց խրատ և հրահանգ, հայելի միայնակեցաց, առաջնորդ ապաշխարողաց, տէր և նիզակ հերետիկոսաց, ասպնջական առաքինութեանց բնակարան, և օթևան Հոգւոյն սրբոյ»[33]:

---

[29] Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, նույնը, էջ 57:

[30] Նույնը, էջ 59:

[31] Նույնը, էջ 68—69:

[32] Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատոր Ա, Երևան, 1959, էջ LVIII—LIX:

[33] Լիակատար վարք..., նույնը, էջ 394:



ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ*

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ

[Հավատացյալներին տրված հոգեձիր պարգևների խոստումը և անհավատներին՝ պատիժների սպառնալիքը]

510. Եվ ահա գալիս բոլորին սպասարկում է և ահավասիկ մինչև ձեզ է հասել: Ահա լի են այս թագավորի շտեմարանները և պատրաստ են արբեցնող մատուռակները, բաժակները դրված են մատների մեջ և [պալատի] դահլիճներում (տաճար) դասավորված են կոչունքի սեղանները: Քաղցը ըմպելին և ուրախության անուշ գինին պատրաստել է ամենքի համար, որոնք կամենում են այն ըմպել հավատով: Պատրաստել է նաև չար խավարի դառնության մրուրը՝ չարերի ըմպելին, որն այրում է մինչև կործանում:

511. Արդ, ինչ որ կամենաք ըմպել, պատրաստ է երկու ձևով ձեզ մատուցվելու: Խմեցեք իմաստությունը և ոչ անմտությունը, ողորմությունը և ոչ բարկությունը, քաղցրության հավատը և ոչ անհավատության երկմտությունը՝ չարության այրիչ հուրը, որ տոչորում է գեհենում և տանում դեպի խավար, այլ [խմեցեք] բաժակների հուրը, որ լուսավորելու է ձեզ այն ըմպելու ժամանակ և այրել տանելու է ձեր տգիտության մեղքերի ժանգը, իսկ ձեր անձերը փրկելու է ձեր հավատի հույսով:

512. Երանելի առաքյալները խմեցին, արբեցին և ուրախ եղան և երկու բաժակով արբեցրին ամբողջ աշխարհը՝ նրանց, ովքեր խմեցին ինչ կամեցան: Ահավասիկ տգիտության հիմարությունը ձեզ արբեցրել է և [տվել] մահու բաժակը թույնով խառնված: Արդ, վերցրեք հավատով արբեցեք ձեր հոգիների կենաց բժշկության բաժակից, որպեսզի փրկությամբ ազատվեք այրվելուց, որը գալիք է:

513. Ահա պատժի, պատուհասի բաժակը հասել է ձեզ [սակայն] առեք խմեցեք խաղաղության բաժակը, որը լի է օգտակարությամբ: Ծարավ եղեք ապաշխարության, որպեսզի ձեր վրա լցվի ուրախության մխիթարությունը: Խմեցեք որդեգրության հոգին և ոչ հոգին պղծության, որով արբեց Շավուղը (Սավուղը) և տարագրվեց: Խմեց Դավիթը և մտավ իր Տիրոջ ուրախության մեջ:

Նույնպես և դուք [կմտնեք], եթե միայն կամենաք: Ուրախարարը բարերար է, նա ձեզ է ուղարկել այս առաքյալներին, որոնք եկան ուրախացնելու, բերին երկու բաժակ՝ մինը սպառնալիքների և մյուսը՝ ուրախությունների:

514. Քանզի նա, որ իր տասներկու [աշակերտներին] առաքեց ամբողջ երկրի մեջ

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի № № Դ, Զ—Է-ից:

որպես մատուվակների, նույնը և ձեր մեջ առաքեց իր այս վկաներին: Բայց որովհետև դուք արբեցած էիք ձեր մեղքերի մոլորությամբ, ձեզ արբեցրին ձեր վրա հասած պատուհասի մրուրով, որպեսզի իրենց մահվամբ ձեր մոտ մատուվակներ լինեն Աստուծո ավետիսների ճշմարտության: Նրանք քարոզեցին իրենց նեղություններով և լցրին իրենց արյունը երկու բաժակի մեջ, որպեսզի զգուշացնեն ձեր սրտերի կուրության, անմտության համար և դարձյալ պատրաստեն սույն բաժակները ձեր ուրախության համար, որպեսզի [իրենց] մահվան միջոցով ուրախացնեն ձեզ կենդանության բաժակներով, որից իրենք խմել էին:

515. Քանզի տեսան Տիրոջը և արարածների Արարչին, որը ինքնակամ իր ցանկությամբ խոնարհվեց խոնարհության բաժակի ու մահու անարգության և ինքնահոժար խոնարհությամբ խմեց չարչարանքի բաժակի համբերությունը: Դրա համար ճշմարտության և նրա Աստվածության բոլոր ճշմարիտ վկաները իրենց անձերը նեղության մատնեցին, որպեսզի իրենց նեղություններով ու վշտերով, որ կրեցին, վկաներ լինեն նրան, որ կամավոր կերպով կրեց այն՝ մեր անարգությունը վերացնելու, մեր չարչարանքները հանձն առնելու և իր հանելի կամքով մեր մահվան հատուցումը տալու համար: Քանզի, ինչպես կամեցավ, ինչ կամեցավ, կատարվեց և ինչպես կամեցավ գործեց: Նա մեր հողեղեն բնությունը հագավ և միաձուլեց անխառն Աստվածությանը, որպեսզի մեզ տա իր անմահությունը, անվշտությունը և անչարչարությունը: Ապականացու մարմինը խառնեց Աստվածության անապականությանը, որպեսզի մեր բնությունը անապական դարձնի:

516. Այս արդարները ցանկացան իրենց մահվամբ վկաներ լինել Տիրոջ մահվան, որն իր մահվամբ կենդանացրեց արարածների մեռելությունը: Քանզի մեր մահը ցանկալի դարձավ մեր Աստուծո մահվամբ. որ մեզ համար խմեց մահվան բաժակը և մեզ տվեց խմելու անմահության բաժակը: Վասն զի այս մահը ժամանակավոր է, որ մյուս անգամ նորոգվենք, անփոփոխ, մշտնջենական կյանքի, հարության փառքի մեջ: Ինչպես Տերը ինքն ասում է իր սուրբ Ավետարանում, թե «Արդարև ասում եմ ձեզ, եթե ցորենի հատը երկիր չընկնի և չմեռնի, լոկ միայն հասկ կմնա, բայց մեռնելով, բազմապատիկ կփառավորվի և առատ բերքով կպտղաբերի»[332]:

[332] Տես Յովհ. ԺԲ, 24:

[Վարձատրության և պատժի հատուցումը ըստ յուրաքանչյուր գործի]

517. Իսկ ամենայն երկրային էակների կյանքը նման է երկրաբույս արմտիքի մշակության կյանքին, քանզի նախ սերմը արգանդի մեջ սերմանում է, ապա մարդահասակ ծառանում, ծաղկում Աստվածության պատկերով: Ինչպես վերևում ասել ենք, թե «Մարդն ըստ Աստուծո պատկերի ստեղծվեց»[333] իմաստությամբ, բանականությամբ, ինչպես արդեն պատմել ենք նրանց կյանքը, ովքեր օրինակելի են եղել:

518. Արդ, մարդը սկսեց երկիրը վարել ու սերմանել, քանզի հրաման էր եղել, թե «ինչ վարի մարդը, նույնն էլ կհնձի»[334]: Սույն [խրատը] տվեց, որպեսզի մարդիկ խելամիտ լինեն և հայտնի [աստվածներով] լմբռնեն, որ պետք է սերմանել և հնձել այն, ինչ ծածկված և աներևույթ է, որպեսզի հույսով ստանան պատրաստված պաշարները, որ եթե մարդ վաստակի աստվածապաշտության պատվիրաններով, հանդերձյալ [կյանքում] կստանա պտուղները:

519. Այսպես է մշակությունը, քանզի նախ [մշակները] վար են վարում ցելում, կակղացնում, հերկում սևակոշտ երկիրը ակոսաձիգ պատառելով պարարտացնում, սկզբից քրտնաբեր աշխատությամբ մոլեբույս արմատները ընդ վայր կտրելով (արգելելով) սիզաբույս բանջարեղենի տարապարտ աճումը, ապա սերմանում են օգտակար ցանքի սերմերը:

520. Այսպես է և Ավետարանի քարոզությունը: Նախ և առաջ պետք է կտրել, հեռացնել [մարդու] անձնական ավելորդ բուսած անարժան սովորության կամասեր, կամապաշտ, ինքնակամ մեղքերի պատժապարտության պարտքերը: Այդ բոլորը այժմ ձեզ մոտ տեսնում ենք: Եթե ձեր մրտքերից չխլեք հանեք կորուսիչ մեղքերի ավելորդ բուսած վնասակար արմատները, որոնք ձեր մեջ հիմնավորված են ու ձեր մտքերում ճյուղավորված, և խանգարելով ծաղիկներին ու թույլ չտալով պտղաբերել, նույնիսկ գոսացնում են նրանց և ձեզ գցում անօրենության տարակույսի մեջ և կամ ապառաժ անջուր տեղ, որը թեպետ և մարդ վարի, այսուհանդերձ ամուլ և անպտուղ կլինի, նույն ձևով և դուք, եթե ձեզանից չհանեք ձեզ սնուցող սովորությունները, չեք կարող ընդունել սերմը, որը ձեր մեջ օգտակար պտուղ կտա:

[333] Ծննդ. Ա, 26:
[334] Գաղատ. Զ, 8:

[Սնոտի կուռքերի պաշտամունքի ունայնությունը և հեթանոսների մշտնջենական դատապարտությունը]

521. Արդ եղբայրներ, իմաստուն մտքով նայեցեք ձեր անձերին (հոգիներին) և խորհուրդ արեք դուք ձեր մասին, խորհեցեք և տեսեք ձեր անձերը, քանզի Աստված՝ գթած ու մարդասեր, ձեզ այցի է ելել ու տեսել և չի կամենում ձեր կորուստը, այլ վաղագույն պատուհասների ապառնալիքով ձեզ կոչ արեց ապաշխարության դուռը մտնել, որպեսզի ապրեք և չմեռնեք: Քանզի մարդիկ, որոնք արժանի չեն փնտրվելու, իրենց կյանքն անցկացրին հեթանոսության մեջ, արժանի չեղան իրենց անձերը (հոգիները) գտնելու և չկամեցան ճանաչել իրենց Արարչին, ապա Աստուծո առաջագետ իմաստությունը լքեց նրանց, որոնք նրա հրամաններին չէին անսացել, այլ ձեղվեցին իրենց համար կանխավ պատրաստված տանջանքներով:

522. Արդ դուք պարտավոր եք ձեր մրտքերի անդաստանները կակղացնել և գայթակղեցուցիչ մեղքերը ձեր անձերից հեռացնել, քանզի դրանք խափանում են ձեր մեջ արդարությունը բուսնելուն: Դրանք են կռապաշտության սովորությունները, որոնք նախնիներից հասնելով, մոլորեցրել են. դուք եղել եք քնի մեջ, թեև արթուն [վիճակում] և հիմար ու անմիտ: Սրանք (աստվածները), որոնք ոչինչ իսկ են, ոչ օգուտ ունեն և ոչ որևէ վնաս, ձեզ քարշ տվեցին առանց որևէ օգուտ տալու, այլ միայն [տարան] ունայնության, սնոտության և տարապարտ անօգտակարության: Օգուտ չունեն, քանզի անշունչ են, անիմաստ, անփոփոխ ու անշարժ: Ոմանք կոփածո են, ուրիշները՝ կռածո, ոմանք խարտոցած, ուրիշները՝ ձուլածո, հնարված են ճարտարամիտների կողմից և ստեղծված վնասելու համար: Իզուր աշխատանք են թափում նրանք, որ պաշտում են նրանց: Նրանք չեն կարող վնասվել նրանցից: Ոչ էլ լվին կամ ճանճին, որ անօգուտ բնակվում է մարդու վրա, նրանք կարող են քշել, հանել իրենց պաշտողների տնից: Ոչ էլ սարդերին, որոնք նրանց պատկերների (արձանների) վրա ելևէջ են անում և նրանց գլուխների վրա իրենց ոստայնն են ձգում, կարող են իրենց վրայից մաքրել, այլ ժանգից կերված, փոշոտած անօգուտ մաշվում են:

523. Քարեղեն պատկերները (արձանները) ծածկվելով քարաքոս ժանգով, զազրանալով, կանաչելով, գունատվելով և անփույթ թողնվելով տգեղանում են: Փայտեղեն պատկերները որդերի հարձակման ենթարկվելով, որդակեր լինելով, մաշվում են: Իսկ հանդերձները, որ նրանց վրա գցված են, ապա ցեցակեր, ապականված, փխրված, եղծված, մաշված լինելով, ապականվելով, կորչում են: Քանզի, եթե նույնիսկ նրանցից մեկին անմտությունն ստիպի հոգ տանել ընդ ունայն իր անասունները մորթելով, որպես զազրելի ճենճահոտով և պիղծ ապականությամբ զոհ, այսուհանդերձ նույն խորովվածի խանձահոտ մուրն ու ծուխը գալով պատելու ու քսվելու են նրանց, ածուխի նման սևացնելով և այլագույն դարձնելով: Իսկ ծախսը և աշխատանքը նրանց վրա անշահ և անօգուտ կլինի:

524. Այս ամենն ըմբռնելուց հետո, դեռ աճապարում եք վնասել օգտակար գործին և ձեզ համար հավիտենական տանջանք պատրաստել, անշեջ հրի և անմահ որդի մոտ գալով, վասն ոչնչի: Թողնելով ձեր Արարչին, անմոռուն [կուռքերի] պատճառով բարկացնում եք ձեր Աստծուն: Դուք փուշ սերմանեցիք փոխանակ ցորենի և որոմ փոխանակ հաճարի ու փոխանակ պարարտ երկրի, անօգուտ, անպտուղ ապառաժն ընտրեցիք:

525 Արդ տեսեք ահա դուք [ձեզ] հանդիման կանգնած եք: Ո՞վ ձեզանից առաջ գալով պատասխան կտա [ասելով], թե լսած լինի ձեր պատկերների ձայնը կամ նրանցից հայտնապես չնչին օգուտ տեսած լինի, թեկուզ և սակավագույն չափով տեսանելի: Բայց միայն երազներով և ցնորքի պատիր խաբեությամբ, որոնք ոչ մի բանի պետք չեն, միայն դրանցով կորցրեցիք ձեր հոգիները և կտրվեցիք Արարչից:

526. Արդ դրանք, որ անօգտակար և ոչինչ են և ոչ ոքի պիտանի, կտրեցեք, խզեցեք, ձեր անձերից (հոգիներից) դուրս հանեք ցամաքած, գոսացածը, ընտրելով ոչ թե այն, որ խեղություն [կպատճառի], այլ այն, որ կտա պինդ առողջություն և դարման ձեր անձերին: Այն մարդու նման, որ դուրս թափելով դառնության մաղձը և մաղասը (խորխ), թեթևանում է ախտից և առողջանում, այդպես և դուք, եթե անօգուտը թողնեք, ձեր անձերին օգտակարություն կգրտնեք, հավիտենական տանջանքի դատաստանից ազատվելով: Քանզի կռապաշտության սերմերը ձեզ գեհենի անշեջ հրի մեջ կնետեն, որտեղից փրկության հնար չկա. այսպիսին է նրա պտուղը:

[Քրիստոսին հավատացողների հավիտենական փառքը մարմինների հարությամբ]

527. Իսկ Աստծուն՝ ամենայնի Արարչին ճանաչելու բարեպաշտության ճշմարտությունը, որպես պտուղ է բերում ուրախու-

թյունների հավիտենական մշտնջենավոր արքայությունը և տալիս նրանց, ովքեր նրան ճանաչում են: Ձեր անօրենությունների սերմը փոքր ի շատե հայտնի դարձավ ձեզ՝ պատուհասների որոմի բույսերը, որպեսզի գիտակցեք, որ պետք է դրա հասկը կտրել, որը հետագայում մեծանալու է և ձեզ է հասնելու, եթե դուք վաղորոք սրբված չլինելով ի վիճակի չլինեք որոմը ցորենից տարբերել:

528. Քանզի մյուս անգամ այլ ժամանակ կգա վարելու և հնձելու՝ վարելու գերեզմանում և հարությամբ կրկին հնձելու յուրաքանչյուրի վաստակած գործերը: Մի լինեք գոսացածի նման, որին անշեջ հուրն է գրտնելու և իր կերակուրն է դարձնելու: Այլ ձեր Տիրոջը մատուցեք հարգի [նվերներ]՝ դալարությամբ ծաղկած անուշությունը ձեր մրգավետ առատ պտուղների: Որպեսզի մյուս անգամ ձեզ գերեզմաններից դուրս բարձրացնի, լինեք ցորենի նման և ձեզ օրհնությամբ ընդունի արքայության շտեմարանները, որ ձեզ տրված մեկի դիմաց բազում [պտուղներ] բերեք: Քանզի, ինչպես հունձի ժամանակ, որոմը ընտրում են ցորենից և հուրը նետում, նույն ձևով էլ հանկարծակի մի ակնթարթում մարդիկ ելնելու են գերեզմաններից: Նրանք իրենց հոգիներում ընդունելու են Աստվածությունը իր պատվիրաններով հանդերձ և լիքը ցորենի նման բուսնելու են պարարտությամբ:

529. Եվ ինչպես մերկ հատիկը երկիր ընկնելով, բուսնում է, արմատ առնում, ցողուն բերում, ճյուղ արձակում, ծունր է կապում, ուռճանում, դառնում աղեցուն հասկերով, մեկ հատիկի դիմաց բազում արտադրելով, պատրաստում սերմանողի օգտագործման համար, նույնը և այստեղ ենք տեսնում:

Արդարների հոգիները գերեզմաններից ելնելու են, նույն մարմինները նույն հոգով և արդարության գործերը կատարելով, վերանալու են գերեզմաններից [երկնքի] արքայությունը: Ամեն մի փոքրիկ, ամեն մի միայնակ անձ բյուր և հազար անթիվ պայծառագույն հատուցում է ստանալու: Ապա երբ հառնեն, փառք են զգենալու, ինչպես հասկը, որ իր լիությունն է ցույց տալիս և խնամքով հավաքվում շտեմարաններում:

530. Նույնպես և փուշերը, որոնք մեղավորների հասկերն են ներքուստ պատում, վեր են բարձրանալու, ապա կերպարանք առնելով, կարծես մորից, անօրեն գործերի պտուղներ են բերելու: Ինչպես հոգևոր երգարանում [սաղմոսերգուն] նվագում է այդ մասին, թե «հուր ընկավ, իսկ նրանք չտեսան արևը, նախքան որ նրանք ընկատեն իրենց փուշերը, կենդանի [էակի] բարկությամբ փուշի նման նա կհրկիզի նրանց»[335]:

531. Եվ կամ ինչ է, որ ասում են «նախքան որ նրանք ընկատեն իրենց փուշերը»[336]: Այսինքն անհոգ դատարկության մեջ գործում էին մեղքերը, քանի դեռ չգիտեին հանցանքները, իսկ տանջանքները առաջվանից պատրաստված էին: Ապա այլ տեղում ասում է, թե «իր օրվանից առաջ նրան ցավեր են պատահելու ջրերի նման»[337]: Ինչպես սկզբում փուշերը բուսան մեղավորների հանցավորության պատճառով, նույնպես և հանցավորներին պատելով, աճելով, լուցկի դառնալով, բռնկվելու և այրելու են նրանց: Իսկ ձեզ, ահավասիկ, ազդարարելով կանխեց, որպեսզի դուք ազատվեք այն ահագին հրո հեղեղից, որպեսզի ձեր մեջ սուրբ սերմերը ցանվեն և ոչ այրելի փուշը:

[Այս կյանքում զղջացողների թողություն գտնելը և չզղջացողների աններելի պատուհասը]

532. Արդ «մարդու որդիներ, մինչև երբ եք խստասիրտ լինելու, ինչու եք սիրում նանրությունը և փնտրում ստությունը»[338]: Ճանաչեցեք աստվածագործ հրաշքները, որոնք ձեզ մոտ երևացին: Որպեսզի այսուհետև ճշմարտությունը չթողնի աշխարհի ամենայն բնակիչներին և որ երկրի բոլոր ազգերը ճանաչեն նրան և նրան ծառայեն մի լծի տակ:

533. «Խզեցեք, ասում է, նրանց կապանքները և մեզանից դեն գցեցեք նրանց լուծը»[339]: Արդ խզեցեք հեթանոսության կապանքները ձեր հոգիներից և ազատվեցեք անցած մեղքերից, ուրախակից լինելով նրանց, որ ծիծաղում են ամբարիշտների կորստյան վրա, ինչպես Իմաստության [Գիրքը] ասում է հանդերձյալ գալիքներին, թե «այսուհետև ես պիտի ծիծաղեմ ձեր կորստյան վրա»[340] և թե «նա, որ բնակված է երկնքում, ծիծաղելու է նրանց վրա և ինքը Տերը արհամարհելու է նրանց: Այնժամ նրանց հետ խոսելու է իր բարկությամբ և խռովեցնելու է իր սրտմտությամբ»[341]: Այս իսկ է կշտամբության և հանդիմանության ժամանակը, քանզի Աստուծո որդին Հորից՝ իր ծնողից առել է իշխանություն դատելու

---

335 Սաղմ. ԾԷ, 9—10:
336 Սաղմ. ԾԷ, 10:
337 Յովհ., ԻԷ, 20:
338 Սաղմ., Դ, 3—4:
339 Սաղմ., Բ, 3:
340 Առակ, Ա, 26:
341 Սաղմ., Բ, 4—5:

ամենքին: Ովքեր Հորը չեն պաշտում, դատում է նրանց, իսկ ովքեր Որդուն կամ Սուրբ Հոգուն [չեն պաշտում] տանջում է նրանց:

534. Ձեր Հոր մասին Որդին նախապես ասաց. «Ես նրանից թագավոր կարգվեցի պատմելու Տիրոջ հրամանները, հովվելու ձեզ երկաթի պնդությամբ գավազանով»[342] և որպես կավեղեն անոթ, փշրել նրանց, որ անհնազանդությամբ դիմադարձ են լինում փրկությանը, քանզի մարդիկ կավեղեն անոթներ են: Արդ, ովքեր պիտանի են, նրանց պատվական գանձերով է լիացնելու, իսկ ովքեր անպիտան են, նրանց տանջելու է և կորուստով լիացնելու: Քանզի Տերը իր սուրբ ամպերից նայում է այցելելու մարդկանց ամենայն անօրենությունները «արդ՝ թագավորներ ի միտ առեք, ամենքդ, որ դատում եք երկիրը, խրատվեցեք: Երկյուղով ծառայեցեք Տիրոջը և նրա դիմաց դողությամբ ցնծացեք: Ընդունեցեք նրա խրատը, որ Տերը չբարկանա և դուք չկորչեք արդարության ճանապարհից, քանզի նրա բարկությունը բորբոքված է ձեր վրա»[343]:

535. Իսկ երանի լինի ձեզ, եթե կարողանաք աղաչել Տիրոջը և հուսաք նրա փրկության մեծ ողորմությանը: Նա թողություն կտա ձեզ ու կշնորհի ձեր հանցանքները: Ապա եթե համառեք, կփշրի համառող ամբարիշտների ատամները նրանց բերաններում և ձեզ հավիտենական տանջանքների կմատնի: Իսկ ոչ մի օգուտ չունի այն զղջումը, որ այնտեղ նրանց միտքն է գալիս: Տես, ի՞նչ է գոչում մարգարեն «ոչ ոք դժոխքում քեզ չի խոստովանի և ոչ ոք այն մահվան ժամանակ կհիշի քեզ»[344]: Քանզի այնուհետև ոչ ոք կարող է անցնել հաստատ դրված սահմանը:

536. Իսկ ողորմություն ստանալու համար ապաշխարության ժամանակը այժմ այս է, ըստ մարգարեի «Աստված արդար դատավոր է, հզոր ու երկայնամիտ, և իր բարկությունը ընդմիշտ չի երկարեցնի»[345]: Ապա այլ ինչ ասի արդյոք «քանզի եթե դարձի չգան, ապա իր սուրը սրված է և աղեղը լարված ու նրանց համար պատրաստված են մահվան գործիքները, հրեղեն նետերը գործի են դրված նրանց համար, ովքեր անօրենություն են երկնում և նրանց հղությունից ասում է, ցավեր կընծնվեն»[346]: Իսկ նրանց, որ լսելով հավատան հրաշքներին և Աստծուն ու Արարչին դարձ կատարեն և պաշտեն նրան, այսպես է ասում. «Քաջալերվիր երկիր, խնդա և ուրախ եղիր, քանզի Տերը մեծամեծ գործեր արեց ձեր մեջ»[347]: Այն մարդիկ, որ իրենց Արարչին չեն ճանաչում, նրանք անասուններ են համարվում, որոնց հետ խոսում է իբրև վայրի կենդանիների (երեների), «մի վախեցիր ասում է վայրի երե, քանզի քեզ համար արոտավայրեր են բուսել դաշտերում և առապարներում»[348]: Քանզի անապատից էլ անպտուղ էին մարդկանց սրտերը և դաշտերից ևս անջրդի:

537. Արդ այդի է կոչում ընտանի[349] [կենդանիներին] և թզենին՝ պտղաբեր իր քաղցրության մեջ, ըստ աստվածապաշտական խոսքին, որն ասում է, թե «քանզի քո խոսքերը իմ քիմքին ավելի քաղցր են, քան մեղրը իմ բերանին»[350] և դարձյալ թե «քաղցր ես դու Տեր և քո քաղցրությամբ սովորեցրու ինձ քո արդարությունը»[351]: Եվ դարձյալ մարգարեն աստվածապաշտներին գոչում է և ասում. «Կալերը պիտի լցվեն ցորենով, գինու ու յուղի հնձանները պիտի զեղան: Ես հատուցելու եմ այն տարիների փոխարեն, երբ մորեխը, ջորյակը և ժանգն (որդ) ու թրթուրը կերան: Դա իմ զորքն էր, որ առաքեցի ձեր վրա. կուտեք, կվայելեք և կօրհնեք ձեր Տեր Աստծուն»[352], իսկ անօրենններին այսպես է ասում. «Վերցրեք մանգաղները, քանզի հասել է կթոցի ժամանակը, մտեք, հարեք հնձանները, քանզի հնձանները լցված են և իրենց գուբերը զեղում են, քանզի նրանց չարիքը բազմացավ, դրա համար ձայներ հնչեցին դատաստանի ձորում»[353]:

[Սոդոմայեցոց միահամուռ ամբարշտությունը և նրանց հրդեհակեզ պատուհասը]

538. Աբրահամի ժամանակ Սոդոմը խմեց անօրենության գինին: Արդ բարձրագահից Տերը փնտրեց ու քննեց՝ հարյուրից մինչև տասը և նրանում չգտան տասը արդարության բաժակ: Քանզի նրանց խաղողը դառն խաղող էր և նրա ողկույզները լեղիի դառնությամբ: Նրանց գինին էր վիշապների սրտմտությունը, իսկ չար իժերի չարաթույն սրտմտությունը, որը բուժում չունի, նրանց բաժակներն են:

342 Սաղմ., Բ, 6—9:
343 Սաղմ., Բ, 10—12:
344 Սաղմ., Զ, 6—7:
345 Սաղմ., Է, 12:
346 Սաղմ., Է, 13—15:
347 Ցով., Բ, 21:
348 Ցով., Բ, 21:
349 Բնագրում՝ նուաճեալս:
350 Սաղմ., ՃԺԸ, 103:
351 Սաղմ., ՃԺԸ, 68:
352 Ցով., Բ, 24—26:
353 Ցով., Գ, 13:

539. Դրա համար նրանց խմեցրեց հրաբաժակ գինու այրման համը և նրանք կիզվեցին իրենց բաժակներով: Նրանց շտեմարանները լցված էին անօրենությամբ, որի համար նա հայտարարեց նրանց կործանումը: Նրանց հանդերը որոմ էր հասել, դրա համար նրա մանգաղը գործի անցավ, հնձեց ու կիզեց նրանց իր հրդեհով: Ունկանը, որ պատեց նրանց, հենց նրա մեջ զոհվեցին և ծխի նման վառվեցին նույն ցանցի մեջ, քանզի նրա բաժինը դարձան: Թրթուրը կերավ նրանց և ջրյակը նրանց ոչնչացրեց ու նրանց մեղքերի մորեխը արածեց նրանց վրա: Դրա համար վաղաժամ գոսացան: Նրանց շենքերը հուրը կուլ տվեց, հուր տեղաց նրանց վրա և հրեղեն վտակներ հորդեցին նրանց մեջ: Նա վերցրեց խոիվը, որ ընկնի նրանց մեջ: Նրանց մեջ երևան եկան հրեղեն գետեր և ողողեցին ու այրեցին նրանց երկիրը: Նրանց շտեմարանները հրով լցվեցին և նրանով զեղան նրանց հնձանները: Իրենց մեղքերի բաժակները լցրին մրուրով, որը խմեցին և միանգամից կիզվեցին: Ղովտյան բաժակից, որը գտնվում էր նրանց մեջ, նրանք ուրախություն չխմեցին: Դա նրանց համար այլ բաժակ դարձավ և տրտմություն խմեցրեց:

540. Կենդանության բաժակը, որից չկամեցան կենդանությունը ըմպել, նրանց մահու դառնություն խմեցրեց: Քաղցրության բաժակը, որը չքաղցրացավ նրանց քիմքի վրա, դառնություն թխեց նրանից, այն (բաժակը), որի հուրը չայրեց դալարը, այլ սպահեց կանաչը և տոչորեց չորացածներին և գոսացածներին: Այդ բաժակը խմեց Հուդա Սկարիովտացին և այրվեց, քանզի ազազուն էր նրա ծառը: Այն խմեցին առաքյալները, դալարացան և անուշ պտղով լցրին ամենայն երկիրը: Նրանց ծաղիկների հոտը տարածվեց տիեզերքում: Նրանց սրբությունը և անուշ գինին ուրախություն է տալիս թե՛ վերնայիններին, թե՛ ներքնայիններին, հրեշտակներին ու մարդկանց: Տաճարի Տերը ուրախ է նրանցով, ինչպես նաև այս բաժակներով, որոնք անավասիկ եկան ձեզ խմեցնելու: Դա ղովտյան բաժակը չէ՝ աբրահամյանը, որը Սոդոմում էր, որից նրանք ուրախ չեղան և դրա նմանը չկար նրանց մեջ:

[Ներողության հուսադրություն սուրբ կույսերին անգիտությամբ սպանելու համար և հորդոր ապաստանելու Աստուծո ողորմությանը]

541. Ահա երեսունչորք քրիստոնյա բաժակները, որոնք եկան ծառայելու ձեզ: Նրա զորությունը հուր է և անուշ է նրա համը, ուրախություն է իրեն ճանաչողներին և տրտմություն նրանց, ովքեր թաքնվում են նրանից: Քանզի եթե նրանք արժանավորապես ըմպեք, կայրի ձեր աղտը և կսրբի ձեր հոգիները: Ահարոնի որդիների մարմինները այրվեցին և հուրը չայրեց նրանց քահանայության պատմուճանները: Այս բաժակը սովոր է այրել աղտեղիներին, իսկ սրբացածներին՝ պահպանել: Արդ եթե կամենաք սիրով ըմպել երանության բաժակը, որն անակնկալորեն ձեր մեջ թխեց, ապա կայրի ձեր մեղքերը, կզտի ու կմաքրի ձեր հոգիները ուրախության համար:

542. Իսկ եթե ձեր միտքը մտնի, թե՝ մենք սպանեցինք սուրբ վկաներին, ապա [իմացեք], որ նույն ձևով Պողոսը իր հրեության ժամանակ չիմացվեց, որ լինելու է ընտրության անոթը: Նա եկավ առաքյալների քարոզության ժամանակ և նրանց հալածելով, սպանեց Ստեփանոսին և ապա դարձավ աստվածության խոնարհության, ինչպես նաև նրա բարձրության վկան: Արդ ահա և դուք, որ տգիտացած էիք, խմեցեք այս բաժակը, որ ձեր ձեռքերը ետ էին մղել, քանզի ինչպես նրանք վկայեցին ու մեռան, նույն մահով նրանք կենդանացան և ելան երկնավոր վիճակները:

543. Ստեփանոսը իր մահվան ժամին տեսավ երկինքը բացված և Որդին իր ծնողի աջ կողմում: Նա թողություն խնդրեց իրեն սպանողներին, նրանց ամբարշտության կապանքները իր աղոթքների բարեխոսությամբ լուծեց, դադարեցրեց իր արյան համար գոչումը, լուեցրեց իր տանջման համար բողոքը և Տիրոջից նրանց թողություն հայցեց: Այս բանի համար Պողոսը կրեց նրա վայրագ լուծը, որը ձգում էր եզների ամոլը, հանձն առավ նրա տանջանքները և խմեց նրա մահվան նույն բաժակը: Նա եղավ վկա նրա խոսքերի և հավասարապես մասնակից իր Տիրոջը: Տեսավ նույն տեսիլքը և լսեց խոսքերի նույն անճառությունը, որ տեսել ու լսել էր Ստեփանոսը:

544. Արդ դուք այս զոհերին սպանողներն եք: Հավատացեք սրանց հավատին և ձգեցեք նրանց լուծը, ձեր հոգիներից դեն գցեք մեղքերի լուծը, եղեք ճշմարտության քարոզի վկաներ, խմեցեք հոգևոր ըմպելիքի նույն բաժակը և եղեք նրանց կցորդները: Մարդասեր սիրո վտակները իջնելու են ձեր սրտերի հանդերը՝ պարարտացնելու ձեր մտքի հողը քարոզությամբ, որը ձեր սեփականն է լինելու նրա նկատմամբ ձեր զորավոր հավատքի շնորհիվ և դուք խմելու եք մարդասիրության բաժակը, ընտրության զտիչ հուրը: Հրեության քահանայության

ժամանակ, երբ գերության [տարվեցին] քահանաները առնելով պատարագի կենդանի հուրը, տարան նետեցին ջրհորը և հուրը ջուր դարձավ, ապա յոթանասուն տարի հետո՝ իրենց վերադարձին երթալով առան ջուրը և բերին գցեցին ողջակեզների շուրջը: Երբ շինվեց տաճարը, ջուրը բնությամբ հուր դարձավ: Վասն զի ըստ անհրաժեշտության կարելի է փոխել կերպարանքը և ըստ պարագայի արդյունք տալ, մանավանդ Սուրբ Հոգու այս աքանչելի հուրը, որը երևաց տարբեր ձևերով:

545. Հուրը երևաց մորենու կանաչ դալար ոստերի մեջ և այն մնաց անթառամ, քանզի լուսատու հուրը պահեց մորենին, փրկեց Մովսեսին և եղավ ուրախության բաժակ: Դրանից խմեց Մովսեսը, որը նրան հուսաց: Դա փրկեց Իսրայելի անասուններին և կարկտով խանձեց Եգիպտոսի ստացվածքները: Ծովի մեջ այդ բաժակը Նա խմեցրեց Իսրայելին, քանզի նրանք խմեցին Հոգին և երգում էին ծովի մեջ, որին Մարիամ [գինի] էր մատուցակում իր քնարով և նրանք հաղթական անցան ծովը և օրհնեցին: Այդ բաժակից խմեցին նաև եգիպտացիք և արբեցին այնան բաժակից, որը նրանց կառքերի անիվները կապեց: Նրա մրուրը գլորեց նրանց և գետին խփեց նրա ետևից: Ժողովուրդը խմեց տրտնջման բաժակը, որը նրա բարկությունն էր խառնել: Տվեց նրանց քննության բաժակը խմելու, որին նրանք դատապարտված էին:

[Անձրևաձիր և հրացայտ այունը որպես օրինակ Աստուծո գթության զղջացողների հանդեպ և նրա բարկության՝ չզղջացողների նկատմամբ]

546. Սուրբ այունը, որը տապախառն խորշակին օդային ամպով հովանի տվեց նրանց, օրվա ընթացքում և առաջին գիշերապահության, լույս տալով ջեռուցում էր նրանց ցուրտ սառնամանիքին, նույն այունը ժամանակ առ ժամանակ փոփոխվելով, ըստ նրանց կարիքների պատրաստում էր պետք եղածը: Երբեմն վեմից ջուր էր հոսեցնում նրանց ծարավը հագեցնելու անուշ ջրերի վտակներով: Քանզի ինքը Քրիստոսն էր այն, որն ըստ ամենայնի ունի ամենայն լիություն և լիացնելով բարերարում էր նրանց: Երբեմն հացի քաղցրությամբ և երբեմն թռչուններով, իսկ երբեմն նրանց համար քաղցր աղբյուրներ էր բխեցնում և Սուրբ Հոգու բաժակը ուրախացնում էր նրանց:

547. Սակայն նրանց խստապարանոցության և կամավոր բարքերի պատճառով խառնեց տվեց նրանց բարկության բաժակը: Քանզի այս բաժակը, թեպետ հուր կամ ջուր, կարող էր իր զորությունը փոխել ինչի որ կամենար: Երբեմն ձյուն էր լինում, երբեմն սառույց, երբեմն անձրև, երբեմն հուր և փայլակ էր դառնում և երբեմն բույսերի սնուցիչ ցող, որպեսզի գազաններին ու թռչուններին, երեներին ու անասուններին կեր հայթայթի ու պատրաստի մարդկանց ուտելիքը և արարածների կարիքները: Նույնը կարող է և հոգևոր ցողով վերնայինի կամքին հաճո սերմ բուսցնել, բանավոր հոտի համար անապականության կերակուր պատրաստել:

548. Իսկ երբեմն դառնում է քաղցր շահեկան անձրև, որը երկիրը դարձնում է պարարտ, արգասաբեր, տաք փայլատակումով ջերմություն է գցում, որպեսզի թրջի բույսերը, ուրախության համար ցողով արբեցնի ճյուղերը և փթթեցնի: Նա կրկնակի գոհություն է պահանջում շնորհողի պարգևների համար, երբ օգուտն ավելացնելու համար խմեցնում է այս բաժակը: Քանզի նույնիսկ ամպերը նրա հրամաններին սպասավորելով վայր են հեղում: Թեպետ նրանք լի անձրևով լցնում են երկնքի երեսը, սակայն գալու և անձրևելու ժամանակ, տալով և թափելով երկրի վրա, երբ որ Նա կամենա օգտակարն է մատուցում, իսկ երբ չի [կամենում] դժնդակ եղյամ, ձյուն և վնասաբեր կարկուտ է [բերում], այրիչ շողերով վառում է և տապահարությամբ պատրաստում է կործանումը, չարաթույն օդի խիստ դառն շնչով խորշակահար ցամաքեցնում է դալարի վարսաձև բույսերը և այրում մինչև արմատները:

[Աստուծո երևալը լուսատեսիլ ու հրաբորբոք ամպով, որպես արդարներին լուսավորելու և մեղավորներին այրելու նշան]

549. Ամպերով նա հրամաններ է կատարում, քանզի բնական է սկզբից ամպով երևալ իբրև հրամաններ արձակող և մարդկանց մատուցակության պաշտոն ունեցող, երբեմն բարկությամբ, երբեմն ողորմությամբ: Երբ Աստված կամեցավ մարդկանց երևալ իր զորությունն իր մեջ ամփոփեց, ամպի մեջ ծածկված քողարկված պահեց, քանզի մարդիկ չէին կարող տոկալ աստվածության տեսիլքին, այլ նա փակեց երկինքը սրահակով ինքն իրեն վարագուրելով, որ անծուժկալ արարածները չկիզվեն:

550. Նա թեպետ ժամանակ առ ժամանակ երևում էր որոշ արժանիների: Երևում էր ըստ նրան տեսնողների տեսնելու կարողության, որպեսզի նրանք ի վիճակի լինեն տեսնելու, ինչպես օրինակ Մովսեսին և կամ ամբողջ ժողովրդին Սինեական լե-

ռան վրա, իջնելով ամպով պատած և այնտեղ խոսեց նրանց հետ: Բոլոր դարերում Նա երևաց նույն ձևով՝ ամպով, իսկ սուրբ Եզեկիել հոգելից մարգարեին հոչակավոր տեսիլքով, սակայն առանց ամպի մարմնավորներից ոչ ոք երբեք չի տեսել: Ինչպես հոգեկիր մարգարեն իր տեսիլքում պատմում էր, թե «տեսա որ Հոգին վերացած գալիս էր հյուսիսի կողմից, վրան մեծ ամպ, շուրջը սաստիկ լույս: Նրանից դուրս էին գալիս հուր ու փայլակ և նրա մեջ կար արեգակի տեսիլք և հրո ճառագայթներ»[354]:

551. Սակայն [Աստված երևաց] որպես լույս ու հուր և ոչ առանց ամպի, քանզի լույսը պիտանիներին լուսավորելու համար է, իսկ հուրը՝ բարկությամբ այրելու համար անպիտաններին: Ամպը երկուսի համար էլ է և երկուսին էլ մատուվակում է: Հուրն այրում է մեղավորներին և լույսը ծառայում է բարիքների որդեգրման շնորհքների Հոգուն, իսկ չարերին կայծակներ է հարուցում և հեղձամաղձուկ նեղության տանջանքների ծխախառն բոցը: Նաև ամպերը նրա մեծության սպասավորներն են, ինչպես և տեսնողն է պատմում, թե «ամպերը նրա ոտքերի փոշին են»[355]:

552. Եվ ամբարշտությունների հորդելով բազմանալու մասին, ասաց «սաստում է ծովին ու ցամաքեցնում և բոլոր գետերն ավերում է»[356]: Նա կարող է մեղքերի ծովը ցամաքեցնել, անօրենության գետերը կասեցնել և նեխած, անհամ, պղտոր և ճահճացած [ջրերը] պարզեցնել: Իսկ իրեն սպասվինածներին և հուսացածներին նա ծովացյալ բազում փրկություն կտա և գետը առանց մեղքերի հորդառատ կհոսի: Այդ մասին մյուս մարգարեն իր երգի նույն պարի մեջ ասում է, թե «ցրվելու ես գետերը և երկիրը դողացնելու ես քո անձրևի սաստկությունից, որն անցնում է նրա վրայով»[357]: Նա սաստկության ջրերը ի վերուստ հոսեցնելու է այն ջրերի վրա, դառնացյալ ջրերը ետ մղելով մերժելու համար, որպեսզի նա, որ սրբահամ է, աղտեղին ու գարշելին դուրս մղի:

553. Ինչպես մյուս տեսանողը նույնը նվագեց և նույնը միահամուռ մեկնեց ասելով «առատ անձրև պատրաստեցիր, Աստված, քո ժառանգության համար և թեպետ հիվանդացավ, սակայն դու հաստատեցիր նրան»[358]: Քանզի նրանք մեղքերի ծովում բռնված էին, նույն ախտով հիվանդացած և կապված ամբարշտության կապանքներին: Այդ պատճառով քամելով անզգամության անհատակ ծովը և ցամաքեցնելով նրա աղբյուրի ակունքը, նա սաստերի անձրև է տեղացնելու մարդկանց վրա: Ինչպես այս բանին նայելով մարգարեն երգեց «խորքերը քեզ կանչեցին խորքերից քո սահանքների ձայնով»[359]: Քանզի հոգևոր սահանքների նման երկնավոր պատգամները ի վերուստ իջնելու կուտակվելու են խորխորատի վրա և ախտաժետներին ու ցավագարներին կործանելու են:

554. Բուժող ցողը առողջացուցիչ եղավ ինչպես և ասում են, թե «ցողդ որ քեզանից է ցողում, նրանց համար բժշկություն է»[360], որպեսզի նրան վերադառնան երկյուղով: Քանզի նրանք, որ սիրով չդարձան Նրան, ապա սպառնալիքի աչը տվեց նրանց որպես ժառանգություն, ինչպես [օրինակ] ձեզ: Նախ մեղքերի հեղեղը ձեզանից հեռացնելու է և ապա տալու է իր շնորհների առատությունը:

555. Քանզի ձեզանից բխելով «արդարությունը հորդելու է գետի նման և իրավունքը հեղեղի ջրերի նման ծավալվելու է»[361]: Նա ձեր կյանքի իր գիտելիքները ձեր վրա է անձրևելու ողորմության ամպերից, ինչպես և ասում են, թե «առատ անձրև պատրաստեցիր, Աստված, քո ժառանգության համար և թեպետ հիվանդացավ, սակայն դու հաստատեցիր նրան»[362] ապա «փափկության հեղեղներ ես ըմպել տալու արժանիներին»[363], ըստ երգչի հոգևոր խոսքի, որն ասում է, թե «քեզանից է Տեր կյանքի աղբյուրը և քո լույսով տեսնում ենք լույսը»[364], և թե «ծագիր քո ողորմությունը նրանց, որ ճանաչում են քեզ»[365]: Իրեն ճանաչողներին ծագում է և իմաստության աղբյուրը նույն լույսի աղբյուրից նրանց վրա է բխում, իսկ անիմաստասերների վրա՝ այրիչ վտակներ, ողողիչներ, հրդեհիչներ և տոչորողներ:

556. Քանզի մեղքերը լույս տալու համար հրո նման վառվել էին երկրի վրա, որպեսզի անթաքուստ լինեն վրեժխնդրությունից, որը վրա էր հասնում: Իսկ կանխատեսող մարգարեությունը նախապես նշեց իր ասածների հաստատությունը, որպես ասում է «տեսա մարդկանց մեջ մեղքերը ծովի նման, բազմացած հեղեղանման»[366] ինչպես մի

[354] Եզեկ., Ա, 4:
[355] Նաև., Ա, 3:
[356] Նաև., Ա, 4:
[357] Հմմտ. Սաղմ., ՃԶ, 33, ՀԳ, 15:
[358] Սաղմ., ԿԷ, 10:
[359] Սաղմ., ԽԱ, 8:
[360] Ես., ԻԶ, 19:
[361] Ամովս., Ե, 24:
[362] Սաղմ., ԿԷ, 10:
[363] Հմմտ. Սաղմ., ԼԵ, 9:
[364] Սաղմ., ԼԵ, 10:
[365] Սաղմ., ԼԵ, 11:
[366] Հմմտ. Ծննդ., Զ, 5:

անգամ առակը մեկնվեց Նոյան դարի օրերին, երբ երկրի մեղքերը ծովացել էին, նույն ձևով ծովացան և ջրերը ու սատանայացան մարդկանց կործանելու համար:

[Ամբարիշտների պատիժը առաջին դարերում ապագա գալիքների զգաստության համար]

557. Արդ սուրբ մարգարեները գալիք դեպքերի առակները հաճախագույն մեջ բերեցին, որ թերևս գալիք դեպքերով վախեցնելով կարողանան փրկել նրանց իրենց ամբարշտությունից: Այդ պատճառով նրանք հաճախ տվին օրինակներ՝ երբեմն Սոդոմայեցիների հրկիզումը, երբեմն ջրհեղեղի ժամանակ մարդկանց ջրահեղձ լինելու օրինակը, երբեմն Եգիպտոսի հարվածները և բազում այլ [օրինակներ]: Անօրինությունները նա ծովացյալ է կոչում, խոստանում է այն փարատել երկրից և դարձյալ խոստանում է երկրում արդարություն հաստատել, այն ջրհեղեղից էլ ավելի հորդառատ բազմացնել և իրավունքը ծաղկեցնել:

558. Այդ պատճառով մարդկանց ծովի անցքից անցնելու ժամանակ գոչում է մարգարեն և ասում «նրանք անցնելու են մեծ ծովը և ծովի ալիքներն են հերձելու», այսինքն ամբարշտությունները: Եվ թե «գետերի պտույտները ցամաքելու են»[367], այսինքն մեղքերի հորդառատությունը: Այդ մասին մյուս մարգարեն ասում է, թե «գետերի վրա ես բարկանալու, Տեր, և քո սրտմտությունը լինելու է ծովերի վրա և քո բարկությունը գետերի վրա»[368]:

559. Նա անձրևների հորդություն է բերելու և սուրբ ջրերը՝ կենդանության հոսանքը, մերժելու են ամբարշտության ջրերը և ծածկելու են երկրի վրա մարդկանց չարության, տգիտության, ամբարշտության դառնությունը: Ինչպես ասում է մարգարեն, թե «երկիրը Տիրոջ գիտությամբ է լցվելու առատ ջրերի նման, որոնք ծածկում են ծովերը»[369]: Այս բանն ասում է կորստական ջրերի՝ կորուսիչ և հեղձուցիչ ջրերի մասին, թե ծածկելու է այդ ջրերը, որոնք երկիրը արբեցրին պղտոր հրապույրներով, և առավել ևս հրապուրանքների պատճառով ամբողջ աշխարհում տարածված, մոլեգնած էին կապաշտության մեջ: Քանզի նա հանելու է հոգիընկալ ամպը, որ Եզեկիել մարգարեին երևաց և նույն ամպը մարդկանց վրա տեղացնելու է գիտության շնորհները և նույնը դալարեցնելու է չորությունը ու բույսի շրջելու:

560. Իսկ գոսացածները, որոնք հնազանդության չեն գալիս նրանց վրա հրեղեն փայլատակումների անձրև է ափոելու, որ կիզի, այրի, ու ոչնչացնի, դառնության բաժակը մատուցելով ըմպելու համար: Ինչպես տեսանողը տասներորդ սաղմոսում նվագում է, թե «մեղավորների վրա տեղալու է որոգայթ, հուր և ծծումբ, այս մրրիկն է նրանց բաժակի բաժինը»[370]:

561. «Քանզի Տերը արդար է և սիրում է արդարությունը»[371] և արդարությամբ կամենում է ձեզ իր մոտ կանչել որդեգրության, որովհետև աստվածակիր ճշմարտության հոգիընկալ ամպը սովոր է մարդկանց հոգիների մեջ տեղալ գիտության ուսուցումը, մարդկանց սրտերում տնկել աստվածապաշտության երկյուղը, Քրիստոս Արարչի սերը հոսեցնել նրա արարածների վրա և նույնի կամքով բարձրացնել իր աստվածության բարձրությանը, որը դուք պարտավոր եք ընդունել:

[Սուրբ Հռիփսիմյանց երանելի փառքը և նրանց հաշտարար բարեխոսությունը]

562. Քանզի եթե ամպերը, որոնք սպասավորներ են, հրաման են ստանում Տիրոջից, իջնում են բարձունքներից ծովերի ցածր անդունդների խորությունը և եթերի մոտ աղբեր լցված և ուռած, ամփոփելով ջրերի առատությունը, հանելով, վերանալով, տարածվելով ծածկելով երկնքի երեսը որոտումներով լի և ցողագին առատությամբ Արարչի հրամաններն են կատարում, ներքև հոսեցնելով [անձրևը], ապա առավել ևս այս վկաները, որոնք վերացան ի սեր աստվածության, նրանց վրա Աստված խոնարհվեց, առավելագույն չափով ստացան Հոգու շնորհները և առավել ևս լցվեցին պարգևներով: Նրանք իրենց մարմինները տվին որպես տերունի գանձ, որպեսզի մյուս անգամ կրկին առնեն նորոգելով հնացածը: Լցված աստվածային պատգամներով, ջանք դրեցին և մեծ ճգնությամբ քարոզեցին, ձեր վրա տեղացին երկնային շահի անձրևը, ձեզ փայլատակեցին լույսն ու հուրը միանգամայն և առավել քան աստվածընկալ ամպը ձեր վրա օգուտներ հոսեցրին: Ամպաշուք անձրևալի ահագին որոտման փոխարեն Աստված որոտաց ձեզ առավել ևս սարսափելի կերպով կամենալով ձեր կյանքն ու փրկությունը:

563. Իսկ սրանք, որ ատեցին աշխարհը

367 Զաք., Ժ, 11:
368 Ամբակ., Գ, 8:
369 Ես., ԺԱ, 9:
370 Սաղմ., Ժ, 7:
371 Սաղմ., Ժ, 8:

և ամեն ինչ, որ երկրի վրա է և սիրեցին երկինքն ու պատվիրանները Արարիչ թագավորի, սպասում էին նրան, որ ընդունեց նրանց և նրանց հոգիները լուսեղեն հարկերում: Նրանք տարվեցին երկնավոր քաղաքը և զվարթակից դարձան երկնավորներին: Նրանք կենդանի են և տկարությունից զորության փոխվեցին, ապականությունից՝ անապականության, մահվանից՝ անմահության, քանզի հաղթեցին մարմնեղեն ցանկություններին և հաղորդակից եղան աստվածեղեն փառքին: Նրանք նորոգվեցին անպատում փառքի մեջ և փրկվեցին անպիտանությունից: Նրանց ոսկորները աստվածության Հոգու տաճարներ եղան: Քանզի իրենց Տիրոջ հետ կենդանի են և նրանց սուրբ հոգիները գուրգուրանքով կենդանի են պահվում:

564. Նրանց մարմիններն ու ոսկորները ձեր մեջ Աստուծո տաճարներ են, քանզի ոչ մի այլ ձևով դուք չեք կարող Աստծուն հաշտեցնել ձեզ հետ և մերձենալ առ Աստված, եթե ոչ նրանց աղոթքների բարեխոսությամբ և նրանց հավատը ընդունելով, որով նրանք ապրեցին և արժանի եղան կենդանի ծովը ելնելու և այնտեղից ձեր վրա հոսեցնելու աստվածային պատգամների քարոզության վտակները, մատուցելու ձեզ արարչական սիրո բաժակը, եթե ընդունել կարողանաք: Քանզի ոչ ոքի չի թողնելու, որ գնա ըստ իր անձնական կամքի, այլ եթե կամենաք թե ոչ, այնուհանդերձ ինչ որ Աստված է կամենում, այն եք կատարելու:

[Աստուծո խոսքի երկիր իջնելը լուսավորելու հավատացողներին և կիզելու անհավատներին]

565. Քանզի երբ տեսավ Աստված, որ մարդկային ազգը տկարացած է և մեղքերի հիվանդությամբ եղծված, եկավ իբրև բժիշկ բժշկելու, որպեսզի մեղքերի հիվանդությունից չմեռնեն: Այդ մասին մարգարեն վկայում է ասելով «թեպետ և հիվանդացավ, սակայն դու հաստատեցիր նրան»[372]: Արդ նույն գթածն ու մարդասերը, որն սկզբից հավիտենական է, ստեղծողն ու ամենայնի արարիչը, նույն ինքն իր արարածների բժիշկն է, որը երկյուղածներին իր լույսն է ծագում, ինչպես ասում է մարգարեությունը «ձեզ՝ իմ անունից երկյուղածներին, ծագելու է արդարության արեգակը և բժշկությունն իր թևերի մեջ է»[373]:

566. Եվ ով է արդարության արեգակը, եթե ոչ նա, որ ինքն իրեն խոնարհեցրեց և ծագեց իր ճառագայթները բոլոր հիվանդացածների և մեղքերի ախտերով բռնվածների վրա: Նա նույնն է, որ Հորից ծագեց, քանզի միայն նա է, որ կարող է լուսավորել մարդկանց խավարյալ ոգիները և զվարճացնել ստվերանիստ մնացած հոգիները: Նա ինքն է, որ այցելության ելավ ձեր կործանմանը և նրա ճառագայթներով ապրում են նրա կողմից ստեղծված ամենայն արարածները: Նաև երկնքի զարդերը, այսինքն լուսավորները իրենց լույսը արարածների մեջ ջահի նման պայծառացնում են, նայելով նրա ճառագայթներին, որպեսզի լույս տան երկրին: Երկինքն ու աշխարհը լի են նրա լույսով: Նրա հոգին իր սեփական էության ճառագայթի նշույլն է, որ խոնարհվեց իր գթության կամքով և եկավ լուսավորելու արարածներին, քանզի խավարյալ էին և նա եկավ տալու, ծագելու իր լույսը:

567. Իսկ եթե չկամենան իրենց սրտերը բացել նրա աստվածության ճառագայթներին, նա իսպառ կայրի նրանց, ինչպես ասված է, թե «հուրը բորբոքվեց իմ բարկությունից, որն այրելու է և իջնելու մինչև դժոխքի խորքը, ոչնչացնելու է երկիրը և նրանց երկրի բոլոր բույսերը վառելու է հրով և բորբոքելու է նրանց լեռների հիմքերը»[374]: Ինչու, ինչ բանի համար, կամ ինչպես հիմքերին մոտենալով հրդեհելու է: Քանզի նրանց մեղքերը հիմնված և զորացած էին երկրի վրա, դրա համար հիմքերով և արմատներով է հրդեհելու չարը և մոլորությունը երկրից խլելու է առհասարակ, ջնջելու է կռապաշտության մոլորությունը ու դուրս վանելու, ինչպես ձեր տանջանքների սկզբում ձեզ ցույց տրվեց:

568. Քանզի, երբ ծովի նմանության, մեղքերը քամելու և զտելու մասին է ճառում, նա այնտեղ խեղդում է դժնդակներին, որոնք նման էին իրենց անհնազանդությամբ, խստասիրտ, ընդդիմասովոր բարքերով, փարավոնյան անսանձ ժպիրն զորքին, որն իր վաշտ վաշտ գնդերով, բազմաթիվ կառքերով, սպառազեն այրուձիու նիզակներով և անթիվ զինավառ երիվարներով, ջրերի մեջ կորավ: Քանզի չափավոր ձևով ոռոգումը շատ պիտանի է բոլոր բույսերի սերմերին, իսկ հորդառատ և անչափ [ջուրը] նեխում է, ապականում և ոչնչացնում, իսկ եթե շատ բարձրանա, ողողում և անհիշատակ բնաջնջում է: Նույն ձևով լույսը ցանկալի է մեր աչքերին, սակայն, երբ չափազանց ջերմության է հաս-

372 Սաղմ., ԿԷ, 10:
373 Մաղաք., Դ, 2:
374 Բ Օր., ԼԲ, 22:

նում, վնասում է, ինչպես եբրայական[375] ազգը, որը հակառակ կանգնելով Մովսեսին, այրվեց Աստուծո բարկությամբ:

569. Իսկ ցամաք երկիրը մեր բնակավայրն է և մեր կյանքի ամեն օգուտ ու սքանչելի նրանից է և նրա վրա է [աճում] և մեր աճման սնունդը, ինչպես կաթը մորից, գալիս է նրանից: Այդ պատճառով մեր խնամակալը՝ երկիրը պայթեց, պատռվեց, բացեց իր խորքերը և սուզեց միանգամայն, կենդանի կուլ տվեց, դժոխք ուղարկեց ղևտացիներին, որոնք համարձակվեցին ծաղրել և արհամարհել Աստուծո ընտրյալ և սիրելի Մովսեսին:

[Քրիստոսի առատ մարդասիրությունը մեղավորներին երկնքի արքայություն հրավիրելու մասին]

570. Այդ ժամանակ այսպես է եղել, իսկ արդ Աստված մարդկանց մոտ առաքեց իր Որդուն, որը եկավ շրջեց աշխարհում և առաքեց իր առաքյալներին ամբողջ երկիրը, իսկ այս երանելիները հասան ձեզ մոտ, ոչ միայն լոկ խոսքեր, այլև հրաշալի նշաններ ձեզ ցույց տվեցին ձեր պատուհասների միջոցով:

571. Իսկ ովքեր անգոսնեցին Աստուծո ծառա Մովսեսին, նման պատուհասի արժանի եղան և ովքեր համարձակվեցին Աստվածորդու դեմ հակառակվել, ինչպիսի՞ պատժի ու պատուհասի արժանի են լինելու: Քանզի նրանք, որ երկրավոր օրենսդրից հրաժարվեցին, այսպիսի բարկության պատահեցին, իսկ ովքեր երկնավորից հրաժարվեցին, որչա՞փ առավել տանջանքների են հանդիպելու: Տեր Աստվածորդին առաքված էր Հորից, երբ իր առաքյալներին՝ սիրելիներին առաքեց ամբողջ երկրին և այսպիսով դատավճիռը տվեց ու հաստատեց ասելով. «Ով որ ձեզ ընդունի, ինձ կընդունի, և ով ինձ կընդունի, կընդունի իմ Հորը»[376]:

572. Արդ, թեպետ երեկ՛ դուք սպանեցիք նրանց, սակայն Աստուծո համար նրանք և այժմ կենդանի են ու հավիտյան կենդանի են լինելու: Արդ նրանց բարեխոսությամբ դուք հաշտվելու եք Աստուծո հետ, ըստ ձեր այս առաքյալներին առաքելակից մեծ Պողոսի խրատի, որն ասում է, թե «Մեր միջոցով հաշտվելու եք Աստուծո հետ, նրա Որդու մահվամբ»[377], քանզի Աստուծո Որդին մեռավ և ապրեց, նույնպես և նրա սիրելի վկաները կենդանի են և ձեզ համար բարեխոս:

573. Աստուծո Որդին ինքը ձեզ քարոզ ավետեց և ինքը ձեզ ուրախարար պատգամների մատուցակ է: Նա ինքը ձեզ արքայության հրավիրակ է և իր բարիքների պաշտոնյա: Նա բազուկները վեր բարձրացնելով երկրի կենտրոնն է անցնում և պարգևատու լինում իր արժանիներին: Նա ինքը ահարկու է և պատժում է նրանց, որ չեն ճանաչում նրան: Նա ինքը գտնող է նրանց, որ կորցրել են իր բարիքները: Նա ինքը առաջնորդ է մոլորվածների, որոնք մոլորվել են նրա ճանապարհներից: Նա ինքը նավահանգիստ է նրանց, որոնց ձեզ նման մեղքերի ամբարշտության ալիքը պաշարել է: Նա ինքը գերությունից փրկող է նրանց, որոնք մեղքերով գերված են ձեզ նման: Նա ինքը բժիշկ է վիրավորների, որոնք ձեզ նման վիրավորված են ամբարշտությամբ: Նա օգնական է այնպիսիներին, որ նրան ճանաչելու օգտակարությունից զուրկ են: Ինքը հույս է իրեն հուսացողներին, մշտնջենավոր, անկետ, անսպառ, անպատում, անվախճան արքայության մեջ: Քաղցրությամբ է նայում իր արարածներին և իր գթությամբ կերակրում չարերին ու բարիներին, այլև ամենքին խրատում է, որպեսզի արժանի լինեն մերձենալու աստվածության կոչման որդեգրությանը[378]:

574. Այլ ձեզ թող հայտնի լինի, որ այս այսպես է: Մարդասերն Աստված կամենում է, որ ձեզ իրեն ժառանգորդներ դարձնի: Այն ժամանակ մինչդեռ դուք չգիտեիք Աստծուն, ծառայում էիք նրանց, որոնք ի բնե Աստված չէին, իսկ այժմ ճանաչեցիք Աստծուն, մանավանդ, թե Աստված էլ ճանաչեց ձեզ, որ մոլորված էիք դեպի տկար արարածները և սնոտի պաշտամունքը, հնազանդվելով մեղքերի ծառայությանը: Սակայն այժմ ազատված եք այդ անօգուտ լծի ծառայությունից, ստրկությունից [դառնալով] տեր մեր Հիսուս Քրիստոսին, Աստուծո Որդուն:

575. Զգույշ եղեք, որ չզրկվեք խոստացվածից, քանզի եթե չկարողացան փրկվել նրանք, որ երկրավոր հրամանատուից հրաժարվեցին, որչափ ևս մենք [չենք փրկվելու], եթե թիկունք դարձնենք երկնավորին: Նրա ձայնը շարժեց երկիրը այն ժամանակ և այժմ էլ խոստանում է ասելով «դարձյալ մյուս անգամ շարժելու եմ ոչ միայն երկիրը, այլև երկինքը»[379]: Իսկ որ ասվում է «մյուս անգամ ևս» հայտնվում է իրերի

[375] Ռ. Թոմսոնը թարգմանում է եգիպտացիներ, Teaching, էջ 137:

[376] Մատթ., Ժ, 40:

[377] Բ Կորնթ., Ե, 18:

[378] Հմմտ. Ագաթ., 9:

[379] Անգ., Բ, 7:

շարժվելը, որպես եղած (ստեղծված) իրերի փոփոխում, քանզի այն, որ անշարժ է, հաստատուն է մնալու:

576. Ուստի դուք ձեր սրտերում հնազանդվեցեք անշարժ թագավորությանը և կստանաք շնորհները, որով պաշտելու եք Աստծուն հոժարությամբ: Քանզի Աստված լափող հուր է, որը կայրի ձեր մեղքերը և կսրբացնի ձեր սրտերը, ինչպես ճարտար արվեստի կուանագործ արծաթագործների փորձության հալոցներում զտվում է ժանգը մաքուր մասից: Ինչ որ զտվում է, մաքուր է և պատվական, իսկ ինչ չի զտվում, այրվում է և վառվում, ինչպես գիտողն (մարգարեն) ասում է, թե «Իսրայելի լույսը դառնալու է հուր և սրբելու է նրան բորբոքված բոցի մեջ»[380]: Անօրենությունները խոտի նման է դարձնելու, այսպես է ասում, թե «վառվելու է նրա շուրջը և ուտելու է նրան իբրև խոտ: Այդ օրը լեռները, բլուրները և անտառները խորտակվելու են և սպառելու են շնչից մինչև մարմինը, իսկ ով ապրի, լինելու է նրա նման, որը բորբոքված բոցից է փրկված, իսկ ովքեր նրանցից մնալու են, ասում է, թվով [հաշված] են լինելու»[381]:

[Վաղափուլ աշտարակի շինությունը և լեզուների բաժանումը]

577. Արդ այն առաջին ժամանակներում, ջրհեղեղից հետո, երբ մարդիկ բազմացան երկրի երեսին, վայելում էին Աստծո խնամքի պարարտությունը և հղփացան ու խռովություն մտահղացան ինքնամոռացության մեջ հիմարացած: Հավաքվելով որոշ վայրում խորհուրդ արեցին, սնոտի խորհուրդ՝ մեհյանների պաշտամունքի համար շինել բարձր անհասանելի աշտարակ և այն կոթողեցին Սինեար դաշտում, Ասորեստան երկրում: Արդ շինեցին շենքը դևերի պաշտամունքի համար իրենց անձերին կապելով մեհենաշեն անունը և այն կտակեցին իրենց որդիներին: Հոխորտալով, հպարտանալով գործի անցան և ջանասիրաբար աշխատեցին անօրենության կավագործությամբ, քանզի այն անմիտ առաջին ցեղը կամենում էր չարության պաշար թողնել իրենից հետո եկող սերունդներին:

578. Տեր Աստված նայելով նրանց պակասամտությանը, շփոթեցրեց ու խմեցրեց նրանց տարբեր լեզուների բաժանման խառնակությունը: Այնտեղ նույն վայրում նրանց իրար խառնեց, ուստի և այն տեղը բաբելոնյան խառնակություն անունը ժառանգեց: Նրանք ցրվելով իրար մոտից մեկնեցին, այնուհետև այրն իր ընկերոջ լեզուն չէր հասկանում: Այսպես միմյանցից բաժանվելով անջատվեցին, նրանց գործը լքվեց և այն, որ սկզբում կատարել էին, իրենք քանդեցին: Լինելով արբեցած, յուրաքանչյուրը տարբեր լեզու էր խոսում, սովորելով ամենաստեղծ Արարչից: Նրանք խառնվեցին ու ցրվեցին, բաժանվելով միմյանցից:

579. Եվ անագին հուրը՝ Աստուծո Հոգու հողմախառն շոգու հետ, որ [ընդհանրապես] սովոր է մարդկանց ուղիղ ճանապարհի վրա հաստատել և զրավատակ ճանապարհներից ետ պահել, ուղղել դեպի արդարություն և ամենքին հաստատել, ապա այն հուրը ընկավ ի վերուստ, կտրեց աշտարակը վերից վայր, փլուզեց, փշրեց և դաշտերի մեջ տապաստ ու ցիրուցան դարձրեց: Արդ, երբ նրանց այս նորացույց ամբարշտությունը խափանվեց, նրանք սփռվեցին երկրի վրա, ըստ Աստուծո կամքի, յուրաքանչյուրը իր մասում: Յոթանասուներկու նահապետներ տարբեր լեզուների [պետեր] դարձան, բաժանվեցին երկրում, յուրաքանչյուրը հաստատվելով իր սահմաններում:

580. Բայց մեկը, երբ եբրայական (հեբրայական) ազգի նախնին էր, խորհրդի չմտավ շինելու վաղափուլ [աշտարակը] և ոչ էլ կցվեց արագավերին, քանզի այդպիսին էր խորհուրդը: Այդ պատճառով նա պահպանեց իր լեզուն: Նա իր զավակներով հանդերձ առաջինը ծանոթացավ Արարչին, ինչպես սկզբում պատմել ենք, աստվածապաշտությունը հանձն առավ և անվանվեցին Աստուծո սեփական ժողովուրդը: Նրանից ծագեցին աստվածախոս մարգարեները «Նրանից է և Քրիստոսը, ըստ մարմնի, որ ամենքից վեր է և Աստված նրան օրհնել է հավիտյան»[382], նրանից են և շնորհված նորապարգև կտակարանների աշակերտները՝ ավետարանիչները, որոնք վկաներն են նրա զորության, գործերի, նշանների և հրաշքների, որ կատարվեցին նրա գալստյան ժամանակ: Նրանք շնորհներ մատակարարեցին և Հոգու կենդանության շունչը իրենց բերանն առնելով, հրդեհեցին, սրբեցին տիեզերքի աղտը, գլորումից բարձրացրին ամբողջ երկրի ընկածներին: Նրանք տիեզերքի անօրենությունները տապալեցին, այրեցին, մաշեցին ըստ բարձրաբերձ աշտարակի օրինակի, որի մասին պատմեցինք:

581. Արդ, բարձրաբերձ և վաղավեր աշտարակի փոխարեն ճշմարտության խաչը

[380] Ես., Ժ, 17:

[381] Ես., Ժ, 16—19;

[382] Հռովմ., Թ, 5:

կանգնեցվեց, որի զորությունը մշտնջենական է և նրա փառքն է Աստված: Ինչպես գիտողն (Մարգարեն) է ասում «Քեզ Տեր հայտնվելու է և նրա փառքը քեզ է ծածկելու, թագավորները գալու են քո լույսին, և հեթանոսները՝ քո լույսի ծագելուն»[383]:

[Քրիստոսի առաքյալների և սուրբ վկաների հավատքի պնդությունը և նույն ճշմարիտ հավատքի մեջ հաստատելու հորդորը: Քրիստոսի կատարելը Հոր կամքը՝ մարդկային ազգի փրկությունը և սրբերին Աստուծո որդի լինելու իշխանություն տալը]

582. Ահա թագավորյալները, որոնք պարծեցան խաչեցյալ փրկչով և նրա աստվածության վկաներն են: «Նրանք մեռան Քրիստոսի հետ, նրա հետ էլ թագավորում են»[384], քանզի մահվան մատնվեցին հանուն Աստուծո, որպեսզի Հիսուսի կյանքն էլ ահավասիկ հայտնվի Քրիստոսի սիրելիների մահկանացու մարմիններում: Նրանք հայտնապես մեռած են, սակայն ծածկապես կենդանի, քարոզում են հայտնապես իրենց կենդանությունը և նրանք կենդանությունն են մատուցում ըմպելու ձեզ, որ մեռած եք ձեր մեղքերի մեջ:

583. Աստված ձեզ հայտնվեց նրանց ոսկորների մեջ, քանզի նրանք իրենց վրա առան չարչարանքների լույսը և Քրիստոսի նույն չարչարանքներով Փրկչի համբերությունը իրենց անձերի վրա արտացոլեցին, լուսավորելու համար խավարը, որ պատել էր ձեր հոգիները: Ինչպես ասում է գիտողը (մարգարեն), թե «խավարը ծածկեց երկիրը և մառախուղը պատել է հեթանոսներին»[385]: Ահա արդարև խավար և մառախուղ է պատել ձեր հոգիների հեթանոսությունը, տգետ սովորություններով, ինչպես մոլորության աշտարակը, ուր մարդկային ցեղերը անօրենության պաշտամունքը հղացան, Արարչի փոխարեն պաշտելով անշունչ ու շնչավոր արարածներին:

584. Քանզի թեպետ և իրենց խորհուրդներում անօրենություն հղացան աշտարակագործ կորուսիչ պաշտամունքով, որի համար և երկրում ցրվեցին լեզուները խառնելով, այսուհանդերձ նույնը չթողեցին, ինչպես ասում է գիտողը, նույն սաղմոսարանի մեջ, թե «Ահավասիկ անօրենություն երկնեցին, ցավեր հղացան և ծնեցին անօրենություն»[386]: Քանզի աշտարակի քանդվելուց և յուրաքանչյուրն իր անօրենության գործերը թողնելուց հետո ձեռագործ [պատկերներ] պատրաստեցին, որոնց երկրպագում էին, ինչպես և մյուս գիտողը ասում է. «Փայտին ասացին՝ դու իմ հայրն ես, և քարին ասացին, թե դու ես մեզ ծնել, ինձ թիկունք դարձրին և ոչ իրենց երեսները»[387]:

585. Այդ պատճառով փայտի փոխարեն, որին երկրպագում էին, իր խաչը կանգնեցրեց, որպեսզի լույսի ճառագայթներ արձակի ամենայն արարածների վրա, որոնք նստած էին խավարի և մահու ստվերի մեջ: Նա այրելու է անպիտաններին, ըստ մարգարեի խոսքի «Իսրայելի լույսը դառնալու է հուր և սրբելու է նրան բորբոքված բոցով»[388]: Իսկ աշտարակը հուզեց Արարչի սրտմտությունը, բարկությունը և ցրեց նրանց ու խառնեց նրանց լեզուները: Իսկ խաչից ողորմություն հորդեց Ադամի որդիների ցրված ցեղերին հավաքելու համար: Հնոտի, սնոտի քառապաշտության փոխարեն, վեմի նման [ամրացրեց] իր վկաների հավատը, որպեսզի անշարժ լինեն և հաստատուն:

586. Եվ մենք կկառուցենք ձեզ հետ մեկտեղ առաքյալների և մարգարեների հավատքի հաստատության վրա: Ընդունեք Հոգու շնորհների հուրը: Նա, որ այրեց և քանդեց մոլորության աշտարակը, ինքն էլ մեզ կվերակառուցի հավատքի հաստատության հիմքի վրա և մեզ միաբանության է տանելու իր խաչով: Նա մեզ կտա Հոգու հուրը, որով մեղքերն այրվելու են և արդարությունը լուսավորելու է խաչի միջոցով, որի վրա Տերը կախվեց, որին [վկայել են] մարտիրոսները, թագավորները և Քրիստոսի հետ թագավորյալները և որի միջոցով դուք հաշտվելու եք Աստուծո հետ նրա Որդու մահվամբ:

587. Դրա համար Աստվածորդին խոնարհվեց, որպեսզի մարդկային մարմին առնի, խոնարհվի մինչև մահու անարգությունը, մինչև անգամ թաղումը, արժանիներին Աստվածությանը նմանակից դարձնի իր մարդասիրությամբ, որոնց եղբայր անվանեց իր անսահման սիրով, որով սիրեց մարդկանց և որ ինքը լինի անդրանիկ բազում եղբայրների մեջ: Իր մարդասիրության պատճառով այսպես տվեց դատավճիռը, ասում է ինքը Աստվածորդին, թե «սրբանք են իմ քույրերը և եղբայրները, որոնք կատարում են իմ Հոր կամքը, որ երկնքում է»[389], քանզի Որդին գալով, կատարեց Հոր կամքը:

---

383 Ես., Կ. 2—4:
384 Բ Տիմ., Բ, 12:
385 Ես., Կ, 2:
386 Սաղմ., Է, 15:
387 Երեմ., Բ, 27:
388 Ես., Ժ, 17:
389 Մատթ., ԺԲ, 50. Հմմտ. Մարկ. Գ, 34—35:

588. Եվ ինչ է Հոր կամքը, եթե ոչ կրկին արքայության մեջ ընդունել մարդկանց, մերժված որդիներին և մահվան ներքև ընկածները կենդանության կանգնեցնել և իր Հոր կամարարներին, որի միածին Որդին ինքն է բնությամբ, շնորհների որդիներ դարձնի: Այդ պատճառով ինքը զորությունների Տերը իջավ մարդկային կարգի տկարությանը, որպեսզի նույն տկարությամբ տկարացյալներին հասցնի Աստվածության կարգի փառքի զորությանը և արժանի դարձնի որդեգրության շնորհին:

589. Արդ ինքը կամովին իջավ, որպեսզի սիրեցյալներին խառնի Աստվածությանը: Նրանք, որ արժանի սիրով Աստվածային սիրո պատճենը դարձան, այսպիսիներին իր եղբայրներն անվանեց: Իր հայրական իմաստության բնական սերը ուսուցանեց նրանց, գորգուրեց, հորդորեց, ջերմացրեց նրանց և տվեց իշխանություն Աստուծո սուրբ որդիները լինելու, քանի որ հավատացին նրա անվանը[390]: Ցույց տվեց նրանց շնորհների Հորը՝ իր ծնողին և նրանց սովորեցրեց հայր կոչել նրան և իր Հոր բարերարությունը ցույց տվեց, որպեսզի հայրաբարո բարերարությամբ արժանի լինեն ճշմարիտ Որդու եղբայր կոչվելու: Նրանց տարավ Որդին և ներկայացրեց Հորը, թե «ահավասիկ ես և իմ մանկունքը, որ տվեց ինձ Հայրը»[391]: Դարձյալ խոսեց Հորը և ասաց, թե «Քո անունը հայտնելու եմ իմ եղբայրներին և ժողովուրդների մեջ օրհնելու եմ քեզ»[392]: Այնպես ինչպես աշակերտներին ասում էր, «ամեն ինչ, որ ինձ ասաց իմ Հայրը, ցույց տվեցի ձեզ, քանզի ձեզ ես գիտեմ, որ իմ բարեկամներն եք»[393]:

590. Աստուծո ճշմարիտ որդին իր Աստվածության կամարարներին դարձրեց իր ճշմարիտ վկաները և խորհրդակիցները, որոնք խորացան նրա սիրո մեջ և նրա պատվիրանները պահեցին: Նա այնքան վերացրեց ու բարձրացրեց նրանց իր Աստվածությանը, մինչև որ Հորը գոչեց, թե «այսուհետև սրանք այս աշխարհից չեն, ինչպես և ես չեմ այս աշխարհից»[394], «և ես աղաչելու եմ Հորը, որպեսզի բարեխոս տուրբ Հոգուն առաքի ձեզ մոտ, որպես առհավատչյա և նա ձեզ խառնելու է Աստվածությանը, որ ձեր մեջ բնակվելու է մինչև հավիտյան, սակայն նրան այս աշխարհը չի տեսնի ու չի ճանաչի»[395]: Արդ նախ նրանց դարձրեց իր Աստվածության տաճար երկրում և Սուրբ Հոգու օթևանաց տունը: «Ես և իմ Հայրը, ասում է, գալու ենք և ձեզ մոտ օթևանելու»[396]: Նա նրանցից պատրաստեց Հոր սիրո զորության մեծության ու խորհրդի գանձանակ և նախքան աշխարհը ճանաչվեց նրանցից:

Թարգմ. Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

[390] Համմտ. Յովհ., Ա, 12:
[391] Նս., Ը, 18:
[392] Սաղմ., ԻԱ, 23:
[393] Համմտ. Յովհ., ԺԵ, 14—15:
[394] Յովհ., ԺԵ, 16:
[395] Յովհ., ԺԴ, 16:
[396] Յովհ., ԺԴ, 23:



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Հայերը շատ հին ժողովուրդ են: Իրենք կպնդեն, թե հայոց պատմությունը կսկսի նախքան Զրհեղեղը: Եվ ոչ անարդարացի կերպով, քանի որ Արարատ բառը զուտ հայկական բառ մըն է:

Հելլենիստական ժամանակաշրջանին հայերը սերտ հարաբերություն ունեցած են հույներու հետ: Այդ ժամանակեն սկսած երկու ժողովուրդները բախտակից եղած են:

Հայաստան շատ կանուխ ընդունեց Ավետարանի լույսը: Եվ առաջին երկիրն է, ուր քրիստոնեությունը պետական պաշտոնական կրոնք դարձավ՝ Մեծն Կոստանդիանոսեն քիչ առաջ:

Այն ատեն Հայաստանի մեջ կգործեր մեծ քահանայապետ սուրբ Գրիգոր Լուսավորիչը (իր հիշատակը կտոնվի սեպտեմբեր 30-ին), որ երկար ժամանակ ապրեցավ հելլենական Կապադովկիո Կեսարիա քաղաքը, ուր ընդունեց հավատքը Քրիստոսի կրոնքին: Իբրև Հայաստանի եպիսկոպոս անիկա ձեռնադրվեցավ Կեսարիո Ղևոնդիոսի կողմե (Գ դար)...

Որքան ալ որ 5-րդ դարուն Հայաստանյայց եկեղեցին չընդունեց Քաղկեդոնի ժողովի որոշումները, երկու ժողովուրդներու հարաբերությունները ավելի սերտ եղան, քան հակաքաղկեդոնյան այլ ժողովուրդներու հետ:

... Վերջին տասնամյակի սկիզբեն ի վեր, երկու եկեղեցիներուն միջև հարատևորեն գոյություն ունեցավ տոնական օրերու թղթակցություն: Ամիս մը առաջ Արարատյան թեմի արքեպիսկոպոս տ. Կոմիտաս սրբազան՝ անձամբ հանձնեց տ. Սերաֆիմ արքեպիսկոպոսին, հայոց Վազգեն Ա կաթողիկոսի հրավերը, այցելելու Հայաստան:

Հարաբերությանց սերտացումը Հայաստանյայց եկեղեցվո հետ, թիրախն էր եկեղեցական պատվիրակության, որն այցելեց Մոսկվայի պատրիարքարանը, վերջնույն վերահաստատման 60-րդ տարեդարձին առթիվ:

Կիտրոսի գերաշնորհ միտրոպոլիտ տ. Բառնաբաս սրբազանը, իբրև պետը պատվիրակության, Մոսկվա ժամանելուն պես, իսկույն հարաբերության մեջ մտավ սրբ-

---

* Մայիսի 30-ին, Հայոց Հայրապետի եղբայրական հրավերով, Մայր Աթոռ էր ժամանել հույն օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, որը Մոսկվայում մասնակցել էր ռուս պրովոսլավ եկեղեցու պատրիարքության վերահաստատման 60-ամյակին նվիրված հանդիսություններին:

Հույն եկեղեցու պատվիրակության կազմում էին Կիտրոսի միտրոպոլիտ, սուրբ Սինոդի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ տ. Բառնաբաս արքեպիսկոպոսը, Տալանդիի միտրոպոլիտ և սուրբ Սինոդի գլխավոր քարտուղար տ. Ամբրոսիոս արքեպիսկոպոսը, սուրբ Սինոդի արտաքին հարաբերությունների հանձնախմբի քարտուղար տ. Մելետիոս Կալամարաս վարդապետը և նույն հանձնախմբի փոխքարտուղար տ. Ստեփանոս Ավրամիտիս քահանան:

Տ. Ստեփանոս Ավրամիտիս քահանան Հունաստանի օրթոդոքս եկեղեցու պաշտոնաթերթ «Էկլիսիա»-ի սեպտեմբեր 1 թվակիր № 17-ում գրել է մի հոդված՝ «Այցելություն ի Հայաստան» վերնագրով, հույն եկեղեցու պատվիրակության Մայր Աթոռ կատարած այցելության մասին:

Սույն հոդվածը թարգմանաբար խմբագրությանս է ուղարկել Աթենքից պրն. Հայկ Ղազարյանը:

«Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում քաղվածաբար վերոհիշյալ հոդվածը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

բազնագույն Պատրիարք Տ. Վազգենի հետ, և կարգադրվեցավ պատվիրակության Հայաստան այցելությունը: Սրբազնագույն Պատրիարքը ցավ հայտնեց Իր Հայաստանեն բացակայության համար, որուն պատճառն էր նախապես ծրագրված Իր այցելությունը, դեպի արտասահմանյան հայ թեմերը:

30 մայիսեն մինչև 2 հունիս միտրոպոլիտ Բառնաբաս, Տալանդիի միտրոպոլիտ տ. Ամբրոսիոսի, Մելետիոս Կալամարաս վարդապետի և Ստեփանոս Ավրամիտիս ավագերեցի ընկերակցությամբ, այցելեցին Հայաստանյայց եկեղեցիի կեդրոն ս. Էջմիածին: Այս պատվիրակության այցելությունը Հելլադայի եկեղեցվո կողմե, հունական առաջին պատվիրակության այցելությունն է Հայաստան և Էջմիածին:

Պատվիրակությունը մեծ պատիվներով ընդունվեցավ չորս եպիսկոպոսներու, ինչպես նաև Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կրոնից նախարարին կողմե՝ և առաջնորդվեցավ «Անի» պանդոկը:

Ժամանման առաջին օրեն իսկ, սկսան այցելություններն ու շփումները: Սկիզբը պատվիրակությունը այցելեց սուրբ Գեղարդի վանքը, ուր ըստ ավանդության կպահվեր Գեղարդը այս վանքին մեջ: Եկեղեցվո գմբեթի ձևը կներկայացներ զուտ հայկական ճարտարապետական ոճ: Այնտեղ տեսանք հսկա եկեղեցիներ և հիացանք անոնց ճարտարապետությամբ, որոնք ամբողջությամբ քանդակված են հսկա ապառաժի մը մեջ:

Գեղարդի վանքը այցելեցինք, այցելեցինք ժայռի մեջ քանդակված խուցն ու աղոթարանը, ուր իր կյանքի վերջին տարիները կճգներ սուրբ Գրիգոր Լուսավորիչ: Թիֆլիսի հայոց թեմի Գևորգ եպիսկոպոսը, իբրև սուրբ Գեղարդի վանահայր, պատշաճ բարիգալստյան խոսքն ուղղեց պատվիրակության, որուն պատասխանեց միտրոպոլիտ Բառնաբասը:

Նույն օրը այցելություն տեղի ունեցավ Մատենադարան, որը հայկական քաղաքակրթության պատմության թանգարանն է և իր հարստության մեջ կպարունակե բազմաթիվ հայերեն և հունարեն ձեռագիր վավերագրեր:

Հաջորդ օրը պատվիրակությունն այցելեց Ծիծեռնակաբերդի Հայ նահատակներու հուշարձանը, 1915-ին թուրքերուն կողմե նահատակված 1,500,000 հայերու, և ծաղկեպսակ զետեղեց, որուն կեդրոնը կար կարմիր մեխակներով զարդարված հսկա խաչ մը, խորհրդանիշ՝ անմեղ արյան: Ծաղկեպսակի զետեղումին, պատվիրակության ընկերացավ Հայաստանի ՍՍՀ կրոնից նախարարը:

Այս առթիվ լայնորեն հետադարձ անդրադարձումներ ունեցան երկու ժողովուրդներուն միասնաբար մղած պայքարներուն և անոնց վիճակված նույնանման բախտի մասին և բարձր գնահատվեցան հելլեն և հայկական բարեկամության մնայուն կարևորությունը: Ապա պատվիրակությունը այցելեց ս. Էջմիածին: Էջմիածինը հսկա և փառավոր տաճար մըն է, դարավոր կեդրոնը հայ հավատքին և եկեղեցիին: Այնտեղ կպահվի ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, որ հայերուն համար ամենաթանկագին և ամենասուրբ մասունքն է: Էջմիածին կնշանակե՝ «Այստեղ իջավ Միածինը», քանզի Տերը տեսիլքի մեջ երևեցավ սուրբ Գրիգորին և ցույց տվավ տեղը, ուր պետք է կառուցվեր տաճարը:

Էջմիածնի մեջ պատվիրակությունը շփում ունեցավ աստվածաբանական ակադեմիայի ուսանողներու և վանականներու հետ:

Հատուկ հանդիսության ընթացքին, լուսարարապետ տ. Հուսիկ սրբազան, պատվիրակության ուղղած իր բարիգալստյան խոսքին մեջ ըսավ հետևյալները.

«Առաքելական տարիներուն, երբ առաջին քրիստոնյաները կմիանային, ջերմ սեր մը կզգային իրարու հանդեպ: Նույն հրճվանքը և նույն հոգեկան գոհունակությունը կզգանք նաև մենք այժմ, որովհետև ժամանել եք այս պատմական կեդրոնը, ս. Էջմիածին, օրթոդոքս հնագույն, պատմական եկեղեցվո բարձրաստիճան ներկայացուցիչներդ: Ես, իբրև եպիսկոպոս և լուսարարապետը այս տաճարին, Նորին Սրբություն Հայոց Տ. Տ. Վազգեն կաթողիկոս-Պատրիարքի անունով և մեր կղերական մյուս եղբայրներուն կողմե՝ ի սրտե կողջունեմ ձեր գալուստը:

Այս տաճարը կառուցվեցավ 300 թվականին, նախապես գոյություն ունեցող տաճարի մը ավերակներուն վրա: Այս տաճարը ազգային է և հայկական: Սակայն անոր հիմնադիրը Ինքը Քրիստոս եղավ, որ տեսիլքի մեջ երկնքեն իջնելով, ցույց տվավ այս տեղը ս. Գրիգոր Լուսավորչին, ուր պետք է կառուցվեր տաճար մը: Սուրբ Էջմիածինը միաժամանակ առաջին սուրբ տաճարն է համայն քրիստոնեության:

Եկաք իբրև ուխտավորներ այս սուրբ տաճարին: Այս առթիվ մենք կմաղթենք, որպեսզի մեր Տերը Հիսուս Քրիստոս, միացնե մեր երկու պատմական եկեղեցիները, հույն օրթոդոքս և հայկական, ավելի մեծ սիրո և եղբայրության մեջ:

Թող Տերը մեր Հիսուս Քրիստոս, հաճությամբ ընդունի ձեր աղոթքն ու երկրպագու-

թյունը, և մեր երկու եկեղեցիները մեր Տիրոջ շնորհովն ու օրհնությամբը շարունակեն իրենց գործը սիրո, միասնականության և խաղաղության: Թող Տերը զորացնե մեզ եղբայրական սիրո մեջ:

Կմաղթենք ձեզ և Հունաստանի եկեղեցվո պատվիրակության մյուս պատվական անդամներուն քաջառողջություն և երջանկություն, որպեսզի կարենաք շարունակել ձեր սուրբ գործը, ի պայծառություն և հառաջդիմություն ձեր եկեղեցվո և ձեր ժողովուրդի կրոնական, քրիստոնեական դաստիարակության»:

Կիտրոսի տ. Բառնաբաս միտրոպոլիտը պատասխանելով՝ ըսավ հետևյալը.

«Ռուս եկեղեցվո պատրիարքության վերահաստատման 60-ամյակի տոնակատարութենեն հետո, որոնց ներկա եղանք, ենթադրեցինք, թե մեզ համար հիանալի առիթ կներկայանար, ի շահ հոգևոր հաղորդակցության՝ գալ և այցելել ս. Էջմիածին, ծանոթանալ նաև հայ ժողովուրդին հետ և այցելել անոր եկեղեցիները:

Այսօր, շնորհիվ հայ եկեղեցվո Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Հայրապետի հրավերի և եղբայրական բարյացակամության, կգտնվինք Հայաստանյայց եկեղեցվո կեդրոն, հանրածանոթ և աշխարհահռչակ ս. Էջմիածնի մեջ:

Զայն կճանչնայինք արդեն հնուց ի վեր, իբրև Հայաստանյայց եկեղեցվո սրբավայր. և այսօր զայն կտեսնենք և կվայելենք մեր աչքերով և մեր սրտով:

Խորապես պարտավորված կզգանք մեզ, այն ազնիվ տրամադրության համար, որը ցուցաբերվեցավ Հունաստանի եկեղեցվո պատվիրակությանս: Պարտք կզգամ նաև մյուս եղբայրներուս կողմե ջերմագին շնորհակալություն հայտնելու թե՛ Հայոց Հայրապետին և թե՛ բոլոր կղերականներուն, որոնք իրենց ազնվությամբ, սիրով և հյուրասիրությամբ շրջապատեցին մեզ:

Մեր հարաբերությունները Հունաստանի մեջ հայ եկեղեցվո հետ իրապես բարեկամական են: Մեր երկրին մեջ ունինք բավական թվով հայեր, որոնց հետ շատ լավ կգործակցինք: Թե՛ մենք իրենց կօգնենք, երբ որ հարկ ըլլա, և թե՛ անոնք ամենայն հոժարությամբ և ազնվությամբ կմասնակցին մեր կյանքի բոլոր մարզերու հառաջդիմության:

Ինչպես որ շեշտեց տ. Հուսիկ սրբազանը, մեր երկու ժողովուրդներու հարաբերությունները միշտ եղած են սերտ և եղբայրական՝ ոչ միայն անոնց պատմական ժողովուրդներ ըլլալուն համար, այլ նաև անոր համար, որ անոնք իրենց պատմական կյանքի ընթացքին մեջ ունեցած են նույն փորձություններն ու դժվարությունները:

Ամեն բանե առաջ անոնց դիմագրաված նույնանման փորձությունները տված են ընդհանուր բարի արդյունք մը. այն է՝ հաստատել հասարակաց կամուրջ մը փորձության ենթարկվածներուն միջև, համաձայնության և փոխադարձ սիրո կամուրջ մը: Մեր նույնանման փորձություններով, այն արյունով, որ կորսնցուցած են երկու ժողովուրդներն ալ իրենց պատմական կյանքի դժվարությանց ընթացքին, մեր վշտի արցունքներով, մեր մարտիրոսներու աճյուններով հաստատած ենք մեր միջև կամուրջ մը, սիրո կամուրջը: Ահա այդ կամուրջով է, որ քիչ առաջ գացինք հայ նահատակներու և Հայաստանյայց եկեղեցվո մարտիրոսներու Ծիծեռնակաբերդ հուշարձանը, մատուցելու մեր հարգանքի տուրքը և ընելու մեր աղոթքը այն հայերուն համար, որոնք ինկան իրենց հայրենիքին համար, իբրև մարտիրոսներ հավատքի և հայրենիքի: Եվ հիշեցինք այնտեղ մեր ալ մարտիրոսները, մարտիրոսներ՝ նույն դահիճներուն կողմե, որոնք թե՛ անցյալին և թե՛ մեր օրերուն ալ մարտիրոսացան, Կիպրոսի վերջին ողբերգության ժամանակ: Թող հավիտենական ըլլա հիշատակը հայ և հույն մարտիրոսներուն, որոնք ինկան ազատության և հավատքի համար:

Այսօր կապրինք բանակցությանց շրջան մը: Մարդիկ կջանան խոսիլ իրարու հետ. վերացնել որոշ արգելքներ և նստիլ սեղանի մը շուրջ, վերացնել իրար անջատող տարբերությունները և սիրով և բարի տրամադրությամբ հարթել դժվարությունները և ստեղծել միացման ընկերություն մը՝ ըլլա՛ քաղաքներու մեջ, ըլլա՛ մեր եկեղեցական կյանքին մեջ:

Այսպիսի ժամանակաշրջանի մը մեջ, որու ընթացքին հարաբերություններ կմշակենք քրիստոնյաներու հետ, որոնցմե մեզ կբաժնեն լայն հեռավորություն և մեծ տարբերություններ, կհավատամ, թե Աստուծո կամքն է, որ ավելի բաց և անկեղծ բանակցություն մը տեղի ունենա մեր երկու եկեղեցիներուն միջև: Մեր տարբերությունները կրնան վիճելի ըլլալ: Ճիշտ անոր համար, կհավատամ, թե փոխադարձ այցելություններն ալ մեր միջև կրնան հաջողության առաջնորդել բանակցության գործը և ջանքը՝ հոգուտ միության:

Դժվարություններ միշտ գոյություն ունին մարդոց կյանքին մեջ: Սակայն հոգուտ այդ դժվարությանց վերացումին, կուգա Աստուծո «Հավելյալ» շնորհքը, որ լուծում և հաջողություն պարգևե անոնց:

Մասնավորապես դուք, այստեղ Հայաստանի մեջ, այդ շնորհքը ամեն օր կտես-

նեք ձեր աչքերով, երբ ձեր ակնարկը կը-դարձնեք դեպի Արարատը: Ընդհանրական կործանումի մը ընթացքին, Ջրհեղեղի ժամանակ Արարատը, շնորհիվ Աստուծո զորության և օրհնության, մարդկային ապահովության նավահանգիստը հանդիսացավ:

Երանի՜ մեր երկու ժողովուրդները, որ ապրեցան ու կապրին անհամար դժվարություններ, Տերը բարձրացնե նոր Արարատի մը կատարը: Երանի՜ Աստուծո շնորհքը մեզ զգալի դարձնե, թե Իր հովանիին և օրհնության շնորհիվ է, որ պիտի զգանք միայն մեր ապահովությունն ու փրկությունը:

Կրկին անգամ ի սրտե շնորհակալ ենք ձեզմե, ձեր հյուրասիրության համար և բարի տրամադրության համար, և մեր ամբողջ հոգվով կմաղթենք, որ Հայաստանյայց եկեղեցին վայելե խաղաղ և հոգեկից օրեր, շնորհիվ իր կաթողիկոս-Պատրիարքի լուսավոր առաջնորդության, որը պիտի անդրադառնա նաև երկրի բնակչության ընկերային կյանքին վրա: Երանի՜ Աստված Իր օրհնությունը ամոռ մեր երկու ժողովուրդներուն վրա և մեզ հովանավորե Իր շնորհքովը և Իր սիրովը:

Աստուծո օրհնությունն ու շնորհքը մեզ հետ ըլլան, հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Ս. Էջմիածնի մեջ մեր պատվիրակությունը հիացավ եկեղեցական արվեստի անգին գանձերուն և հայ ժողովուրդին դեպի իր հավատքը տածած հարգանքին վրա:

Մեր Հայաստան այցելության չնախատեսված անակնկալներեն մեկը եղավ այն, որ ամեն տեղ կգտնվեին հունաստանցի հայեր, որոնցմե ոմանք բարձր պաշտոններու մեջ են ուսումնական բարձրագույն հաստատություններու (պետական և եկեղեցական) և որոնք հունարեն կխոսեին: Անոնցմե շատեր ուրախությամբ համակված, կփութային ողջունելու մեզ և իրենց ծառայությունները մատուցելու պատվիրակության, և հիացումով և կարոտով կարտահայտվեին իրենց «Երկրորդ հայրենիք»-ին, Հունաստանի մասին:

Ուրբաթ, 2 հուլիսին, հունական պատվիրակությունը պատվով ճանապարհ դրվեցավ, սուրբ Էջմիածնեն մեկնեցավ դեպի Լենինգրադ, անհուն հուզումով համակված՝ այն ջերմ ընդունելութենեն, որուն արժանացավ Հայաստանի մեջ, ինչպես նաև հայ ժողովուրդին մեզի հանդեպ տածած ազնիվ զգացումներեն:

Այս առաջին այցելությունն էր, որ կրլլար Հայաստանյայց եկեղեցիին հույն եկեղեցվո կողմե, և որպես այդ, մասնավոր նշանակություն ուներ, իբրև սկիզբը նախատեսվող հարաբերությանց շարունակության:

Կհուսանք, որ ապագային ալ ավելի պիտի զարգանան հարաբերությունները երկու եկեղեցիներուն միջև, այնքան, որ կարենան արձագանքն ըլլալ երկու ժողովուրդներուն փոխադարձ սիրո և այն համընթաց ուղիին, որ կար անցյալին և պիտի վերահաստատվի նաև այսօր:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՎՐԱՄԻՏԻՍ
Ավագերեց

Աթենք



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԺՈՂՈՎ ԲԱԶԵԼՈՒՄ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1975 թվականի Նայրոբիի ընդհանուր ժողովի որոշումով և 1977 թվականի ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի կարգադրությամբ, Եկեղեցիների համաշխարհային խորհրդին առընթեր ստեղծվել էր մի հատուկ գրասենյակ՝ «Աստվածաբանական դաստիարակության ծրագիր» անվան ներքո՝ զբաղվելու համար հոգևորականների պատրաստության գործով և եկեղեցիների միջև սերտ հարաբերություններ մշակելու համար:

Նման մի գրասենյակ ստեղծվել էր դեռևս 1938 թվականին Լոնդոնում՝ աստվածաբանական կրթություն ջամբելու համար բազմաթիվ եկեղեցիների հոգևորականներին, այդ թվում նաև հայ եկեղեցու սպասավորներին:

Հետագայում վերոհիշյալ գրասենյակը փոխադրվել է Ժնև: Այդ գրասենյակի տնօրենն է պատվելի Ահարոն Սապսզյանը, որի նախաձեռնությամբ էլ սույն թվականի հուլիսի 4—7 օրերին Շվեյցարիայի Բազել քաղաքի Միսիոնհաուզում գումարվել է օրթոդոքս եկեղեցիների աստվածաբանական ճեմարանների ներկայացուցիչների առաջին ժողովը, որին մասնակցել են բազում օրթոդոքս եկեղեցիների պատվիրակություններ:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ժողովին մասնակցել է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի վերատեսուչ տ. Շահե արքեպ. Ամեմյանը:

Ժողովում քննության են առնվել աստվածաբանական ճեմարանների ներկայացուցիչների կողմից պատրաստված տեղեկագրեր և նրանցում շոշափված կրթական-դաստիարակչական բազում հարցեր:

Ժողովում ընթերցվել են երեք դասախոսություններ՝ հետևյալ թեմաների շուրջ.

ա) «Սուրբ պատարագի դաստիարակչական դերը և «Խորհրդակատարություն խորհրդակատարությունից հետո»-ի հոգևոր առաքելականությունը»:

բ) «Աստվածաբանական դաստիարակության բարիքը տարածել ձեռնադրված հոգևորականությունից այն կողմ՝ Աստուծո ժողովրդի վրա»:

գ) «Աստվածաբանական դաստիարակության էկումենիկ տարողությունը»:

Սույն դասախոսությունների շուրջ տեղի են ունեցել մտքերի լայն և հետաքրքիր փոխանակումներ:

Բազելի խորհրդակցության նիստերի մեծ մասին նախագահել է տ. Շահե արքեպ. Ամեմյանը:

Խորհրդակցությունում որդեգրվել է հանձ-

նարարությունների մի ամբողջ շարք՝ ամփոփված վեց գլուխների ներքո, և շեշտվել է նման խորհրդակցությունների անհրաժեշտությունը հետագայում, որպեսզի հանախակի վերաքննվեն աստվածաբանական ճեմարանների թե՛ ուսումնական ծրագրերը և թե՛ դասավանդվող ուսումնական առարկաներն ու նրանց դասավանդման մեթոդները:

Խորհրդակցությունում որոշվել է ստեղծել մնայուն մի մարմին՝ աստվածաբանական ճեմարանների միջև կապ պահպանելու համար: Որոշվել է նաև խորհրդակցությունում քննարկված հարցերը և ընդունված որոշումները ենթարկել ժողովին մասնակից յուրաքանչյուր եկեղեցու նվիրապետական իշխանությունների ուշադիր նկատառմանը:

Խորհրդակցությունում «Հայ եկեղեցու հոգևոր կրթարանները» թեմայի շուրջ հետևյալ բովանդակալից զեկուցումով հանդես է եկել տ. Շահե արքեպիսկոպոսը:

Տ. ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Հայաստանյայց եկեղեցին ունի չորս դրպրեվանքեր իր նվիրապետական չորս Աթոռներուն կից. առաջինը՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանն է, որ կգտնվի Ամենայն Հայոց Կաթողիկոսության կից, նույն Կաթողիկոսարանին մեջ, Հայաստանի մայրաքաղաք Երևանեն մոտ 20 քիլոմետր հեռավորության վրա: Երկրորդը կգտնվի Կիլիկիո Կաթողիկոսարանին մեջ, Պեյրութի մոտ—Լիբանան—որուն մասին ձեզի պիտի խոսի Տաթև եպիսկոպոս: Երրորդը կգտնվի Երուսաղեմի հայոց Պատրիարքարանին մեջ և կոչվի Ժառանգավորաց Վարժարան և ընծայարան: Իսկ չորրորդը կգտնվի Պոլիս, Թուրքիո հայոց Պատրիարքարանին մոտ, և կկոչվի ս. Խաչ դպրեվանք: Առաջին, երրորդ և չորրորդ դպրեվանքերուն մասին պիտի փորձեմ այստեղ նախ ընդհանուր տեղեկություններ տալ և ապա ամփոփ գծերու մեջ նկարագրել անոնց դաստիարակության բնույթը:

Էջմիածնի հոգևոր ճեմարանի պատմությունը կարելի է սկսիլ ս. Գրիգոր Լուսավորիչի օրերեն, երբ, ինչպես կրսե իր պատմաբանը Ագաթանգեղոս, քրիստոնեացնելե ետք Հայոց թագավորական տունը և քանդելե ետք Հայոց աշխարհի կռապաշտական կեդրոնները, անիկա հավաքեց քուրմերուն զավակները, տալու համար անոնց քրիստոնեական դաստիարակություն և պատրաստելու համար զանոնք որ երթան Հայաստանի բոլոր գավառները և քրիստոնեացնեն հայ ժողովուրդը: Ասիկա կպատահեր չորրորդ դարու առաջին քառորդին: Այդ շրջանեն ետք եկեղեցականներու պատրաստության գործը հայ եկեղեցվո պետքին հետ զարգացավ և տարածվեցավ: Սակայն հոգևոր դաստիարակության պատասխանատվությունը մնաց միշտ ծանրացած Ամենայն Հայոց Կաթողիկոսության ուսերուն: Ս. Էջմիածնի այսօրվան ճեմարանին պատմությունը կսկսի գործնականապես 19-րդ դարուն, 1874 սեպտեմբեր 8-ին, երբ Գեորգ Դ կաթողիկոս հիմնեց իր անունը կրող ճեմարանը, հրավիրեց այնտեղ ժամանակի ամենեն կարկառուն ուսուցիչները և պատրաստեց հույլ մը հոգևորականներու, թե գիտական և մտավորական աշխատանքի և թե հովվական գործերու համար: Ճեմարանին կյանքը տևեց մինչև 1917, երբ պատերազմի պատճառով փակվեցան անոր դուռները: Պետք էր սպասել մինչև 1945, տեսնելու համար վերաբացումը հոգևոր վարժարանին (Theological School)՝ Էջմիածնի հոգևոր ճեմարան (Religious Academy of Etchmiadzine) անունին տակ: Այդ թվականեն ասդին հոգևոր ճեմարանը կպահե երեսունհինգ աշակերտներ (երբեմն մինչև 70), բաժնված վեց դասարաններու վրա—երեք բարձրագույն դասարաններ և երեք լսարաններ: Աշակերտներ կընդունվին այնտեղ վերջացնելե ետք երկրորդական կրթությունը, այսինքն 10-րդ դասարանը, ըստ սովետական կրթական դրության, մոտավորապես 17 տարեկանին: Վեց կամ յոթ տարիներ ուսանելե ետք կընդունին իրենց ձեռնադրությունը իբրև աբեղա, քահանա: Առաջին դասարաններու մեջ կդասավանդվին բացի հայոց լեզվեն և գրականութենեն, ռուսերեն և անգլերեն. կդասավանդվին նաև հայոց հին լեզուն՝ գրաբարը և հին գրականությունը՝ մատենագրությունը, ինչպես նաև եկեղեցական և ընդհանուր երաժշտություն: Իսկ հոգևոր կրթությունը կշամբվի Հին և Նոր Կտակարանի պատմությամբ և մեկնությամբ, ինչպես նաև քրիստոնեական եկեղեցվո սուրբերու վարքով, քրիստոնեականի, ինչպես նաև հայ եկեղեցվո պատմության ուսուցմամբ և վերջապես, երեք տարիներու վրա ալ կդասավանդվին ընդհանուր պատմություն և աշխարհագրություն: Իսկ լսարանական բաժնին մեջ շեշտը կդրվի ավելի խոր ուսուցումին Հին և Նոր Կտակարաններու մեկնության, վարդապետական աստվածաբանության և հայ եկեղեցվո պատմության, որոնց վրա կավելնան երկրորդ, երրորդ և վերջին լսարաններու մեջ՝ հոգեբանություն, տրամաբանություն, եկեղեցական իրավունք, ծիսագիտություն, հովվական աստվածաբանություն և քարոզխոսու-

թյուն, ինչպես նաև ընդհանուր գրականության պատմություն և ընդհանուր եկեղեցվո պատմություն: Վերջին տարիներուն, Վեհափառ Վազգեն կաթողիկոսի կարգադրությամբ, երրորդ լսարանի ծրագրին մեջ մտած է նաև հատուկ դասախոսություններու շարք մը, տարեկան 60 պահ, էկումենիզմի մասին:

Վերջին տարիներուն, Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ, հիմնովին վերակազմվեցավ Էջմիածնի ճեմարանի ուսումնական ծրագիրը, ըստ ժամանակի եկեղեցական պահանջներուն:

Գալով Երուսաղեմի դպրեվանքին, ան գոյություն ունեցած է սրբոց Հակոբյանց վանքին մեջ որքան ատեն որ Պատրիարքությունը գոյություն ունեցած է, այսինքն վեցերորդ դարեն. հոն պատրաստված եկեղեցականները եղած են գլխավորաբար միաբաններ ս. Հակոբի, որոնք զբաղած են հայրախոսությամբ, աստվածաբանությամբ, իմաստասիրական ուսումներով. բայց գործնականապես անոնք եղած են գրիչներ (Scribes), որոնք ընդօրինակած և տարածած են կրոնական գրականության ձեռագիր աշխատանքները: Երուսաղեմի դպրեվանքին նոր շրջանի պատմությունը կսկսի 1833-ին, երբ Զաքարիա պատրիարք կորոշե կազմակերպել Աստվածաբանական վարժարանը արդիական կերպով և կհրավիրե ուսուցիչներ Պոլսեն, վերակազմելու համար ծրագիրը և ուսուցման մեթոդը: Անկե ասդին Երուսաղեմի դպրեվանքը ունեցած է հաջող և տկար շրջաններ, սակայն բնավ չէ ընդհատված անոր աշխատանքը: Այստեղ աշակերտներ կընդունվին շատ ավելի կանուխ տարիքեն, նախակրթարանը ավարտելե ետք (12—13 տարեկան) և հինգ տարի կստանան երկրորդական ընդհանուր ուսում, այնպես ինչպես որևէ երկրորդական վարժարանի մեջ. հավելյալ կստանան կրոնական դաստիարակություն, Հին և Նոր Կտակարանի պատմություն, քրիստոնեական (Catechism), գրաբար և հայ եկեղեցվո պատմություն: Հին դրությամբ, երկրորդական ուսման այս ծրագիրը կտարածվեր չորս տարիներու վրա, որոնց կհետևեին աստվածաբանական ուսման երեք տարիներ—ընդամենը յոթը տարի: Վերջին երեք տարիներուն կդասավանդվին հոգեբանություն, տրամաբանություն, իմաստասիրություն, պատմություն, բնազանցություն, աստվածաբանություն, հայրախոսություն, ծիսագիտություն, ընդհանուր եկեղեցվո պատմություն, հայ եկեղեցվո պատմություն և եկեղեցական երաժշտություն, ինչպես նաև վերջին տարին՝ Հովվական աստվածաբանություն և քարոզխոսություն:

Վերջին 13 տարիներուն Երուսաղեմի Աստվածաբանական դպրոցի ծրագիրը հիմնապես վերակազմվեցավ նոր պահանջքներու թելադրությամբ: Երկրորդական վարժարանի մասը հինգ տարիներու վրա տարածվեցավ, որուն ավարտին ուսանողները կմասնակցին Ճի-Սի-Ի.ի քննություններուն՝ կազմակերպված Լոնտոնի համալսարանի կողմե և Պրիթիշ Քաունսըլի միջոցավ: Երկրորդական վարժարանի աշակերտները, որոնք 13—18 տարեկան են, կսորվին չորս լեզուներ. արդի հայերեն և դասական հայերեն, անգլերեն, արաբերեն և եբրայեցերեն: Իսկ ընծայարանի երեք տարիները բարձրացվեցան չորսի, որոնց ընթացքին շեշտը կդրվի առավելաբար Հին և Նոր Կտակարաններու ներածության մեկնության վրա, ինչպես նաև հայ հին մատենագրության:

Երուսաղեմի Աստվածաբանական դպրոցի աշակերտներուն թիվը, որ առ հասարակ եղած էր 30—35, այժմ կհասնի 70-ի, և ընդլայնումի նոր ծրագիրով գալիք մի քանի տարիներու ընթացքին հավանաբար բարձրանա 100-են վեր:

Գալով Կ. Պոլսո Պատրիարքության կապված դպրեվանքին, անիկա շարունակությունն է մեծ հռչակ վայելող և մեր եկեղեցիին ղեկավար դեմքերը տվող Արմաշի դպրեվանքին, որ 1915-ին մեր բոլոր վանքերուն և դպրոցներուն հետ փակվեցավ և քանդվեցավ: 1950-ին է որ Գարեգին պատրիարք Խաչատուրյան, Սկյուտարի բարձունքին վրա վերաբացավ աստվածաբանական դպրոց մը ս. Խաչ անունով, չափազանց դժվար պայմաններու մեջ, և այսօր դժվար է ըսել թե անիկա որևէ կերպով կրցավ լեցնել Արմաշի դպրեվանքին թողած պարապը:

Հասկնալու համար այս երեք դպրեվանքերու այժմու կյանքը, պետք է նկատի ունենալ երկու հիմնական իրողություններ. առաջինը կապված է հայ ժողովուրդի պատմության հետ, և երկրորդը՝ մեր եկեղեցվո նկարագրին հետ: Պատմական իրողությունը որուն կակնարկենք, այն անհավոր ցեղասպանությունն է որ 1915-ին, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին գործադրվեցավ հայ ժողովուրդին վրա: Ոչ միայն մեկուկես միլիոն հայեր ջարդվեցան Թուրքիո մեջ, այլ առանց հետք ձգելու կործանեցան և ջնջվեցան դարավոր վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ և եկեղեցական համայնքներ: Այդ ցեղասպանության հայ եկեղեցին տվավ անհավոր տուրքը—բնաջնջումը 1500 եկեղեցականներու, ամենեն ա-

հավոր տանջանքներու մեջ, որովհետև անոնք նկատվեցան իբրև ազգային ղեկավարներ: Անոնց թիվին մեջ են քահանաները, վանականները, վարդապետները և եպիսկոպոս ու արքեպիսկոպոս առաջնորդները: 1915-ին ցեղասպանությունը փոխեց նաև հայ եկեղեցիի նկարագիրը, որովհետև արմատախիլ ըրավ ժողովուրդը պատմական իր հողեն և ցրվեց զայն աշխարհի չորս կողմերը: Հոգ չէ թե օտար լուծի տակ, սակայն մինչև 1915, մեր եկեղեցին 1600 տարի շարունակ ապրեցավ իր հողին վրա, իր ավանդական երկրին մեջ: Անոնք որ կրցան ազատիլ ցեղասպանությենեն, աքսորվեցան և ապաստան գտան օտար երկիրներ: Անոնք այդ թվականեն ի վեր կապրին աքսորի մեջ, և իրենց ողբերգության ստեղծած հոգեկան բեկումը ամենօրյա իրականություն մըն է, մեր եկեղեցիի առօրյա կյանքին մեջ: Իսկ Սովետական Հայաստանի մեջ, թեև մեր ժողովուրդը գտավ դարերով կորսնցուցած իր անկախությունը և պահեց իր ֆիզիքական գոյությունը, ծաղկեցուց իր պատմական հայրենիքի այն մասը որ զերծ կրցավ մնալ ցեղասպանությենեն, թեև այնտեղ ծաղկեցան լեզուն, գրականությունը, արվեստները և տնտեսությունը, սակայն եկեղեցին ապրեցավ դժվար տարիներ, բայց ժողովուրդին հավատքը, բարեպաշտությունը և ավանդական ջերմեռանդությունը շարունակվեցավ հետզհետե ավելի գեղեցկորեն, ուժ ստացած նահատակներու արյունեն: 1945-ին է միայն որ եկեղեցին կարելիություն ստացավ հոգևոր նոր սերունդ պատրաստելու:

Գալով եկեղեցականներու պատրաստության գործին, ատիկա մեր եկեղեցիի ազգային նկարագիրը կբնորոշե:

Մեր օրերուն, ազգային եկեղեցիի հասկացողությունը կկարոտի ոչ միայն բացատրության մը, այլ նաև արդարացումի: Ամերիկայի Միացյալ նահանգներուն մեջ, Արևելյան եկեղեցիի այս տարբերակը բնորոշելու համար կգործածվի «տոհմային» (Ethnic) հանդուրժողական բառը, նկարագրելու համար ռուսական, ռումանական, հունական կամ հայկական եկեղեցին, իբրև տեսակ մը կրոնական ֆոլքլոր, հեռուներեն եկած և միասին բերած անսովոր ոճ մը պաշտամունքի: Էքյումենիկ շրջանակներուն մեջ, ընթացիկ բառն է «մշակույթ», ժիտական իմաստով, հասկցված իբրև տեսակ մը կրոնական շովինիզմ, արգիլող եկեղեցիները որ դուրս գան իրենց պատյանեն, պայթեցնեն կարոտը անցյալի իրենց փառքին, քակեն շղթաները իրենց ավանդություններուն, կարենալ մտնելու համար արդի աշխարհի միջազգայնական գաղափարականությենեն ներս:

Եկեղեցիի մը ազգայնականությունը հեռու է այս ծաղրանկարներեն: Ան միացյալ կապն է **երկրի մը, ժողովուրդի մը** և **հավատքի մը:** Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստուծույն կողմե՝ հրավերն է բոլոր ազգերուն, որ մտնեն իր Արքայությենեն ներս, Աստուծո և ժողովուրդներեն յուրաքանչյուրին միջև կնքված Նոր Ուխտն է: Յուրաքանչյուր ազգին նույնացումն է «Նոր Իսրայել»ին: Աստվածաշնչական հավատքի լույսն է, ծագած ամեն ազգի ճամբուն: Հարությունն է ազգի մը իր սեփական հողին, իրեն հատուկ մշակույթին և իր տեսիլքին մեջ:

Հայերը այսպես հասկցան Աստվածաշունչը: Եվ Աստվածաշունչը ըրավ զանոնք ազգ մը, որովհետև Արարատի աշխարհը տեսան իբրև խոստացված երկիրը, որը, քրիստոնեացումով, եղավ սուրբ Երկիրը:

Ազգայնացումի իրականությունը եկեղեցի մը չի զատեր և կղզիացներ մի, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցիի հաղորդությենեն: Ընդհակառակը, ան կստեղծե նոր կապ մը այդ ժողովուրդին և Աստուծո միջև, ազգային կապը: Ազգայնացումը կըլլա վտանգավոր երբ եկեղեցի մը նույնացնե ինքզինք մշակույթի մը կամ ազգային ավանդության մը հետ և հավակնի այլ ազգերու պարտադրել այդ մշակույթն ու ավանդությունը:

Օրինակ մը հիշենք մեր անցյալեն. հայերուն ամբողջ պատմությունը պայքար եղած է երկու ճակատներու վրա՝ Արևելքի պարսիկները, արաբները, թաթարները, սելճուքները որոնք ուզած են իրենց հավատքը պարտադրել և մյուս կողմեն՝ Արևմուտքի պետությունները, որոնք ուզած են կլանել մեզ իրենց մշակույթի և քաղաքական ույժով:

Առաջիններուն, Ե դարու հայ հերոսին, Վարդանի պատասխանը հստակ բանաձևումն է հայերու կեցվածքին. «Այս հավատքեն ոչ ոք կրնա խախտել մեզ, ո՛չ հրեշտակները, ո՛չ ալ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ ջուր և ո՛չ մեկը անավոր տանջանքներեն: Մեր ինչքերը և ունեցածը ձեռքերուդ մեջ են, մեր մարմինները առջևդ են, վարվե անոնց հետ ինչպես որ կուզես: Եթե թողուս մեզ մեր հավատքին, այս աշխարհի վրա պիտի չնախընտրենք ուրիշ տեր, քեզ փոխարինող, իսկ երկինքին մեջ պիտի չընտրենք այլ Աստված Հիսուս Քրիստոսի փոխարեն, որովհետև չկա ուրիշ Աստված»:

Պատճառը որ հայերու դիմադրությունը այսքան անզիջող եղավ միշտ, այն է թե քրիստոնեական հավատքը տված էր իրենց

վստահություն թե Աստված պիտի չլքե զիրենք երբեք, որովհետև, մկրտությամբ ժառանգած էին իր խոստումը. «Ես պիտի ըլլամ ձեր Աստվածը և դուք՝ իմ ժողովուրդը»: Խոստումն մը ավելին, տեսած են անոր իրականացումը այբուբենի ստեղծումով, բայց մանավանդ՝ Աստվածաշունչի թարգմանությունը ստեղծած էր լեզուն և սկսած հայ գրականության Ոսկեդարը: Հարուստ ծեսը լեցված էր խաչաձև եկեղեցիները իր բանաստեղծությամբ, լեցնելու աստիճան ամեն սիրտ ինքնության զգացումով մը: Տարվան բոլոր տոնակատարությունները և վարժարաններու կրթական կյանքը լեցված էին հարության տեսիլքով մը, հարությունը ժողովուրդի մը, կոչված, այլ ժողովուրդներու շարքին, ըլլալու վկայողը Քրիստոսի:

Ահա այս ոգիով է ներշնչված կրթական դրությունը աստվածաբանական մեր ճեմարաններեն ներս:

Ժառանգավոր ուսանողը մեր ճեմարաններուն մեջ կմեծնա և կբացվի կենդանի այդ հավատքին դասարանին մեջ և եկեղեցիի արարողություններուն հոսանքին մեջ: Դժվար է ըսել թե դասարանի ճնտարանին վրայի գիրքերո՞ւն մեջ է որ կգտնե աղբյուրը իր հավատքին, թե՝ եկեղեցիին մեջ: Եկեղեցին իրեն համար պաշտամունքի, արարողության և աղոթքի վայր մը ըլլալե ավելի այն միջավայրն է ուր կզարգանա իր հոգեկանությունը: Առտուն, արևի ծագելեն առաջ ան կմտնե տաճար, հոն արարողության հոսանքով տարվելու համար դեպի իր Արարիչը: Մեր եկեղեցվո ծեսը իրեն համար լավագույն դպրոցն է ուր հաղորդության կմտնե, օրվան տոնի խորհուրդին միջոցավ, Քրիստոսի իրական ներկայության հետ: Ժամերգությունները օրվան ընթացքին կտանին զինք ավելի և ավելի խորունկ գիտակցության մը, թե ինք մասն է եկեղեցիի մը մարմինին, որ շարունակական աղոթքի վիճակի մը մեջ է: Եկեղեցվո ծեսին ընդմեջեն անիկա կերթայ դեպի հաղորդությունը սրբոց, ստանալու համար իր հավատքին սնունդը: Բուն դպրոցը իր հոգեվոր դաստիարակության՝ անտարակույս որ սրբատեղիներն են, ուր ամեն օր կերթա հաղորդվելու Քրիստոսի խորհուրդով: Թե ֆիզիքական և թե խորհրդակատարության ստեղծած հոգևոր միջավայրը իրական ուսուցիչներն են, որոնք կմատնացուցեն Քրիստոսի անձը և կլեցնեն իր հոգին՝ Ավետարանի պատգամով: Եկեղեցին և Քրիստոս իրական ներկայությամբ մը կլեցնեն անոր առօրյա կյանքը: Ավետարանի ուսուցումը դասարանեն ներս մեկնողական և բացատրական բոլոր իր երանգներով կդրոշմեն իր միտքը ճշմարտություններով, որոնք եկեղեցիին մեջ կդառնան իրեն համար աստվածային հայտնություն (Revelation) և հոգեկան ներշնչում. այնպես որ, երբ եկեղեցիին մեջ կլսե նույն այն ընթերցվածները, որոնց մասին ամեն տեսակի բացատրություններ տված է իր ուսուցիչը, այլևս գրքունակ և իմացական բացատրութենեն դուրս կուգա և կընդունի զայն իբրև պատգամ, պատգամ մը՝ զոր իրը ընելու համար այլևս պետք չունենար ուսուցիչի մը միջնորդության: Իսկ տոնակատարությունները, մանավանդ Տերունական տոները, տոնված այն տեղերուն վրա որոնք փրկագործության խորհուրդին դեպքերով օծուն են, անոր համար որ հավատքի աչքերով կնայի անոնց, սրբազան այդ տեղերը կբանան ուսանողի հոգին այն խորհուրդներուն զորս ինք ապագային պիտի տանի իբրև պատգամ իրեն հանձնվելիք համայնքներուն, այսինքն Ծնունդը, Մկրտությունը, Հարչարանքը և Հայտնությունը: Մեր եկեղեցիի ծիսակատարությունը արդեն այնպես մը կարտահայտե Ավետարանին դեպքը ամբողջ տարվան ընթացքին, որ հավատացյալին, մանավանդ մասնակցող եկեղեցականին ամբողջ ուշադրությունը և հոգիի աչքերը սևեռած կպահե Խաչին և անկե հոսող մտածումին, որ խորհրդածության ուղղությամբ մը կառաջնորդե զայն հոգևոր կյանքի հետզհետե բարձրացող վիճակներու: Դպրոցական դասընթացքի ճամբով, եկեղեցական գիտելիքները կշամբվին աշակերտին գլխավորաբար երեք լրացուցիչ դասընթացքներով, որոնք են՝ պատմություն ընդհանուր եկեղեցվո, պատմություն հայ եկեղեցվո և հովվական աստվածաբանություն: Եկեղեցվո պատմությունը ընդհանուր գաղափար մը կուտա վարդապետության զարգացումին և գլխավոր հերետիկոսություններու մասին, որոնք եկեղեցիին վարդապետության կազմությունը պատճառեցին: Հայ եկեղեցվո պատմությունը գլխավորաբար կանգ կառնե մեր եկեղեցվո ներքին զարգացումին վրա: Բայց հայ և մյուս եկեղեցիներու փոխհարաբերություններու մասին, աստվածաբանական հարցերու նկատմամբ, շեշտը անշուշտ կդրվի այն իրողության վրա, որ տիալոկը բնավ կանգ չառավ օրթոդոքս եկեղեցիներու հետ, Քաղկեդոնեն ետք, և փորձերը միշտ կրկնվեցան վարդապետական հարցերու շուրջ հասկացողության մը գալու համար: Այստեղ պետք է նշել մանավանդ այն իրողությունը որ հայ եկեղեցվո պատմությունը զուգընթաց զարգացավ միշտ մեր ժողովուրդի պատմության հետ և հետևաբար ազգային և եկեղեցական կյանքի պատմությունն է որուն

հաղորդ կըլլայ աշակերտը և կգիտակցի այն դերին զոր մեր եկեղեցին կատարեց հայ ժողովուրդի ճակատագիրը առաջնորդելու իր պատասխանատվության մեջ, մանավանդ երբ թագավորությունը կործանեցավ և հայ եկեղեցին ստանձնեց նաև ղեկավարությունը մեր ժողովուրդի ազգային կյանքին:

Թեև Երուսաղեմի մեջ մանավանդ եկեղեցականության պատրաստվող աշակերտը կապրի վանական մթնոլորտի մեջ, սակայն և այնպես կպատրաստվի ծառայելու մեր համայնքներուն աշխարհի չորս կողմը ցրված: Այժմ, բացի եկեղեցական իր առաքելութենեն, Հայոց եկեղեցին իր վրա առած է նաև պարտականությունը պահպանելու մեր ժողովուրդը իր ազգային և եկեղեցական ավանդության մեջ: Որքան ատեն որ իր երկրին մեջ էր, հայ կրոնական համայնքը ուներ մշակույթի և քաղաքակրթության որոշ նկարագիր մը որ զուտ քրիստոնեական էր: Մեր մշակույթը հարազատ իր նկարագիրով կշարունակեր զարգանալ և ծաղկիլ եկեղեցվո անդաստանին մեջ, և եկեղեցականը թե՛ քահանա էր, թե՛ ուսուցիչ և թե՛ ազգային ղեկավար: Այսօր երբ տարբեր մշակույթներու, տարբեր քաղաքական սարքվածքներու, տարբեր ընկերային դրություններու դեմ հանդիման կգտնվի մեր եկեղեցին զանազան երկիրներու մեջ, շատ ավելի ստիպողական պետք մը կզգա շարունակելու ավանդական իր կյանքը առանց սակայն կղզիանալու և կտրելու կամ հակադրելու ինքզինք նոր գաղափարաբանություններեն և մշակութային տվյալներեն: Ամենեն դժվարը ներդաշնակություն մը ստեղծելն է, որով մեր եկեղեցին կարենա պահել էականը և սակայն ինքզինք պատշաճեցնե արագորեն զարգացող և հարատև փոփոխությանց ենթակա նոր միջավայրերուն: Գլխավոր հարցը զոր կդիմագրավենք, աշխարհականացումի խնդիրն է, և եկեղեցականը որ կերթա ծառայելու համայնքներեն ներս իբրև ծիսական քահանա, անհրաժեշտությունը կզգա նաև մեր դպրեվանքերեն ստացած իր ուսման վրա ավելցնելու տեղական աստվածաբանական դպրոցներու տված կրթությունը, որով իր պատրաստությունը կամբողջանա: Անոր համար է որ արտասահմանի մեջ ծառայելու կոչված մեր երիտասարդ եկեղեցականները ստանալե ետք իրենց բուն, հիմնական ուսումը մեր դպրեվանքերեն ներս, կերթան մի քանի տարիներ ուսանելու օրթոդոքս, անկլիքան, ամերիկյան և կամ եվրոպական դպրեվանքերու մեջ: Այնպես որ եկեղեցականներու պատրաստության գործը չի սահմանափակվիր միայն մեր դպրեվանքերով, այլ կնյուղավորվի նաև դեպի ոչ-հայկական հաստատությունները: Նախապատրաստելու համար հայ եկեղեցականը արտասահմանի եկեղեցիներու ծառայության, մենք Երուսաղեմի մեջ արդեն հարաբերության մեջ կպահենք զայն և ս. Քաղաքի բազմաթիվ հաստատություններուն հետ, ինչպես Թանթուրի Ecumenical Theological Institute-ին, ուր շատ հաճախ կերթան դասախոսություններ մտիկ ընելու համար աստվածաբանական հարցերու մասին, կամ ուրիշ հաստատություններու, ուր հաղորդ կըլլան աստվածաբանական արդի մտածումին: Ինչպես 5-րդ դարուն ս. Գրքի թարգմանիչները հայերենի թարգմանեցին նաև եկեղեցական ամբողջ գրականությունը, և այդպիսով հայ եկեղեցին հաղորդ դարձուցին ատորական, հունական և լատինական եկեղեցիներու հայրախոսության գրականությանն, մինչև այսօր ալ մեր դասընթացքներուն մեջ աշխատինք կարելի եղածին չափ օգտագործել և ծանոթացնել մեր աշակերտության ինչ որ կկատարվի և կիրատարակվի մյուս եկեղեցիներուն մեջ: Այնպես որ երբ շեշտը կդնենք մեր եկեղեցվո ազգային նկարագրին վրա, ատիկա ոչ թե առանձնացնելու և կղզիացնելու համար է հայ եկեղեցականը ընդհանուր եկեղեցվո կյանքեն, այլ ընդհակառակը՝ ավելի խորացնելու համար հասկացողությունը եկեղեցվո դերին ընկերության մեջ, որ այս պարագային հայ ժողովուրդն է. և քանի որ այդ ժողովուրդը կապրի նաև իր երկրեն դուրս, ընկերային բոլորովին տարբեր ռեժիմներու մեջ և գաղափարական բոլորովին տարբեր շրջապատներու մեջ, հետևաբար և ստիպողաբար հայ եկեղեցականը պետք է գիտնա լեցնել իր ժողովուրդին հոգևոր պետքերը՝ բաց ծանոթ ըլլալով միջավայրին, և այդ միջավայրին մեջ գործող հայ եկեղեցիի առաքելության:

Թե որքան կհաջողինք մեր այս ճիգերուն մեջ և թե որչափով ճիշտ է և արդարանալի մեր ընտրած ճամբան՝ դժվար է գնահատել այժմ. սակայն կհավատանք որ մինչև հիմա մեր ժողովուրդին մեջ հայ եկեղեցվո ճրագը վառ պահող աստվածային ձեռքը պիտի շարունակե այս եկեղեցիի նահատակներու ոսկորներեն Աբրահամու որդիներ հանել:



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 471
«ԱՄԵՆԱՓՐԿԻՉ» ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 220։—**Պրակները՝** 20, անկանոն, որոնցից Գ՝ 5, Բ և Ի՝ 6, Ա, Դ, Զ, Ը, ԺԲ, ԺԴ, ԺԶ և ԺԸ՝ 10, Ժ՝ 12, Թ՝ 13, իսկ մնացածը (Ե, Է, ԺԱ, ԺԳ, ԺԵ, ԺԷ և ԺԹ) 14 թերթից են բաղկացած։—**Մեծությունը՝** 30,5×25×9,2 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ։—**Կազմը՝** արծաթապատ ըստվարաթուղթ։ Կազմի երեսին կա մի մեծ խաչ, որի վրա գտնվում է խաչված Քրիստոսի քանդակը, 7,5×7,2 սմ. չափերով։ Գլխավերևում գրված է «Ց. Ն.Թ.Հ.»։ Չորս անկյուններում կա մեկական հրեշտակի գլուխ և երկուական թևեր։ Կա նաև փորագրված այլ զարդեր։ Կազմի կոնակը կարմիր կաշի է, որի կենտրոնում գամված է ձվաձև արծաթյա մի քանդակ, 12×8 սմ. չափերով, ներկայացնելով Քրիստոսի համբարձումը։ Չորս անկյուններում կա նույն տեսակի մեկական հրեշտակի գլուխ և երկուական թևեր։ Այս բոլորն առնված է արծաթյա մի շրջանակի մեջ։ «Ամենափրկիչ» ավետարանի այս կազմը նոր է, 20-րդ դարի գործ։ Սկզբնական կազմը, որ ավելի թանկարժեք է եղել՝ արծաթապատ և զարդարված ոսկեհուռ զարդերով, պոկվել և թալանվել է թուրքերի կողմից առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ գերի է մնացել նրանց ձեռքին։ Պոկված զարդերի գամերի տեղերը երևում են կոնակի կաշվի վրա։—**Պահպանակները՝** սկզբում հասարակ երկու, իսկ վերջում տասը թերթ թուղթ։—**Վիճակը՝** անբավարար։ Տեղ-տեղ պատռված և հետագայում (1920 թ.) վերանորոգված է։ Որոշ թերթեր էլ թափվել են։—**Գրությունը՝** երկսյուն։—**Դատարկ թղթեր՝** 173թ։—**Տողերը՝** 21։—**Գծումները՝** ճնշումով։—**Գիրը՝** բոլորգիր։—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի ոչ շատ արժեքավոր մանրանկարչություն։ Կան հասարակ երեք կիսախորան (66ա, 106ա, 174ա), չորս լուսանցազարդեր, մեկական մեծ մարդագիր, գազանագիր, թռչնագիր և զարդագիր (1ա, 66ա, 106ա, 174ա), 5—13 սմ. երկարությամբ, ինչպես նաև մի մեծ թռչուն (174ա), մի քանի զարդագրեր և թռչնագրեր։ Այս բոլորի համար օգտագործված է միայն սև թանաքը, կարմիր և կապույտ ջրաներկ գույները։—**Գրիչը՝** Աստվածատուր։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1317 թ.։—**Վայրը՝** անհայտ, սակայն շատ հավանաբար Արևմտյան Հայաստան։—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրն առաջին համաշխարհային պատերազմից հետո Արևմտյան Հայաստանից տարվել է Պարսկաստան, որից հետո վերջերս ներգաղթողների հետ բերված է Մայր Հայրենիք։ Մատյանը գտնվելով՝ Արարատյան թեմի անունից նվեր է տրված Վեհափառ Հայրապետին, որ այն հանձնել է Մայր Աթոռի Ձեռագրատուն 1977 թ. Դեկտեմբերի 20-ին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ.—220բ.—Ի թուականութիւնս Հայոց ՉԿԶ (1317 թ.—Ն. Մ.) գրեցաւ Սբ. Աւետարանս ձեռամբ ամենամեղ և յետին գրչի անարժանի Աստուածատրի, հրամանաւ և արդեամբք սրբազան և առաքելաշն(որհ) ... (շարունակությունը թափվել է)։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թավկանի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա.—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից և Դ-ից։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Գրված է ձեռագրի վերջում՝ 3-րդ և 4-րդ պահ-պանակների վրա 1920 թ.)

ԱՆՑՔ

Ընդ ժամանակս պատերազմին Համաշխարհայնոյ. ի թուականութեան Փրկչին մերոյ՝ ի 1918 ամի, որ եղև հաղածանք և փախուստ Հայկազեանս ազգի ի ձեռաց արիւնախում զօրացն տաճկաց, յորում և երկ-նանման տաճարք պղծեցան և սրբութիւնք բազումք ընդ ոտս հարան, ընդ որս և Ս. Աւետարանս այս «Ամենափրկիչ» անկաւ գերի, ի ձեռս տաճկաց, որք կողոպտեալ արծաթապատ և ոսկեհուռ զարդս կո-ղիցն և պատառեալ էին թերթս բազումս ի նմանէ և անպիտանիս դարձուցեալ, սակայն շնորհոք ամե-նակարողին մնաց դարձեալ ի Ս. Տեղւոջս:

Եւ զկնի երկրորդ փախստեան (որ 1920 թվի) ուր ա-նոր պատահեալ իմ նուաստիս և անարժանիս ի պաշտօնէից, ցաւ ի սիրտ, պարտ անձինս եդի ընդ հովանեաւ սրբոյ ուխտիս. ըստ իմում կարեաց նո-րոգել և գրել զվիրաւորեալ թերթունս Ս. Աւետա-բանիս: Ցետ այսորիկ որք պատահիքդ յընթեռնուլ զներկոտոնս ողորմի ասացէք մարմնաւոր ծնողաց իմում Զաքարի Սահակի Տիրացուեանց Փոքր Փար-կիթցւոյ և Գայինայէի Մնացականի Տիրացուեանց. և մանաւանդ զհոգևոր ծնող և զուսուցիչ և դաս-տիարակ զՏէր Անանի քահանայն Շիրակունի Փիր-վալեցի, և յիշողդ, յիշեալ լիջիք ի Տեառնէ ամէն:

Ղևոնդ քահանայ Զաքարեան Փ. Փ.:

Ցամսեանն Մայիսի 1924 թ. ի Ս. Փրկիչ եկեղեցի, Դոնարլի գեղջ:

№ 472
ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 259:—**Պրակները՝** 23, յուրաքանչյուրը 12-ական թերթից: Ձեռագրի սկզբում թերթերն ու պրակները խառնվել են: Առաջին պրակն ընկել և կորել է, իսկ Դ և Ե պրակների միջև (Դա) որոշ թերթեր են ավելացել ժամանակի ընթացքում (11 թերթ): Անկանոն և թերի պրակները հետևյալներն են. Է՝ 6, ԺԴ՝ 9, Ե և ԺԳ՝ 10, Ժ, ԺԷ և ԺԹ՝ 11:—**Մեծությունը՝** 21.4×16×5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախ-տակ: Կազմի երկու երեսին ճնշումով եղել են մե-կական խաչ և զարդեր: Կազմի ներսում կպցված է բամբակյա ծաղկավոր կարմիր կտոր, 17-րդ դարի: **Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** ցեցակեր, բայ-բայված և շատ վատ:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դա-տարկ թղթերը՝** 123ա, 123բ և 124բ:—**Տողերը՝** 21:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդա-գրությունը՝** ձեռագիրն ունի բավականին գեղեցիկ մանրանկարչություն, որ հիշեցնում է Վանի դպրոցը: Դժբախտաբար պակասում են բազմաթիվ նկարներ, այսպես օրինակի համար երեք ավետարանիչները, երկու խորանները և այլն: Պակասում է նաև ձեռա-գրի բուն հիշատակարանը: Մատյանում դեռ պահ-պանված են Մատթեոս ավետարանիչի մեծադիր նկարը (1բ), երկու խորաններ (2ա և 201ա): Կան նաև բազմաթիվ թոչնագրեր, մեկ գազանագիր (2ա), մեկ ձկնագիր (107ա), ինչպես նաև բազմաթիվ լու-սանցազարդեր, խաչեր, բույսեր, ծաղիկներ և թռչ-ուններ: Առավելապես օգտագործված են կապույտ և կարմիր գույները, երբեմն էլ կանաչը և դեղինը:—**Գրիչը՝** Ազարիա:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղ-կողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1689 թ.:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** ձեռագիրը նվիրել են Բաղ-դադից Գառնիկ և Ծաղիկ Արաթուն ամուսինները, Վեհափառ Հայրապետի 1978 թ. հունվար-փետրվար ամիսներին Իրաք կատարած Հովվապետական այ-ցելության առթիվ: Նորին Սրբությունը ձեռագիրը Մայր Աթոռի Ձեռագրատուն հանձնեց 1978 թ. մարտի 2-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 72ա.— Զմեղսամած Ազարիայս յ[ի]շ[ե]ցէք թվին ՌՃԼԸ (1689 թ.—Ն. Մ.) գր[ե]ց[ա]ւ:

Թ. 120ա.— Զփծուն Ազարիայս յիշեցէք ի Քս. թվին ՌՃԼԸ (1689 թ.—Ն. Մ.):

Թ. 199բ.— Զմեղսամած և զապիկար Ազարիայ քարտուղար յիշել մաղթեմ ի թվին ՌՃԼԸ (1689 թ.—Ն. Մ.) գրեցաւ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Ցի. Քի. ծառ[ա]յ Տէր Ըստէփանոս գրեցի, օվ օր կարդայ մին բերան ողորմի տայ իմ ծնողաց. գրվեցաւ թվն. փոքրն ՌՃՄԶ-ումն (1707 թ. —Ն. Մ.) շբ. Ը, ամէն:

Թ. 1բ.—Ցասօր Մաթէոս թարգմանիչ ավետա-բանըս:

Թ. 23բ.—...[Կար]ծեմ եթէ ոչ աշխարհս բաւա-կան էր տանել զգիրս զոր թէ գրեալ էին զՍտեփա-նոս աբեղաս յիշե[ա]լ աղաչեմ:

№ 473
ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:—**Մեծությունը՝** 49,5×34,8 սմ.:—**Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրու-թյունը՝** միասյուն:—**Տողերը՝** 34:—**Գծումները՝** ճնշ-ումով:—**Գիրը** նոտրգիր:—**Զարդագրություն՝** կոն-դակն ունի գեղեցիկ զարդագրություն: Կենտրոնի վերևի մասում կա թռչնագիր «Է» տառը, 4,5×2 սմ. չափերով: Կոնդակի սկզբում կա ավելի մեծ չափե-րով երկու տառ «ՑԻ», որոնց վրա դրված է հա-պավման նշանը (երկուսը միասին՝ 10×8,5 սմ): Կոնդակի աջակողմյան մասում նկարված է եռա-հարկ մի գմբեթ, որի վերևում կա մի մեծ խաչ, իսկ կողքերում՝ չորս փոքրիկ խաչեր: Սրանց համար օգ-տագործված են կապույտ, կարմիր, կանաչ և դեղին գույները: Կոնդակի վերևի մասի կենտրոնում կա

Եփրեմ կաթողիկոսի կարմիր մեծ կնիքը, որի տրամագիծը 45 մմ. է։ Կնիքում շրջանակաձև գրված է հետևյալը. «Է. Ծնորհիւ Տ(եառ)ն Տ(է)ր Եփրեմ Կ(ա)թուղիկոս Ամե(նայն) Հայոց ՌՄԹ» (1810 թ. —Ն. Մ.)։ Կնիքի կենտրոնում նկարված է Քրիստոսը, որի երկու կողմերը գրված է «Ցս.Քս.»։— **Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** Եփրեմ Կաթողիկոս ամենայն հայոց (1809—1830 թթ.)։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1810 թ.։—**Վայրը՝** Մայր Աթոռ ս. Էջմիածնի վանք։—**Ծանոթություն՝** կոնդակը նվիրել է Իրաքի հայոց Կենտրոնական վարչությունը Վազգեն Ա. Ամենայն հայոց կաթողիկոսի 1978 թ. հունվար-փետրվար ամիսներին Իրաք կատարած Հովվապետական այցելության առթիվ։ Նորին Սրբությունը սույն կոնդակը Մայր Աթոռի Ջեռագրատուն հանձնեց 1978 թ. մարտի 2-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յի Քրիստոսի ծառայ Տր Եփրեմ Կթուղկոս ամ Հայոց և Ծայրագոյն Պտրիրգ Առաքելականի Սրբ Եկեղեցւոյ Քի, նաև լուսանկար բարձրագահ Աթոռս՝ Սրբ Կթուղկէն Էջմիածնի։

Քահանայապետական անդրանիկ կոնդակաւ մերով ողջոյն և օրհնուի տամք հարազատ Որդւոյդ սրբ Լուսաւորչին և մայր Աթոռոյ Նր ազնուատոհմ Տէր Ղազար Բաղաճանեան շնորհունակ և արժանապատիւ խաչակիր Աւագ Քհնյիդ և որոց ներ են խնդալ ի Տր։ Ծնորհք և ողորմուի Ամենազօրին Այ աղօթեմք, զի բազմացի ի վր ձեր և ի վր հոգւոց և մարմնոց, որդւոց և զաւակաց և ամ ընտանեաց և ազգատոհմի ձերոյ և պահպանեսցէ զկեանս ձեր խաղաղութ և մխիթարութ հոգւոյ և մարմնոյ, և լցուսցէ ամ բարութ երկնի և երկրի՝ Ամէն։ Եւ ընդ ողջունի և օրհնուն յիշեցուցանեմք ձեզ զբանն հոգեկեցոյց՝ զբարիս գործել մի ձանձրասջիք։ Գաղ. 6. զլ. 9. հմր. և ապա արժանի համարելով զձեզ ծառայութն լուսածին ծնողին ձերոյ Կթուղկէ Էջմիածին գերագահ Աթոռոյ Հայաստանեայց, զոր օրինակ սիրելին մեր յարգելի Յոհաննէս Արք Եպս. մեծարու Առաջնորդն Թիֆլիզու կարգեալ է յառաջագոյն, մեք ևս կացուցանեմք զձեզ գործակալ ի վր Հայոց եկամուտ ժողովրդեան որք բնակեալ կան այժմ ի Փամբակաձոր կամ ի մերձակայս նրին՝ հատուածեալք ի ժողովրդենէ հայոց Երևանու, Ելիսաբեթապոլու, Ղարսայ և այլոց սահմանաց և վիճակաց. և պատուիրեմք, ոպ զի ամ հոգևորական գործոց նց՝ այսինքն է՝ Քրիստոնէական օրինաց և կանոնաց պահպանուն, բարութ զգուշութ լինիջիք դուք վերակացութ, և ի Ղարաքիլիսայ բնակեալ տէրունի ժողովրդոց քահանայագործունի ևս դուք կատարեսջիք, և ձեզ և այլոց Երևանցի քհնյիցն եղիցին նք ժողովուրդ, որոց հոգևորական պարտաւորութիւնն դուք վճարեսջիք, և քահանայական արդիւնք նց՝ ձեզ լինիցին ի կերակուր. իսկ եթէ այնպս լաւ համարել լիցի, ժողովուրդք ձեր ընդ բնական ժողովրդոց տեղւոյն և քհնյք ընդ Քահանայից նցին այնպս խառն ի միասին կենցաղավարուի արասջիք սիրով. նոյնպէս և վս ամ արդեանց և հոգևորական նուիրաց նց որք պատկանելքն են սրբ Աթոյս՝ Աթոռահաս, հոգեբաժին, կտակ, և այլ ամ Քրիստոնէական ջերմեռանդուն տուրք, դուք լինիջիք վերահասու, և ստացեալ զնոյնս բարութ քաղաքավարութ, գրեսջիք զայնս ի տումար այն է ի թէֆթէր կատարեալ հարազատութ, և ժամանակէ ի ժամանակ հասուսջիք ի Սբ Աթոռն և կամ ում և հրաման լիցի ի սրբ Աթոյն, յանձնեսջիք նմա, և վս՝ հրզուեց և աշխատուեց ձերոց հաւատարիմ լինիջիք, զի հնդրձ բրզմբպտիկ օրհնութ ունիք վայելել զշնորհսն ի Սրբ Աթոռոյս, և ոչ մնասջիք առանց հոգևոր և մարմնաւոր վարձուց։ Առ այս գործ վէքիլուեն ձեզ յանձնելոյ ահա գրեցաք և զկոնդակ ի վր ամ եկամուտ ժողովրդեանն հայոց. զոր ոպ արժանն է ընթեռնուլ տաջիք ի լուր ամ հասարակութ եկամուտ ժողովրդոց որք տրունիք են ընդհանրական մայր Աթոյ Հայաստանեայց։ Գրեցաք և զգիր առ Առաքել Եպս. Առաջնորդն Սանահնոյ ոչ առնել ինչ հակառակուի ընդդէմ ձերումդ գրելն պատկանեալ գրոց։ Բայց եթէ խնդրեսցէ նա տեսանել զթէֆտէր արդեանցն տրունի ժողովրդ, մեք թէպտ անտարակոյս եմք վս հաւատրմեն ձերոյ, այլ յոգս լուծանելոյ և զտարակուսի նր, մի լիցի ձեզ ընդդէմ ցուցանել նմա զթէֆթէր ձեր. որով հրզուի ձեր ունի և ևս առաւել պայծառանալ, և զնա ևս յիւրումն կամեցողութ մխիթարել և շահել։ Ողջ լեր և շնորհք Տն մերոյ Յի Քի հանդրձ շնորհօք սրբ Քսանիմն Տաճարի և օրտնուր սրցն որք աստանօր եղիցի ընդ հոգւոյդ ձերում միշտ՝ ամէն։ Գրեցաւ ի 1810. ի դեկտմբրի 24։ Ի սբ Կթուղկէն Էջմիածնն։

(ստորագրություն կաթողիկոսի)
Եփրեմ Կթղկս ամ Հյց։

№ 474
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թերթերը՝ 258։—**Պրակները՝** Ա. էջ 1—100, 13 պրակ, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի ԺԲ և ԺԳ, որոնք 6-ական թերթից են. Բ էջ 101—216, 15 պրակ, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի ԺԵ՝ 6, Ա և Բ՝ 7-ական թերթից են. Գ. էջ 217—258, 4 պրակ, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Դ, որ վեց թերթից է։—**Մեծությունը՝** 16×13×5,5 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի մեկ երեսը կա, իսկ կոնակինը կորել է ժամանակի ընթացքում։ Կաշվի վրա ճնշումով սիրուն զարդեր են նկարված։ Բռնիչների երկու գամերը կան, իսկ բռնիչները կորել են։ Կաշվի տակ կա կարմիր և կանաչ բամբակյա երկու կտոր։—**Պահպանակները՝** սկզբում և վերջում երկուական թերթ մագաղաթ, տեքստը՝ Ավետարանից է, գիրը՝ միջին երկաթագիր, ժամանակը՝ 9—10-րդ դարեր։—**Վիճակը՝** բավարար։—**Դատարկ թերթեր՝** չունի։—**Տողերը՝** 19։—**Գծումները՝** չունի։—**Գիրը՝** բոլորգիր։ Հետագայում վերանորոգության ժամանակ որոշ թերթեր լրացված են նոտրգրով (1ա, 1բ, 115ա, 115բ, 229ա—258բ)։—

Զարդագրություն՝ ձեռագիրն ունի մի քանի շատ հասարակ կիսախորաններ (2ա, 102ա, 217ա և 241ա)։ Սակայն մատյանում կան բավականին գեղեցիկ զարդագրեր և լուսանցազարդեր (44ա, 49բ, 83ա, 93բ, 102ա, 217ա և 241ա)։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1279 թ.։—**Վայրը՝** անհայտ։—**Ծանոթություն՝** ձեռագիրը նվիրել են Բաղդադից Գառնիկ և Ծաղիկ Արաթուն ամուսինները, Վեհափառ Հայրապետի 1978 թ. հունվար-փետրվար ամիսներին Իրաք կատարած Հովվապետական այցելության առթիվ։ Նորին Սրբությունը ձեռագիրը Մայր Աթոռի Ձեռագրատուն հանձնեց 1978 թ. մարտի 2-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.—Թուղթ ընդհանրական Ներսէսի Կթղկսի հայոց։ Առ համօրէն համառեռից ազինս։ Որոց տեսչութի(ւն) հաւատացաւ նմա ի Տ(աեռն)է։

Ներսէս ծառայ Քի, և ողորմութք նորին Կթղկս հայոց ...

Թ. 102ա.—(Հարանց վարք)։

Թ. 155բ.—Ի վարուց ճգնաւորաց բանք պիտ. Երբեմն հայրն Անտոն աղաւթէր ...

Թ. 175բ.—Վս ճշմարիտ և անապական կուսութեան թէ որպիսի առաքինութ(եամ)բք կատարեալ լիցի կամ յորոց ախտից լուծցի։

Թ. 185բ.—Փիլիսոփայիցն. յաղագս խելաց և ի մա..բու։

Թ. 186բ.—Յաղագս մանկ. և զաւր.։

Թ. 188ա.—Իմաստասիրաց յաղագս բարեկամաց։

Թ. 189բ.—Յաղագս շոգմոգութե(ան)։

Թ. 190ա.—Յաղագս քաջատոհմութեան և վատ ազգութ(եա)ն։

Թ. 191բ.—Յաղագս լռութեան։

Թ. 193ա.—Յաղագս հանդերձեալ դատաստանին։

Թ. 196ա.—Յաղագս արծաթս(իրութեան)։

Թ. 197ա.—Յաղագս աղաւթից։

Թ. 197բ.—Յաղագս արբեցութե(ան)։

Թ. 198բ.—Յաղագս պատուոյ հարց և որդեսիրու(թեան)։

Թ. 199բ.—Յաղագս բարեբախտից և վատ աշն...։

Թ. 200բ.—Յաղագս մեղաց և խոստովան(ողաց)։

Թ. 201ա.—Յաղագս բժշկաց։

Թ. 201բ.—Յաղագս չար կանանց։

Թ. 202ա.—Յաղագս օրինաց։

Թ. 203ա.—Յաղագս անառակութե(ան)։

Թ. 203բ.—Յաղագս նախախնամութե(ան)։

Թ. 204ա.—Յաղագս փարթամութե(ան), աղքատութե(ան) և արծաթսիրութեան։

Թ. 205բ.—Վասն սիրելեաց։

Թ. 206բ.—Յաղագս իշխանութե(ան)ց։

Թ. 208բ.—Յաղագս երդման։

Թ. 209ա.—Յաղագս խրատու իմաստու(թեան)։

Թ. 215ա.—Նորին ընդ Աղեքսանդրի։

Թ. 217ա.—Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյն։ Յաղագս աշխարհագրութե(ան) յա(ստուա)ծային գիրս գրէ ...

Թ. 221ա.—Աշխարհագիր հատուած երկ։

Թ. 224բ.—Աշխարհք Եւրոպիայ։

Թ. 227բ.—Աշխարհ Լիբիայ։

Թ. 230բ.—Ահա կտրցն միջերկայք կոչցլք։

Թ. 233ա.—Ահա կորցն ամ(ենայն) հայք։

Թ. 235ա.—Ահա կատարեցան ամ(ենայն) տիեզ(ե)րք և պատմութի(ւն) խօսից։

Թ. 235բ.—...ախք զամ(ենայն) խնդրեսցուք եղեալքս զէն։

Թ. 237բ.—Յաղագս աչաց տեսութեան գլ(ու)խ Ժ և Ա։

Թ. 239բ.—Յաղագս արքայութե(ան) երկնից գլ(ու)խ ԺԴ։

Թ. 240ա.—Վասն բանբասանաց գլ(ու)խ ԺԵ։

Թ. 241ա.—(Ե)ռամեծի և քաջ վդտի. Մխիթարայ Գոշի, խստակրօն ճգնաւորի և բանի բուն հոետորի։ Ասացեալ զաղօթս ի ժամ ս(ուր)բ պատարագին։

Թ. 244ա.—Քոյք սրբ և առաքինիք, ճգնաւորք և արգելաւորք ...

Թ. 244բ.—Վս. ելիցն աշխարհէ։

Թ. 249ա.—Յաղագս խոց. գլ(ու)խ Լ։

Թ. 251բ.—Յաղագս խռովութե(ան) գլուխ Լ և Դ։

Թ. 252բ.—Յաղագս խօսից. գլուխ Լ և Ե։

Թ. 253ա.—Յաղագս կանանց. գլուխ Լ և Ը։

Թ. 254ա.—Յաղագս հիւանդութեան գլուխ Խ և Ա։

Թ. 255բ.—Յաղագս հիւրասիրու[թ]ե[ան] գ[լու]խ Խ և Բ։

Թ. 257ա.—Յաղագս հոգոց. գլուխ Խ և երեք։

Թ. 257բ.—Յաղագս հպ[ա]րտութե[ան] Խ և չորս։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 43բ.—Զա[ստուա]ծապատիւ և զառաքելաշնորհ զարբազան հայրապետս մեր զՏ[է]ր [սկզբնական անունը ջնջված է և տեղը գրված հետագայում՝ Յովհաննէս—Ն. Մ.] պահեսցէ Քս Ած երկար ժամանակաւ հովուել զբանաւոր հաւ[ա]տս Քի, և յանվախճան յաւիտեանսն աթոռակից արասցէ զսա Քս Ած լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի ամմէն։

Թ. 94բ.—Փառք համագո[յ] և միասնական սր Երրորդութե[ա]ն հայր և որդւոյն և հոգւոյն սրբոյ այժմ և յաւիտեանս ամմէն։

Թ. 101բ.—Զա[ստուա]ծապատուեալ այրն առաքելական և զուարթ հեղինակն Հայաստանեայց ուսուցող ոգիակեցոյց տնտես [սկզբնական անունը ջնջված է և տեղը գրված է հետագայում՝ Գրիգորիոս... —Ն. Մ.] ...իսկ և ծնողսն իւր յիշեսջիք ի Քս ով ա[ստուա]ծարեալք։

Ի թու[ին] ՉԻԸ [1279 թ.—Ն. Մ.]։

[Ձեռագրի գլխավոր հիշատակարանն ընկել և կորել է։]

(Շարունակելի)

ՀԱՆԳԻՍՏ Տ. ՄԿՐՏԻՉ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ



1979 թվականի հունվարի 28-ին վախճանվեց տ. Մկրտիչ ավագ քահանա Մը-կրտչյանը, որը ավելի քան 60 տարի անշահախնդիր նվիրումով ծառայել է իր ժողովրդին և իր եկեղեցուն, սիրված և հարգված բոլորից, որպես ազնիվ և բարի քահանա:

Հանգուցյալ տեր հայրը ծնվել է 1898 թվականին Ապարանի շրջանի Ծաղկաշեն գյուղում (նախկին Թաքարլու): Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական յոթնամյա դպրոցում: Մանկուց սիրել է հոգևոր ասպարեզը, սաղմոսն ու շարականը և հետագայում իր ողջ կյանքը նվիրաբերել իր եկեղեցու սպասավորության գործին:

1918 թվականին քահանա է ձեռնադրվել՝ ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Խորեն արքեպ. Մուրադբեկյանի և պաշտոնավարել իր ծննդավայրում:

1932 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի կարգադրությամբ հրավիրվել է Մայր Աթոռ ս. Էջմիածին և պաշտոնավարել որպես ծխական քահանա:

Հետագայում, իր նվիրված աշխատանքի համար, արժանացել է ծաղկյա փիլոնի, ավագության կոչումի և լանջախաչի:

1978 թվականին Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, հիվանդության և առաջացած տարիքի պատճառով, անցել է հանգստյան:

1979 թվականի հունվարի 30-ին, երեքշաբթի օրը, ս. Գայանե վանքում կատարվել է հանգուցյալ տ. Մկրտիչ ավագ քահանայի վերջին օծումն ու թաղման կարգը՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի: Սրբազան հայրը իր հուզիչ և գեղեցիկ դամբանականով վեր է հանել հանգուցյալ տեր հոր նվիրյալ կյանքը, նախանձախնդրությունն ու եկեղեցասիրությունը՝ որպես կատարյալ օրինակ ներկայիս երիտասարդ հոգևորականներին:

Հանգիստ և խաղաղություն տ. Մկրտիչ ավագ քահանայի ոսկորներին:

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Սուրբ Ղևոնդյանց և Վարդանանց պատգամը 3

ՎԱՉԱԳԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում . 5

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 8

Որք զարդարեցին (Թարգմանչաց շարական. դաշնավորումը՝ Պսակ արքեպ. Թումայանի) 11

Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի հայոց ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության 150-ամյակը 13

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ—Աստվածաշնչական սուրբեր . . 15

Նշխարներ Որոգինեսի հայկական թարգմանություններից 21

Ա. ՀԱՍՏԻՏՅԱՆ—Սուրբ Եփրեմ Խուրին Ասորի 25

Ագաթանգեղոսի Պատմություն հայոց. Վարդապետություն սուրբ Գրիգորի . . . 35

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՎՐԱՄԻՏԻՍ—Այցելություն ի Հայաստան 49

Ժողով Բազելում օրթոդոքս եկեղեցիների աստվածաբանական ճեմարանների մասին 53

Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 59

Հանգիստ տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանի 63

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 5.02.1979 թ.: Ստորագրված է տպագրության 21.03.1979 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84 1/3, պատվեր 111

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1979 թ.